



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԶԱԼԵՎՈՎԻ, ՖԻՐՍՈՎ

1932 թվ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОНОВЕДЕНИЯ
АКАДЕМИИ НАУК
СССР

ԱՇԽԱՎԱՆԻ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԻՆԸ 55 ԿՈՊ.
цена 55 коп.

631.5
\$ - 65



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ
«ՀՅՈՒԽԱՎԱՆԻ ԿՈՎԿԱՆ»
ՈՂՈՏՈՎ-ԴՈԽ

631.5
Б-65
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОЗЕДЕНИЯ
Академии Наук
СССР

32-1
ГА 388

1932 թվի
ԱՃՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՃՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշնանացանն ու աշնանավարը գյուղատնտեսական արտադրության սկիզբն են: Աշնանային աշխատանքների հաջող կատարումից և նրանց վորակից զգալի չափով կախված են տնտեսավարման արդյունքները—հետեւյալ տարվա բներքատվությունն ու յեկամուտը:

Ավելին—յերբ աշնանացանի ժամանակ ցանքափոխությունն մըտցվի, յերբ աշխատանքն ավելի ճիշտ կազմակերպվի և խորհրդային ու կոլեկտիվ տնտեսություններում հողը նպատակահարմար ոգտագործվի—աշնանացանի հաջող կատարումը վճռական նշանակություն կունենա սոցիալիզմի կառուցման շրջակա պատմական հնգամյակի ամբողջ ժամանակաշրջանի համար:

Խորհրդային ու կոլեկտիվ տնտեսություններում առանց ցանքափոխությունների հնարավոր չե արմատավորել ազգոտեխնիկան և կուլտուրապես ոգտագործել հողը: Դեռ անցյալ տարի յերկրագործության ժողկում ընկած է Յակովլեվն այս առժիկ ասել ե, զոր՝

«Ազգոտեխնիկան—այդ նշանակում և ցանքափոխությունն: Մենք յերբեք չենք հրաժարվել ազգոտեխնիկայից, ինչպես մի այնպիսի միջոցից, վորով բարձրացնում ենք բերքը, պայքարում ենք մոլախոտերի դեմ, լավացնում ենք հողի կազմվածքը: Ցննության մասնագիտացումը պահանջանք է, վոր տվյալ ուղարկում մշակվի զինավոր կուտարքն, բայց դրանով չի վերանաւ ցանքափոխությութը»:

(Ընկած Յակովլեվի ճառը Հողժողկոմատի կոլեգիայի ընդլայնած նիստում, 1931 թվի սեպտեմբեր ամսին):

Կոլտնտեսությունների մասին ընկած է Յակովլեվն ասաց.—

«Մենք սովորեցինք կոլտնտեսությունների առավելություններն ոգտագործել՝ ցանքառարածություններն ավելացնելու համար, բայց գեռ չենք սովորել այդ առավելություններն ոգտագործել՝ բերքը բարձրացնելու համար: Մեր համատարած ցանքսերը դեռ շատ քիչ են նման իսկական համատարած ցանքսերի: Նրանք ավելի շատ գյուղացիական բաժան-բաժան ցանքսերի միացումն են: Բերքահավաքման ժամանակ, մանավանդ տնձեզներից հետո, փորձե-

ցեք անցնել վորակե կողմանտեսության դաշտով՝ և գրւը կկարդաք ամեն մի այդպիսի ցանքի պատմությունը: Վորպեսզի մեր ցանքատարածություններն իսկապես լինեն համատարած, իսկապես միասնական, հարկավոր և փոչնչացնել մենատանտեսի բարբարոսական տնտեսության հետքերը, հարկավոր և կանոնավոր գարել հոգը, հարկավոր և վերջինս մաքրել մոլախոտերի տասնյակ սերունդներից, անցնել ցանքափոխության, հարկավոր և, պարզ տասած, հոգի ռազմառուսական գրությունը փոխել կուլտուրական զրության:

Հյուսիսային Կովկասի խորհուտեսությունների և մանավանդ կոլտնտեսությունների մեծ մասը չկատարեց ընկ. Յակովլեավի այս կարբով գործույն ցուցմունքները, բավականաշափ ուշադրություն չդարձրեց հողի կանոնավոր ողտագործման հարցերին:

Յերբ տնտեսության միջ աշնանացանը մեծ տեղ է բռնում, ցանքափոխությունը կարելի յե սկսել միայն աշնանից: Ամենակոպիտ սըսալ կլինի, յիթե անցյալ տարիների նման այս տարի ևս ցանքափոխության հարցերը հետաձգվեն մինչև ձմեռ: Հետաձգելու դեպքում ցանքափոխության դործը կձգձգվի մի ամբողջ տարի:

Յերկըորդ, զոչ պահաս կարելոր խնդիրը, - վորը պետք ե լուցվի
մինչև աշնանացանի սկիզբը, - այդ՝ արտադրությունը կազմակերպելու
խնդիրն եւ Հարկավոր ե

Պողոսել, թե ինչ՝ հողամասեր պիտի մշակվեն լծկաններով կամ մեքենաներով:

Կազմակերպել դաշտային ճանապարհների սիստեմը.

Վորոշել թե գարնանը վճրտեղ և ինչ բույսեր պիտի ցանվեն
վորոշել բրիգադների հողամասերը և այլն:

Անցյալ տարի կոլտնտեսություններում աշնանացանը և աշնանավարն ընդհանրապես կատարվեցին առանց վորեկի վաղորոք մտածված պլանի: Ցանգում եյին այնպիսի հողամասեր, վորոնք պատահմանը աղատ եյին: Հողը հերկվում եր առանց հաշվի առնելու այն հանգամանքը, թե այդ հերկի վրա ինչ պիտի ցանվի: Մարդիկ և մեքենաները տեղափոխում եյին այստեղից այնտեղ—հաճախ ամենափոքրիկ հողամասերը և այլն: Ի՞նչ հետեւանք եր ստացվում այդպիսի անպլան աշխատանքից, արտադրության այդպիսի անկազմութերողությունից,—այն, վոր աշխատանքի արտադրողականությունն իջնում եր, ցանքն ու վարն ուշանում եյին և անխուսափելիորեն պահապում եր բերքատվությունը:

Աշնանացանի տեղերում գուշ այստեղ ու այստեղ կպատճելիք գարնանացան հասկավոր և շարքահերկ բույսերի և, ընդհակառակը, գարնանացանի տեղերում ևս քիչ չեյին աշնանային ցանքսերը: Յերական կողմանական ուշագրությունները, բավական ուշագրությունն չդարձնելու աշնանացանի կազմակերպման վրա, ցանքսերի այդպիսի խայտարգել տուժիամբ բարդացնում էին: Դրանով էակումը և բերքահպարքը: Հե

տեղանքը լինում եր աշխատանքի արտադրողականության անկումը, միջոցների ապարդյուն վատնում:

Մինույնը պետք է ասել նաև բրիգադային հողամասերի վերաբերյալ ինչպես հջում ե ընթերցողը, այս տարվա գարնանը կուտնահսությունների առաջ խնդիր զրվեց «Ամենուրեք լիկվիդացիայի յենքարեկել բրիգադ—բակերը, բոլոր կուտնահսություններում ունենալ արտադրական բրիգադներ»: Յեկ Ինչ. շատ կուտնահսություններ չկարողացան իր ժամանակին և ճիշտ կատարել այս դիրքեկտիվները և դա այն պատճառով, վոր սխալ եր կազմակերպված արտադրությունը, չեյին վորոշիվ բրիգադների հողամասերը:

Կոլտնտեսություններում ինչ պիտի անել, վոր արտադրական բրիգադները ճշտությամբ կազմակերպվեն: Դուք համառ հարիւմուն են:

Աշխատունակներին նպատակահարմար բաժանել բրիգադների վրա (և վոչ թե մեքենայաբար, ինչպես արդում եր շատ կոլտնտեսություններում):

Նախապես (մինչև բրիգադների կազմակերպումը) կանոնավոր կազմակերպել արտադրությունը և ճիշտ վորոշել բրիգադների հոգա-մասերը:

Այս տարի բրիգադների մեծամասնությունն ստիլված ե բերքը հավաքել այնպիսի հողամասերից, վորոնք ընդհանրապես ասած, անկանոն դասավորություն ունեն. հարյուր հեկտարանոց հողամասը վորպես հողաշինաբարված միավոր, վոչ միայն բաժանված ե մի քանի բրիգադների վրա, այլև այնտեղ մի քանի տեսակ կուլտուրաներ են ցանված. բրիգադներին հատկացված են բազմաթիվ մանր-մունր հողամասեր, վորոնք մեկ մեկուց 10 և ավելի հեկտար հեռու յեն գտնվում և նույնիսկ հաճախ իշար հետ կապված չեն ձանապարհներով. շատ բրիգադներ իրեց քանակով և արտադրության միջոցներով չեն համապատասխանում առտադրական առաջադրության և այլն:

Այս բոլորը եյապես դանդաղեցնում ե բրիգադի աշխատանքը, հնարավորություն չի տալիս ամբողջովին ողտագործելու սոցիալիստական խոշոր տնտեսության առավելությունները։ Աշխատանքի կամպանիայի ընթացքում վերջ տալ այս բոլոր պակասություններին, —ահա թե վորն ե բոլոր կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների (մեքենա-տրակտորային կայանների) ամենաանհետաճռեկի խնորոո:

Ամենակոպիտ սխալ կլինի, յեթե արտադրության և բրիգադա-
յին սիստեմի կազմակերպման այս բոլոր հարցերը հետաձգվեն մինչև
«ավելի ազատ ժամանակ»—ձմեռը (ինչպես արվում եք անցյալ տա-
րիներում):

Կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և ռայոնական կոլտնտեսային միությունների աշխատողները կարող են և պետք ե ժամանակ

գտնեն մինչև կտժանիայի սկիզբը մշակելու արտադրության կազմակերպման ամբողջ պլանը (համակերպելով դա աշնանացանի և աշնանավարի խնդիրներին) և կոլտնտեսականների հետ մանրամասն քննելու այդ պլանը՝ Միայն այս դեպքում կարելի յե զորահավաքել կոլտնտեսականների արտադրական ակտիվությունը, նրանց պայքարի հանել ցանքի և վարի քանակի և մանավանդ փորակի համ որ, բարձրացնել բրիգադների շահագրգովածությունը՝ արտադրական առաջարություններն արագությամբ կատարելու ասպարեզում:

Մեր յերկրամասը, — Հյուսիսային Կովկասը — 1932 թվականի աշնանացանի կազմանիայի ընթացքում պետք ե ցանե 4 միլիոն 750 հազար հացահատիկային բույսեր, հերկե 5 միլիոն հեկտար հող և, բացի դրանից, անցյալ տարվա հանդեպ գդալի չափով ավելացնի կերպությունների և արեվածաղկի ցանքերը: Վերոնշյալ քանակությունից խորհնտեսությունները պիտի ցանեն 750 հազար հեկտար, վարեն 1 միլիոն 400 հազար հեկտար: Մնացած 4 միլիոն հեկտար ցանքը և 4 միլիոն 300 հազար հեկտար վարը. պիտի կատարեն կոլտնտեսություններն ու մենատնտեսները: Մենատնտեսները կկարողանան կատարել պլանի միայն 10 տոկոսը, հետեւալես կոլտնտեսությունները պետք ե ցանեն վոչ պակաս, քան 3,5 միլիոն հեկտար և վարեն 4 միլիոն հեկտար: Անցյալ տարի աշնանը, նրանք ցանել եյին 3 միլիոն հեկ. և վարել 1.500 հազար հեկտար:

Կոլտնտեսություններն ու մեքենա-տրակտորային կայաններն այս խնդիրները կարող են հաջողությամբ իրագործել մի պայմանով — յեթե նրանք ճշտությամբ դասավորեն գյուղատնտեսական աշխատանքները: Աշնանացանի և աշնանավարի նախապատրաստության և անցկացման ամբողջ ժամանակամիջոցում քարշող ուժի վերաբերամբ լարված դրություն կլինի: Այս թե ինչու պետք ե ամենավճռական պայքար մղել աշխատանքների հերթականության, քարշող ուժի աննպատակահարմար ոդտագործման դեմ:

Հացարույսերի բերքահավաքման հենց սկզբից սկսվեցին կրկնը-վել անցյալ տարվա կոպիտ սխալները: Մասնավորապես Մորոզովան ույունի կոլտնտեսություններում 8 ուժանոց կալսիչի վրա մի հերթին աշխատում ե 60—65 մարդ: Միենույն ժամանակ քարշող ուժի մի զգալի մասը չի ոդտագործվում աշխատող ձեռների պակասության շընորհիվ: Այս նույն պատճառով հացը չի դիղվում կալատեղերում, ել չխոսենք ինուականի փոճոկման^{*)} մասին:

Հացը կալատեղերում դիղելու, կալսի և բերքահավաքման այլ աշ-

խատանքների ձգձգումը (այն ել միայն այն պատճառով, վոր կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների ղեկավարները չեն ուղում իր ժամանակին մտածել ույժերի և միջոցների դասավորության մասին), անխուսափելիորեն առաջ կրերի նաև ցանքի ձգձգում: Այդպիս յեղավանցյալ տարի, յերբ կոլտնտեսությունների մի զդալի մասն սկսեց ցանել այն մոմենտից հետո, յերբ, ըստ տեղական պայմանների, հարկավոր եր վերջացնել ցանքը: Ցեղ 10—20 որվա փոխարեն, ցանքը կատարվում եր 2—3 ամսվա ընթացքում:

Բացի արտադրության վատ կաղմակերպումից, ուժերի ու միջոցների անբավարար ոգտագործման սովորական պատճառն են հանդիսանում աշխատանքը, մանավանդ գործավարձի կաղմակերպման թերությունները: Կալսիչի վրա աշխատող կոլտնտեսականներին հարց եր արվում, թե արդյոք նրանք կարող են կրծատել աշխատողների թիվը, յեթե նրանց ամբողջ խմբի համար վորոշ, կայուն քանակով աշխարեր տրվեն: Ցեղ ինչ եք կարծում, կոլտնտեսականները գտան իրենց միջից 10 մարդ, վորոնց կարելի յեր ուղարկել ուրիշ աշխատանքների, առանց մազաչափ վնաս հասցնելու գործին:

Կոլտնտեսություններն ու մեքենա-տրակտորային կայանները պետք ն ճիշտ կաղմակերպին աշխատանքը, ճիշտ դասավորեն մարդկանց, արտադրական առաջադրությունները հասցնեն մինչև մեքենա, գործիք, սայլ և յուրաքանչյուր կոլտնտեսականին: Նրանք պետք ե լավ կիրառեն գործավարձը, վերացնեն դիմազրկությունը և հավասարանքը:

Այս տարի բոլորովին չպիտի թաւյլատրվեն այնպիսի սխալներ, ինչպիսին եյին՝ գործի պատասխանատվությունը մինչև յուրաքանչյուր կոլտնտեսականին չհասցնելը: Աշխարերի «հավասար» բաշխումն, անկախ աշխատանքի քանակից և վրակից, բաշխագների անվերջ տեղափոխությունը մի աշխատանքից մյուսը — մի յերեվույթ, վոր չգիտես ինչով ե արդարանում:

Կուսակցության և կառավարության վերջին վորոշումները ճշգրիտ լուծում են տալիս այն հարցերին, թե ինչպիս, ինչ միջոցներով պիտի բարեկավել խորհանտեսությունների և ՄՏԿ-ների աշխատանքը՝ կոլտնտեսությունների կաղմակերպչական տնտեսական ամրապնդման գործում:

Աշնանացանի և աշնանավարի հաջողությունն ապահովելու համար պետք ե՝

Ճշտությամբ կիրառել այդ վորոշումները:

Աշխատանքի գործնական հարցերը լուծելիս՝ հենվել խորհանտեսությունների ու ՄՏԿ-ների բանվորների ու կոլտնտեսականների ամենաակտիվ մասնակցության վրա:

*) Խոզան կոչվում են հացարույսերի հնձից հետո մնացած, կտրված ցողունները կամ հնձած ու գեռ չվարած արտը: Խոզանը փոճոկել նշանակում ե հնձելուց հետո դաշտը թեթեկավի վարել (ծան. թ.-Հ. Մ.):

Ամենավճռական պայքարը մղել դեռևս վերջնականորեն չջախջախսված կուլակության մեացորդների, մի քանի հետամնաց կոլտնտեսականների մանր-սեփականատիրական տրամադրությունների, ոպորտունիստական ինքնահոսի, աշխատանքների «հերթականության» դեմ։ Ծագալի մասսայական-քաղաքական աշխատանքը և վերջնի հիմունքով—սոցմբցումն ու հարգածայնությունը։

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ—ԲԵՐՔԱԾՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐ

Հացահատիկային խորհանտեսությունները հակայական դեր են խաղացել գյուղացիական մանրագույն, ցաք ու ցրիվ անտեսությունների վերակառուցման—կոլեկտիվացման գործում։ Նրանք դարձել են խոշոր անտեսության ցայտուն որինակներ, վորոնց հետեւ են կոլտնտեսություն մտնող գյուղացիները։

Գրավելով սակավ ոգտավետ, խոպան և մոլախոտերով ծածկված հողամասեր, հացահատիկային խորհանտեսությունները մեծամեծ արդյունքների հասան գյուղատնտեսական աշխատանքների մեքենայցման գործում։ Նրանք այդպիսի հողամասերից ավելի բարձր բերք են ստանում, քան լավագույն հողեր մշակող հարեւն կոլտնտեսությունները։

Առաջավոր տեխնիկայով զինված հացահատիկային խորհանտեսությունները կենդանի որինակներ են ցույց տալիս կոլտնտեսություններին, թե ինչպես պետք է սոցիալիստորեն կազմակերպել արտադրությունը, ինչպես պետք է գյուղատնտեսության մեջ կիրառել մեքենայական բարձր տեխնիկան և ժամանակից ագրոնոմիայի բոլոր նվաճումները։

Մեր կուսակցությունը, չնայելով աջ ոպորտունիստների «մարդաբեություններին», անհաշտորեն պայքարելով նրանց դեմ, ինչպես նաև Զայտանովի ու Կոնդրատովի վնասարարական իմբրակի դեմ,—վիթխարի հաջողություններ ձեռք բերեց խորհանտեսային շինարարության գործում։

Խորհանտեսությունների արագ և հաջող զարդացման շնորհիվ Խորհրդային կառավարությունը կարողացավ 1931—32 թվականից սկսած՝ զգալի չափով կրծատել կոլտնտեսային սեկտորի հացամթերությունների պլանը, միևնույն ժամանակ վերջինս ավելացնել խորհանտեսությունների հաշվին։ Կոլտնտեսություններն իրավունք ունեն կոլտնտեսային առեսրի կարգով վաճառել հացի մասցած ավելցուկները։ Այսպիսով խորհանտեսությունների ուժեղ զարգացման շնորհիվ, կոլտնտեսություններն ավելի և մեծ հնարավորություն ստացան զորա-

հավաքելու կոլտնտեսային լայն մասսաների արտազրական ակտիվությունն ու ինքնագործունեյությունը և դրանք ոգտագործելու ցանքերի լայնացման, բերքի բարձրացման, կորստների դեմ վճռականորեն պայքարելու համար։

Սակայն հացահատիկային խորհանտեսությունները, ինչպես և կոլտնտեսությունները, դեռ ևս չեն ոգտագործել իրենց բոլոր հնարավորությունները՝ բերքատվությունը բարձրացնելու համար։ Հողդողկոմատի կոլեգիայի ընդլայնած նիստում լինել Յակովիկը շեշտում եր, վոր-

«Հացահատիկային խորհանտեսություններում առայժմ թույլ են ոգտագործվում բարձր աեխնիկայի առավելություններն և շահավետությունները իրենց զարգացման առաջին շրջանում հացահատիկային խորհանտեսությունները չերին կարող մի անդամից լուծել թե նոր աեխնիկայի և թե ագրոնոմիայի խնդիրները։ Նրանք առաջին հերթին լուծում եին կուսակցության առաջաղաթած խնդիրը—խոշոր յերկագործության մեջ կիրառել նոր տեխնիկան։ Միայն այս խնդիրը լուծումից հետո յեր, վոր հացահատիկային խորհանտեսությունների առջև բացվեց գյուղատնտեսական գիտությունը լայնորեն կիրառելու ճանապարհը։

Հացահատիկային խորհանտեսությունների աշխատանքի բնույթագիծը տալով, լինել Յակովիկին ասաց։—

«Հանձնինս հացահատիկային խորհանտեսությունների, մենք կոլտնտեսություններին ցույց կտանք վեզ միայն այն որինակը, թե ինչպես նոր տեխնիկայի հիմանեվ բոլշևիկները խոչըր տնտեսություն են կառուցում, այլ յեկ այն որինակը, թե ինչպես խոշոր, մեխնայացված տնտեսության հիմանեվով բոլշևիկները զյուղատնտեսության մեջ կիրառում են ժամանակակից ազգանունները։

Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր հացահատիկային խորհանտեսությունները նույնպիսի հաջողությամբ կլուծեն բերքատվության բարձրացման խնդիրը, ինչպիսի հաջողությամբ կարողացան կիրառել նորագույն տեխնիկան ահազին հողատարածությունների վրա։ Կոլտնտեսությունները պետք է ոգտագործեն հացահատիկային խորհանտեսությունների նվաճումները, հարմարեցնելով այդ իրենց տեղական պայմաններին։

Ագրոնոմիկական գիտությանը տիրապետելու ասպարեզում, խորհանտեսությունների առջև դրված խնդիրների արագ իրականացմանը հաճախ արգելվ են դառնում այն անառողջ փոխ-հարաբերությունները, վոր գոյություն ունեն խորհանտեսությունների և կոլտնտեսությունների միջև։

Դասակարգային թշնամու պրէները հաճախ ոգտվելով աջ-ոպորտունիստական ղեկավարների կարճատեսությամբ, կոլտնտեսականներին արամադրում են խորհանտեսությունների դեմ, կոլտնտեսության շահերը հակազդում են խորհանտեսության շահերին, խանգարում են արտագնացությունը դեպի խորհանտեսությունները։ Մյուս կողմից

քիչ չեն և այն գեղքերը, յերբ խորհտնտեսությունների դեկավարները, չեարողանալով զեկավարել նոր ձեռվ, ուղիղ փոխ հարաբերություններ ստեղծել կոլտնտեսությունների հետ, արտադրական փոխադրամ ողնության գծով, համապատասխան պայմաններ ստեղծել արտադրաց կոլտնտեսականների համար,—փորձում են այդ անձարակությունը գցել կոլտնտեսությունների վրա, փորձում են գործն այնպես սարքել, վոր ուսունական ու տեղական կազմակերպությունները կոլտնտեսություններին հարկադրեն ոգնել խորհտնտեսություններին:

Կասկածից զուրս ե, վոր խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների ճիշտ փոխ հարաբերությունների այդպիսի խեղաթյուրութիւնները ձեռնառ յին միայն դասակարգային թշնամուն և այդ խեղաթյուրութիւնների դեմ պետք և ամենավճռական պայքար մղել:

ՄՏԿ—ՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՇԽԱՏԱՑՈՒՄԻ ԿԱՄՊԱՆԻԱՑՈՒՄ

Փորձը ցույց ե տվել, վոր տեխնիկայի նորագույն նվաճումների հիմունքով արտադրությունը կազմակերպելու համար, բացի մեքենաների և սարքավորանքի վրա հակայական միջոցներ ծախսելու, հարկավոր ե նաև ունենալ բավականաչափ պատրաստված կադրեր: Այս բանը միանգանձին վեր ե առանձին կոլտնտեսությունների ույժից: Այս թե ինչու կուսակցության XV համագումարը, մատնանշելով այն ժամանակակից միակ ՄՏԿ-ի—Շենքենկոյի ՄՏԿ-ի զրական արդյունքները, տվեց գերեկտիվ՝ լայնորեն ծավալել մեքենա տրակտորային կայանների շինարարությունն ի հաշիվ պետական միջոցների, ոգտագործելով նաև բնակչության միջոցները: ՄՏԿ-ները պայմանագրերի հիման վրա պետք սպասարկելին կոլտնտեսություններին և մենատնտես գյուղացիներին:

Այժմ մեքենա—տրակտորային կայանները խորհտնտեսությունների հետ միասին դարձել են գյուղատնտեսության տեխնիկական վերադիման հիմնական լծակներ: Տրակտորաշինարարության և գյուղմեքենաշինարարության հիմունքով ընօրինական Միության բանվոր դասակարգը հաստատուեն ու վսակ կերպով առաջ ե տանում իր զինակցի, —աշխատավոր զյուղացիության տեխնիկական վերագինման գործք:

(ՍՏԱԼԻՆ)

Յեթե խորհրդային անտեսությունները կոլտնտեսականներին ցայտուն որինակներ են ցույց տալիս, թե ինչպես պետք ե գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիմունքով սոցիալիստորեն կազմակերպել աշխատանքը, ապա մեքենա—տրակտորային կայանները պարտավոր են արմատավորել այդ տեխնիկան և արտադրության

ձիշտ կազմակերպման որինակներ իրենց սպասարկած կոլտնտեսություններում: Այսպիսով մեքենա—տրակտորային կայանները գաւառում են կոլտնտեսությունների կազմակերպչական-անտեսական ամրապնդման հիմնական լծակներ: Սա այն միակ ուղիղ ճենապարհն է, վորոն սուուգված ե կոլտնտեսությունների և կոլտնտեսականների փորձով:

Մեքենա—տրակտորային կայաններով սպասարկվող կոլտնտեսությունները հենց այժմ ել զգալի տնտեսական առավելություններ ունեն, համեմատած այն կոլտնտեսությունների հետ, վորոնք չեն սպասարկվում ՄՏԿ-ներով: Առաջիններն ավելի արագ և լավ են մշակում մեծ ցանքատարածությունները: Նրանց մոտ ավելի բարձր և աշխատանքի արագությունը, բերքատվությունն ու յեկամուտը, ապրանքայնությունը և այլն:

Որինակ վերցնենք թեկուղ Կորենովսկու մեքենա—տրակտորային կայանը: Այս կայանի աշխատողները մոտավորապես մեկ տարվա ընթացքում կարողացան միանգամայն բարելավել իրենց սպասարկած կոլտնտեսությունների աշխատանքը: Շատերը ճիշում են այն հսկայական կորստները, վոր Կորենովսկու կոլտնտեսություններն ունեցան 1930 թվին. շատերը ճիշում են, թե այդ կոլտնտեսություններն ինչպես խայտառակ կերպով հետ ելին մնում անտեսա-քաղաքական կամպանիաներից: 1931 թվականին Կորենովսկու ՄՏԿ-նը կարողացավ վերջ տալ այդ հետամնացության, իսկ 1932 թվականին նա այդ կոլտնտեսությունները, տնտեսական կամպանիաները հաջողությամբ կատարելու և աշխատանքի վորակի տեսակետից, գուրս բերեց առաջավոր կոլտնտեսությունների շարքը: Կորենովսկու ՄՏԿ-նը միակը չեն ՄՏԿ-ների թիվը տասնյակների յե հասնում:

Սակայն, միևնույն ժամանակ կան նաև այնպիսի մեքենա—տրակտորային կայաններ, վորոնք փոխանակ գտնուալու կոլտնտեսությունների իսկական զեկավարներ, փոխանակ գլխավորելու աշխատանքի ճիշտ կազմակերպումը, նրա հաշվառքը, յեկամուտների ճիշտ բաշխումը, գեպի հասարակական աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի գաստիարակումը, ագրո-միջոցառումների կիրառումը, —սահմանափակվում են միմիայն վարձու կայանների գերով:

Մեր ասածին որինակ կարող ե ծառայել Անապայի ուայոնի «Կուրա» կոչված մեքենա—տրակտորային կայանը: Նա կոլտնտեսությունների հողերը վարեց այնպես, վոր կարիք յեղավ նորից վարելու, իսկ կոլտնտեսություններից գանձեց յերկու անգամ վարելու արժեքը... Մայվանսկու ուայոնի ՄՏԿ-նի վերատեսչությունը անցյալ տարի Լենինի անվան կոլտնտեսությունից գանձեց ավելորդ 40 հազար ոուրլի և այդպիսով վատացրեց նրա գինանսական գրությունը: Մի քանի մեքենա—տրակտորային կայանները շարունակում են վարչարարության

թյունը կոլանտեսությունների վերաբերմամբ, առանց վերահսկողության անորինում են կոլանտեսային գույքը, վորի փոխարեն չեն տալիս վորեե հատուցում:

ՄՏԿ-ների վերատեսչությունների այդ սխալ գործունեյությունը վոչ մի գեպօւմ չի կարող նպաստել կոլանտեսությունների հետ ունեցած փոխհարաբերության: Այդպիսի գործունեյությունը նսեսացնում ե ՄՏԿ-ների, վորպես կազմակերպիչների հեղինակությունը կոլտնտեսականների աշքում:

Աշխատանքի կազմակերպումը ղեկավարելու տեսակետից ևս ըոլոր ՄՏԿ-ները չեն կանգնած պատշաճ բարձրության վրա: Ահա ձեզ մի որինակ: Ստարո-Կուբանսկի մեքենա-տրակտորային կայանի գյուղատնտեսն առաջարկել եր «Աղատության Արշալույս» (Զարյա սվարովի) կոլտնտեսությանը՝ յուրաքանչյուր 10 ծխին նշանակել մի տասնապետ, վոր ոգնե բրիգադիրին՝ կոլանտեսականներին աշխատանքի ուղարկելու: Սա նշանակում ե բոլորովին չգիտենալ կոլանտեսությունների աշխատանքի պայմաններն ու բնույթը:

Մեր բերած պտկասությունների շնորհիվ, յերկրամասի բոլոր 216 մեքենա-տրակտորային կայանները չեն կարողանում դառնալ կոլտնտեսությունների իսկական, գործնական ղեկավարները:

Վերացնել-այդ բոլոր պակասությունները, վորոնք հանդիսանում են կոլանտեսությունների և ՄՏԿ-ների անառողջ փոխհարաբերությունների պատճառը, — ահա տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների ամենորյա անելիքը: Աշնանացանի ժամանակ կոլտնտեսություններն ու ՄՏԿ-ներն անթերի կաշխատեն սիայն այն դեպքում, յերբ առանց բացառության բոլոր ՄՏԿ-ները, — վորոնք սպասարկում են կոլեկտիվացիած բնակչության 80 տոկոսին, — դառնան կոլտնտեսությունների իսկական ղեկավարներ:

Բացի այդ, պետք ե բոլորովին վերջ տալ այն յերկույթներին, յերբ մեքենա-տրակտորային կայանների վերատեսչություններն իրենց անձարակ ղեկավարությամբ, կամ իրենց պլանն անժամանակ տեղ հասցնելու շնորհիվ, թուլացնում են թե բրիգադների և թե ամբողջ կոլտնտեսությունների ինքնազործունեյությունը: Բերքահավաքման կամպանիայի ընթացքում համարյա ամենուրեք այսպիսի դրություններ տիրում՝ կոլտնտեսությունների վարչությունները մինչև աշխատանքի միջը պլաններ և ցուցանունքներ ենին սպասում ՄՏԿ-ներից, զլուխ չեյին ցավեցնում ավելի լավ նախապատրաստվելու, բրիգադներում ույժերը ճիշտ դասավորելու համար: Աշնանացանի ընթացքում մեքենա-տրակտորային կայանների ավելորդ խնամակալությունը կարող ե առաջ բերել սխաներ, վորոնք թանկ կնատեն թե կոլտնտեսությունների և թե ՄՏԿ-ների վրա:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԵՐԸ

Կոնկրետ ղեկավարության մասին ընկ. Ստալինի պատմական ցուցմունքը նույն չափով վերաբերում ե գյուղի կուսակցական խորհրդային կազմակերպություններին, ինչպես և տնտեսավարներին՝ ՄՏԿ ների ու կոլտնտեսությունների ղեկավարներին: Գյուղի կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները պետք ե այդ ցուցմունքի համապատասխան ղեկավարեն աշնանացանի կամպանիայի աշխատանքները.

Կոլտնտեսության կուսակցական բջիջի և բրիգադի կուսակմակի համար չի կարող լինել մի ավելի կարեոր խնդիր, քան կոլտնտեսության կամ բրիգադի առջև դրված խնդիրը՝ հաջողությամբ իրագործել տնտեսա-քաղաքական կամպանիաները և մանավանդ աշնանացանը: Աշնանացանը և աշնանավարը ճիշտ և ժամանակին ղեկավարելու համար պետք ե վոչ միայն գիտենալ, թե ինչպես ե ընթանում աշխատանքն առանձին հողամասերում, այլ և գիտենալ պակասությունների պատճառը, գիտենալ թե ինչպես պետք ե վերացնել այդ պակասությունները, ովք ե սրանց իսկական մեղավորը: Դրա համար աշխատանքների ընթացքում պետք ե ճիշտ դասավորվեն կուսակցականներին, կոմյերիտականներին և ակտիվ անկուսակցականներին, այնպես, վորպեսզի նրանք լինեն աշխատանքի բոլոր կարեոր ճակատամասերում:

Ինչու կրապոտկինի, Տիմաշեյան, Պավլովյան ռայոնները, Կաբարդա-Բալկարական մարզն առաջավորների դերումն են. վորովհետեւ այդ ռայոնների կուսակցական կազմակերպությունները գլխավորույն կոլտնտեսությունների ու բրիգադների արտադրական ակտիվությունը, վորովհետեւ կուսակցականները հարվածային աշխատանքի փայլուն որինակներ են ցույց տալիս: Վորպես որինակ, վերցնենք թե կորենովյան ռայոնի «Հոկտեմբեր» կոլտնտեսությունը: Շնորհիվ վերջնիս կուսակցական բջիջի ջանքերի, բոլոր կոմունիստները մասնակցում են արտադրական աշխատանքներին: Գարնանացանի ժամանակ Կաբարդա-Բալկարական սարգի բոլոր կոմունիստները գտնվում ենին դաշտում, զբաղված ելին արտադրական աշխատանքներով: Բջիջի քարտուղարը, գտնվելով դաշտերում, ոգնելով բրիգադիրին ույժերը դասավորելիս, կոլտնտեսականներին խելացի որինակներով բացատրում եր կուսակցության և խորհրդային իշխանության կարևորագույն վորոշումները:

Աշնանացանի ժամանակաշրջանում կպահանջմի աշխատանքի ավելի մեծ լարվածություն, ույժերի ու միջոցների ավելի հմատ զասավորություն: Աշնանացանն ու աշնանավարը հաջողությամբ անցկաց-

նելու համար պետք ե մանրակրկիտ նախապատրաստություն տեսնել սանավանդ իր ժամանակին ավարտել բերքահավաքման աշխատանքները, ողտագործել վարելու բոլոր հնարավորություններն՝ առանց սպասելու ցանքի սկսվելուն կամ վերջանալուն:

Կուսակցական կազմակերպությունը պետք է դիտենա, թե ինչ պես ե գնում աշխատանքը բոլոր հողամասերում, նա պետք ե հստությամբ առաջ մդի հետամնացների աշխատանքը՝ առանց խանգարելու առաջավորներին: Պետք ե վճռականապես հրաժարվել գարնանը կիրառված «սիստեմից», յերբ հայտնի չե ինչ հիման վրա բրիգագները տեղափոխվում եյին մի հողամաից սյուսը: Այդպիսի կարգադրություններից պետք ե խուսափել, ում կողմից ել վոր լինեն նրանք,—թեկուղ և կուտանտեսությունների վարչությունների կողմից: Մեքենա-տրակտորային կայանները և կոլտնտեսությունների վարչությունները, հիմնվելով արտադրական հողամասի աշխատանքային պլանի վրա, հաշվի առնելով բրիգագների ույժերն ու միջոցները, պետք ճշգրիտ և անմիջական առաջադրություններ տան նրանց ամբողջ ժամանակաշրջանի համար: Պետք ե աշխատել, վոր բրիգագները ի վեճակի լինեն կատարելու այդ առաջադրությունները, յետ մնացածներն ոգնություն ստանան:

Գյուղխորհների առաջ գրված ե մի պատասխանատու խնդիր, — զեկավարել կառավարության վորոշումների կիրառումը և ամեն կերպ ոժանդակել կոլտնտեսությունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման: Գյուղխորհները պիտի հետեւն, վոր կոլտնտեսություններն իրենց աշխատանքների ընթացքում ճշգրիտ կատարեն կուսակցության ու հառավարության բոլոր դիրեկտիվները, վոր կոլտնտեսությունների վարչությունները չխախտեն կոլտնտեսականների իրավունքները, մասսայական բացատրական աշխատանքը չփոխարինեն չոր ու ցամաք վարչարարությամբ: Գյուղխորհները պետք ե կոլտնտեսություններից պահանջնեն առանց այլ և այլության կատարել կառավարության կողմից ընդունված պարտադիր ազգորմիջոցառումները: Զկատարվելու դեպքում, նրանք պետք ե ռայինը բաժին կիրառեն կից գյուղատնտեսական տեսչությունների միջոցով նյութական պատասխանատվության յենթարկեն մեղավորներին: Այդպես պիտի վարվել նրանց հետ, վորոնք խախտում են աշնանացանի և աշնանավարի կանոնները: Գյուղխորհները պիտի հետեւն, ոգնեն կոլտնտեսություններին, վոր պեսզի սրանց վարչություններն իր ժամանակին պատրաստվեն ցանքին, մշակեն աշխատանքների պլաններ, վերջիններս քննեն կոլտնտեսականների մասնակցությամբ, իր ժամանակին վորոշեն, թե վոր կոլտնտեսականը վորտեղ պիտի աշխատի, արտադրական առաջադրությունները հասցնեն մինչև առանձին կոլտնտեսականը և այլն:

Աշնանացանի այս կարևորագույն սիջոցառումները պետք ե լինեն գյուղխորհների ուշադրության կենտրոնում—թե ցանքի նախապատրաստության և թե անցկացման ժամանակի: Գյուղխորհները պետք ե հետեւն, վորպեսզի ճշտությամբ կիրառվի գործավարձը, աշխատանքի ճիշտ հաշվառք կատարվի և այլն:

Կոմյերիտական բջիջներն աշնանացանի ընթացքում պետք ե ցույց տան հարվածային ախատանքի որինակներ, նրանք պետք ե հմուտ կերպով կազմակերպեն ամբողջ յերիտասարդության՝ արտադրական խնդիրների իրագործման համար: Պետք ե միանգամայն հրաժարվել հարցերը «ընդհանրապես» քննելուց: Կոմյերիտականները պետք ե պարզեն ցանքի նախապատրաստության թերությունները, առանձին կոլտնտեսականների թերացումները, վորոնք (կոլտնտեսականները) նըշանակված են լծկաններին խնամելու հաժար, ույժերի ու միջոցների սխալ դասավորությունը,—և պետք ե այդպես հայտնաբերեն այդ թերությունները, վոր դրանք ժամանակին վերացվեն: Միենայն ժամանակ, ամբողջ կոմյերիտական բջիջը և յուրաքանչյուր կոմյերիտական պետք ե դառնան լծկանի կանոնավոր խնամքի, պահպանության, ոդապարզման, բոլոր ազգո-միջոցառումների կիրառման նախաձեռնողներ:

Այս բոլոր խնդիրներն իրագործելու համար յուրաքանչյուր կոմյերիտական պետք ե լավ գիտենա ագրո-միջոցառումները, վորոնք պարտադրաբար պիտի կիրառվեն կոլտնտեսություններում:

ՍԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական խոշոր տնտեսության մեջ արտադրական խնդիրները հաջողությամբ լուծվում են միայն այն դեպքում, յերբ ամեն մի աշխատող կոլտնտեսական, կոլտնտեսության լավ գիտե և հասկանում ե այդ խնդիրները, սրանց իրագործման կարգն ու ձեռքը, ինչպես և աշխատանքի ժամանակ իր տեղը, իրավունքներն ու պարտականությունները:

Սա ամբողջովին հաստատվում ե գարնանացանի ու քաղանի ժամանակ առաջագոր կոլտնտեսությունների ձեռք բերած փորձով և գործնական աշխատանքով: Բրիգագիրների միջույնական հավաքի ժամանակ կորենովվայն ռայոնի «Հոկտեմբեր» կոլտնտեսության բրիգագիր ընկ. Մոնտիկովը պատմում էր, թե ինչպես իր բրիգագում և ապա ամբողջ կոլտնտեսության մեջ այլևս ժամանակ չեն կորցնում կոլտնտեսականներին հավաքելու, աշխատանքի ուղարկելու վրա: Գիտենալով թե վորտեղ և ինչ պիտի անեն ամբողջ ժամանակվա ընթացքում, ում հետ (վոր խմբակում) պիտի աշխատեն, — կոլտնտեսականներն իրենք եյին ձգտում արագությամբ կատարելու իրենց հանձնարարված աշխատանքը:

Յեկ ընկ. Մոնտիկովը միանգամայն ճիշտ մատնանշեց, վոր կոլտնտեսականներին աւեն որ հավաքելու և աշխատանքի ուղարկելու սիստեմը շատ ե ջղայնացնում նրանց, իսկ այսպիսի սիստեմի դեպքում նրանք չգիտեն վոչ իրենց աշխատանքի տեղը, վոչ ել նրա վերջը, ուստի և չեն կարողանում լավ ոդտագործել իրենց ժամանակը:

Ընկ. Մոնտիկովը կարողացավ աշխատողներին ճիշտ դասավորել և յուրաքանչյուր կոլտնտեսականին իրազեկ անել իր պարտականություններին՝ շնորհիվ լավ դրված մասսայական աշխատանքի: Ընկ. Մոնտիկովից և յերկրամասի մյուս առաջավոր բրիգաներից շատ բան կարելի յեսովորել մասսայական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար:

Մասսայական աշխատանքի մեջ ամենազլվածորը կոնկրետը լրուննեն է: Նույն ընկ. Մոնտիկովը ընդհանուր, անարժեք դատողությունների փոխարեն, բրիգադի ժողովներում և արտադրական խորհրդակցություններում դուռմ և ամրող կոլտնտեսության և մանավանդ իր բրիգադի դորձնական հարցերը, վորոնք վաղորոք մշակված են լինում թե նրա և թե բրիգադի ակտիվիտաների կողմից: Որինակ վերցնենք աշխատանքային սլանի և բրիգադում կոլտնտեսականների դասավորության (հասկավոր կուտուրաների բերքահավաքման համար) հարցը: Ընկ. Մոնտիկովն աշխատել ե բերքահավաքից ավելի քան յերեք շաբաթ առաջ կարծիքների փոխանակությունունենալ իր ակտիվիտաների հետ, վորոշել, թե ինչ հերթով պիտի հնձվեն դաշտերը, ինչ նորմաներ պիտի սահմանել, ինչպես դասավորել ուժեքը բերքահավաքման (հնձելու, խուրծ կապելու, դաշտերում և կալերում դիզելու, կալսի) ժամանակի, ինչ խմբակներ պիտի աշխատեն: Այս բոլոր հարցերի մասին ընկ: Մոնտիկովը զեկուցում եր հավաքին, տարով իր բրիգադի ակտիվի մշակված կարծիքները:

Առաջավոր բրիգադների մասսայական աշխատանքի փորձ աշխատանի ժամանակ պետք ե դառնա յերկրամասի բոլոր բրիգադների սեփականությունը: Աշնանացանի և աշնանագարի հաջողությունը կապահովի միայն այնպիսի մասսայական աշխատանքով, վորը հնարավորություն ե տալիս բրիգադի ակտիվիտաներին և բոլոր կոլտնտեսականներին՝ մասնակցել գործնական հարցերի լուծման: Ժաղովներում չպետք ե դնել այնպիսի հարցեր, վորոնք նախապես չեն մշակված ակտիվի կողմից, հակառակ դեպքում կոլտնտեսականներին չեն ել հետաքրքրի այդպիսի ժողովները և նրանք վոչ մի արդյունք չեն տա:

Բրիգադում ժավալելով մասսայական աշխատանքը, չի կարելի սահմանափակվել միայն տնտեսավարման գործնական հարցերի քըննությամբ: Հարկավոր ե միաժամանակ կատարել նաև մասսայականարացադրական աշխատանք, —պարզաբանել կուսակցության ու կառա-

վարության ամենազլվածորը դիրեկտիվները: Վերջիններիս քննությունը նույնպես պիտի կը կոնկրետ բնույթ, այսինքն՝ վոչ թե ընդհանրապես պարզաբանել, այլ աշխատել վոր յուրաքանչյուր կոլտնտեսական լավ հասկանա, թե այս կամ այն դիրեկտիվը կամ որենքը վորչափ ե վերաբերվում տվյալ կոլտնտեսության և դրանից ինչ գործնական յեղակացություններ պիտի հանել:

Սովորաբար մի քանի կոլտնտեսականներ չեն մասնակցում ժողովներին, և աններելի սխալ կլինի, յեթե այդպիսիները մոռացության տրվեն:

Գարնանացանի փորձը ցույց տվեց, վոր տեղում մասսայական աշխատանքով չեյին ընդգրկված բոլոր կոլտնտեսականները, տեղում նույնչափ առաջավոր բրիգադներում չգիտեյին վոչ կուսակցության ու կառավարության գիւսավոր վորոշումների և վոչ ել կոլտնտեսության ուշաների մասին: Մրանից գգալի չափով պակասում եր կոլտնտեսականների ակտիվությունը. շատ կոլտնտեսականներ, յերբ ծավալվում եր քաղհանը, վոչինչ չգիտեյին աշխատանքների կարգի և ձեռքերի մասին, ինչպես և գործալարձի կիրառման մասին և այլն: Ահա թե ինչու պետք ե բացի բրիգադային արտադրական խորհրդակցություններից և ժողովներից, նաև անհատական լայն բացատրական աշխատանք կատարել խմբակներում:

Կուսիմբակները և կոմյերիտական բջիջները պարտավոր են այս աշխատանքն ամբողջովին վերցնել իրենց վրա, ոգտագործել բրիգադում յեղած կոմունիտաներին, կոմյերիտականներին և անկուսակցական ակտիվիտաներին, ամեն որ ազատ ժամերին, զրույցների, լրագրերի ու գրքերի ընթերցանության միջոցով բացատրական աշխատանք կատարել կոլտնտեսականների մեջ՝ աշխատանքի նորմաների, գործալարձի, աշխորերի մասին և այլն:

ՍՈՑՄՐՑՈՒՄ ՅԵԿ ՀԱՐՎԱԾԱՅԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Գարնանացանի ժամանակ 250 բրիգադների միջև սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը տվին մինչ այդ չտեսնված աշխատանքի բարձր արտազրողականություն, վորակ, կոլտնտեսականների կողմից սոցիալիստական վերաբերմունք գեպի աշխատանքը: Սոցիալիստական մրցման գործնական կիրառմը մի ավելորդ անդամ հաստատեց ընկ Ստալինի խոսքերը՝ կուսակցության 16-րդ համագումարում:

«Մըցման մեջ ամենակարենորն այն ե, վոր նա արմատական հեղաշրջում և մացնում աշխատանքի վրա յեղած հայացքներում, զորովհետեղ նա աշխատանքն անհանո, ծանր բեռ լինելուց զորպիսին նա համարվում եր առաջ՝ կիրածում պատվի, փառքի, առաքինության գործիք:»

Ծնորհիվ իսկական սոցմրցման և հարվածայնության ծավալ-
ման, 250 բրիգադները կարողացան իրենց բոլոր կոլտնտեսականնե-
րին ակտիվ մասնակից գարձնել բոլոր գործնական, անտեսական-ար-
տազրական հարցերի քննության և դրանով ապահովել աշխատանքի
լավագույն դրվագը, նրա լավագույն կազմակերպումը: Յերկրամասի
250 մրցող բրիգադների փորձը տարածվեց յուրաքանչյուր ռայոնների
տասնյակ բրիգադների միջև: Կոլտնտեսությունների մյուս բրիգադ-
ներն ընդուրինակում եյին մրցողների փորձը՝ կամպանիաների լավա-
գույն նախատրաստության, ույժերի ու միջոցների նպատակա-
հարմար դասավորման և աշխատանքի ավելի լավ կազմակերպման
գործում:

Որվա ամենահետաձգելի խնդիրներից մեկն ե՝ բերքահավաք-
ման, առավել ևս աշնանացանի կածպանիայի ընթացքում սոցիալիս-
տական մրցությամբ ընդգրկել կոլտնտեսությունների բոլոր բրիգադ-
ներին։ Այսպիսով հնարավոր կլինի «արմատական հեղաշրջում
մտցնել» աշխատանքի վերաբերմամբ բոլոր կոլտնտեսականների հա-
յացքների մեջ և դրանով ապահովել աշնանացանի ու աշնանավարի
բոլցիկիլյան թափը։ Այսպիսով, վերջապես, հնարավոր կլինի կայուն
հիմք դնել այս պայքարին, վոր մենք պիտի մղենք աշխատանքի
բարձր վորակի, լավագույն բերքի համար՝ սոցիալիզմի կառուցման
շրջամայակի առաջին և հետագա տարիներում։

Սիսայն բրիգադների միջև սոցիալիստական մրցումը ծավալելով հարկե չի կարելի սահմանափակվել: Սոցմրցմանը պետք է ներդրագել նաև խմբակներին ու առանձին կոլտնտեսականներին:

Արտազրական առաջադրությունները հասցնելով մինչև խմբակ-
ները և առանձին կոլտնտեսականները, հնարավոր կլինի ծավալել նոր,
ավելի բարձր, իսկական սոցիալիստական վերաբերմունք գեպի աշխա-
տանքը և իսկական հարվածայնությունը: Արտադրության մեջ աշխա-
տող կուսակցականներն ու կոմյերիտականները պետք ե դառնան կոլ-
տնտեսականների նորանոր մասսաներին հարվածայինների շարքից
ներգրավելու նախաձեռնողներ, այս գործի առաջամարտիկներ: Կու-
սակցականներն ու կոմյերիտականները պետք ե շարունակ բացատ-
րեն կոլտնտեսականներին սոցիալիստական մրցության նշանակու-
թյունը, վարի մասին Լենինն ասում եր.

«Կապիտալիզմը կարող ե վերջնականապես հաղթահարվել և վերջնականա-
պես կհաղթահարվի նրանով, վոր սոցիալիզմը կստեղծի աշխատանքի նոր, ա-
վելի բարձր արտադրողականություն»:

զիլի բարձր արագակուղավառություն։
«Կոմունիզմի սկզբում և այստեղ, վորտեղ հայտնաբերվում ե շարքային
բանվորների անձնուրաց, ծանր աշխատանքը հաղթահարող հոգասարությունը
աշխատանքի արտադրողականությունն ավելացնելու, յուրաքանչյուր փոթ
հացը, ածուխը, յերկաթը և այլ միեւնքները պահպանելու մասին»։

Հարկավոր ե խուսափել մըցման և հարգածայնության գործում թույլ արված սխալներից ու աղավաղութիւններից, — այն գեղքերից, յերբ մարդիկ փքուն թվերի հետեւից են ընկնում, կամ ձգտում են քանակական խոշոր ցուցիչների, ուշադրությունն չդարձնելով աշխատանքի գորակի գրա:

Սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը չե կարելի գնահատել առանց վորտկային ցուցանիշների հաշվառման։ Հարկավոր և առանձնահատուկ ուշադրություն դարձնել մրցող խմբակների և առանձին կոլտնտեսականների աշխատանքի վորակի հաշվառքին, մասնավանդ հետեւյալ աշխատանիքների վերաբերմամբ։

Աշխանացանի ժամանակին նախապահամանակին սկսել և ավարտել ցան

Սերմացոյի զտում, ախտահանում, սերմացան
Աշնանավարի ժամանակին կատարում:

Արդյոք աշնանավարի խորությունը վճրաբան և համապատասխա-
մ ազրուական ջներին, մոլախոտերի վոչնչացման խնդրին, հողի
դության, ցանկելիք կուլտուրային և այլն:

Նախ՝ աշնանային դաշտային աշխատանքները—վարը, ցանը կատարվում են նոր տնտեսական տարվա սկզբին:

Յերկրորդ՝ աշխանից սկսվում և կոլտնտեսության աշխատանք՝
ների գերակառուցումն ամբողջ տարվա համար:

Յերբորդ՝ յերկրամասի բաղմաթիվ ույոններում աշնանացան կուլտուրաները ավելի մեծ տեղ են բռնում մյուս կուլտուրաների մեջ։ Որինակ՝ 1931 թվականին աշնանացան ցորենի և գարու ցանքերի տարածությունը կազմում եր ամբողջ ցանքատարածության 38,3 տոկոսը։ Յեթե նաև հաշվի առնենք աշնանացան արեվածաղկի ցանքերի տարածության լայնացումը, ապա բոլոր աշնանացան կուլտուրաները 1932—33 թվականին կկազմեն 42 տոկոս։

Այս տարի աշնանացանի ճիշտ կազմակերպման կարեվորագույն պայմաններից մեկը ցանցափոխությունն է և առավանդից մեր յերկու համար մեջնական է առաջ բերած առաջարկությունները:

րամասի կոլտնտեսություններում պետք է լուրջ պայքար սկսվի ցանքափոխության համար:

Մինչև այժմ ցանքափոխությունը, վորպես կարեվորագույն միջոցառումներից մեկը, կատարվում եր միայն մի շարք կոլտնտեսություններում, գլխավորապես կոմունաներում: Շատ կոմունաներում, վորոնք գոյություն ունեն 1922—25 թվականից, ցանքափոխությունը դարձել է այնպիսի մշտական յերեվույթ, ինչպես, որինակի համար, սերմացույի ախտահանումը, սովորական ցանք և այլն:

Կոլտնտեսությունների մեծամասնության մեջ ցանքափոխությունը բացակայում եւ: Մի շարք պայմաններ, վորոնց մեջ զարգանում եյին մեր յերկրամասի կոլտնտեսությունները, —նրանց մշտական աճը, նրանց կազմի փոփոխության և խորհրդային տնտեսությունների կազմակերպման հետեւանդով՝ հողամասերի վերաշինարարությունը և այլն, —հնարավորություն չեյին տալիս ցանքափոխություն մտցնել:

Ցանքափոխություն չկատարելու պատճառով մենք ամեն տարի բերքի զգալի կորուստներ ենք ունենում, մեր հացարույսերը փչանում մոլախոտերից և զանազան վնասատուներից: Պայքարել ցանքափոխության համար՝ նշանակում եւ պայքարել բերքի համար, կոլտնտեսության կազմակերպչան, տնտեսական ամրապնդման համար: Այստեղից պարզ ե, վոր ցանքափոխությունն արմատավորելու հարցը վոչ թե լոկ տեխնիկական, այլ և քաղաքական հարց ե: Կոլտնտեսությունները պետք ելավ ըմբռնեն այս բանը և հենց այս տարվանից սկսն կանոնավոր ցանքափոխության կազմակերպումը:

Հարց և ծագում—արդյոք ներկայում կմն պայմաններ ցանքափոխությունը սիստեմատիկ, հաստատուն կերպով կերպությունը ասհմանված ցանքափոխությանը չի խախտվի աշխատանքների ընթացքում:

Պետք ե ասել, վոր կոլտնտեսությունների տնտեսական գործունեյության պայմանները և կազմակերպչական դրությունը ներկայումս խիստ փոխվել են, համեմատած 1930—31 թվականների հետ:

Յերկրամասն ավարտել է համատարած կոլեկտիվացումը: Գյուղացիական բնակչության մոտ 85 տոկոսը հաստատուն կերպով ամրապնդվել է կոլտնտեսություններում: Հետեւապես վոչ մի տվյալ չկա, վոր կոլտնտեսության տերրիտորիան փոփոխության կենթարկվի: Կոլտնտեսային հողամասերի սահմանները կարող են փորչվել ընդմիշտ և հետագայում չեն յենթարկվի վորեն արմատական փոփոխության:

Վերջապես, բոլորովին պարզված են յերկրամասի առջև գրված ինդիքները՝ կենդանաբուծության զարգացման մասին: Կենդանաբուծական ֆերմաների հիմնական մասն արդեն կազմակերպված ե, հարկա-

վոր ե միայն ավելացնել անասունների և թոշունների քանակն ու բարձրացնել նրանց վորակը: Դա կոլտնտեսություններին հնարավորություն կտա ստեղծել կերպ կայուն բազա, առաջիկա ցանքափոխությունների ընթացքում վորոշ տարածություններ ոգտագործելով խոստամշակության համար:

Այսպիսով կոլտնտեսային շինարարության պայմանները ներկայումս լիակատար հնարավորություն են տալիս ցանքափոխության հարցը դնելու և լուծելու համար:

Սակայն չպետք ե կարծել, վոր գործնականում չի լինի կուլտուրաների հերթականության մասնակի խախտում: Զի վոր սոցիալիստական տնտեսության պայմաններում, վորը զարգանում է հասամատորեն նշած պլանով, մեր արդյունաբերության զարգացմանը համընթաց, կարող ե այս կամ այն կոլտուրան փոխարինվել մեկ ուրիշ կոլտուրայով, նայած թե արդյունաբերությունն ինչ հումույթ և պետք: Այդ փոփոխությունները սակայն չեն կարող արմատապես խախտել կուլտուրաների ընդհանուր հերթականությունը: Որինակ, յեթե յենթադրենք, յերկրամասում ցանվի 100 000 հեկտար արեածաղիկ, ի հաշիվ ուրիշ շարքահերկ և տեխնիկական բույսերի, գրանով չի խախտվի սահմանված ցանքափոխությունը: Փոփոխություն կլինի շարքահերկ ցանքերի մեջ, իսկ ամբողջ ցանքափոխությունը փոփոխության չի յենթարկվի:

Յենթադրենք նույնիսկ, վոր ժողովրդական տնտեսության շահերը պահանջում են խիստ փոխել կոլտուրաների փոխարաբերությունը (հերթականությունը): Նույնիսկ այս դեպքում, յեթե կոլտնտեսության տերրիտորիայի վրա կուլտուրաների ցանքը կատարվի լավ մտածված, խելացի կերպով, կարելի յե խուսափել ցանքափոխության խախտումից:

Բանը նրանումն ե, վոր յերկրամասի կոլտնտեսությունների մեծամասնության մեջ հողաշինարարական աշխատանքներ կատարելիս, կոլտնտեսությունների ամբողջ տերրիտորիան բաժանվեց 100 հեկտարանոց վանդակների: Այսպիսով կոլտնտեսության հողամասը բաղկացած է 100 հեկտարանոց վանդակներից: Կան կոլտնտեսություններ, վորեկ այդ վանդակների թիվը շատ ե, կան և կոլտնտեսություններ, Պորտեղ—քիչ ե: Ցանքափոխություն մտցնելիս, յուրաքանչյուր ցանքափոխություն սահմանվում է վորեկ քանակությամբ վանդակների համար, վորոնց թիվը մշտական ե ամեն մի կոլտնտեսության մեջ: Մի կոլտնտեսության մեջ ցանքափոխությունը կլինի 10 վանդակներում, մյուսում—8, յերրորդում—15 և այլն: Ցանքափոխության հիմնական պահանջն այն ե, վոր մի վորեկ հողատարածության վրա նպատակահարմար կերպով, հերթով ցանվեն տարբեր կուլտուրաներ: Այս պահանջն առանձնապես հեշտ է կատարել 100 հեկտարանոց վանդակի

վրա: Յուրաքանչյուր այսպիսի վանդակում պետք է հերթով մշակվեն կուլտուրաները՝ ըստ սահմանված ցանքափոխության:

Պարզենք սա որինակով՝ յենթադրենք թե կոլտնտեսության մեջ ընդունված ե 5 դաշտյան ցանքափոխություն, իսկ վեցերորդ անգամ պիտի մշակվի առվույտ: Կոլտնտեսության մեջ կա 6 000 հեկտար ցանքավի հող, կամ 60 վանդակ: Սահմանված ցանքափոխության համապատասխան (յենթադրենք թե մտցված ե այսպիսի ցանքափոխություն՝ շարքահերկ, աշնանացան, շարքահերկ, աշնանացան, գարնանացան և առվույտ) յուրաքանչյուր ցանքափոխություն կընդգրկի 1000 հեկտար հող, կամ 10 հատ հարյուր հեկտարանոց վանդակ: Այդ վանդակներից ամեն մեկի վրա կուլտուրաները կհերթափոխվեն նույնպես, ինչպես և ամբողջ հողամասի վրա: Այսպես, յուրաքանչյուր վանդակի վրա առաջին տարին կցանվի շարքահերկ կուլտուրա, յերկորդ տարին աշնանացան կուլտուրան, յերրորդ տարին՝ շարքահերկ, 4-րդ տարին՝ աշնանացան, 5-րդ տարին՝ գարնանացան կուլտուրա: Հետեւյալ հինգ տարում այդ վանդակում կարող ե ցանվել բացառապես առվույտ:

Հողատարածության այդպիսի բաժանումը շատ մեծ գործնական նշանակություն ունի: Նախ, այս պայմաններում կարելի յեւ չմիացնել ցանքափոխության դաշտերը: Յերբ յուրաքանչյուր վանդակի վրա կուլտուրաները հերթափոխվում են անկախ մյուս վանդակներից և դա համապատասխանում է սահմանված, միասնական ցանքափոխության, այլ ևս կարիք չկա վերաբաժանել դաշտերը, իսկ այս հանդամանքը խիստ կարեսը ե անմիջապես ցանքափոխության անցնելու համար: Յենթադրենք թե № 47 վանդակի վրա 1931 թվականին ցանված եյին աշնանացան կուլտուրաներ: 1932 թվականին ցանքափոխություն մտցնելով կոլտնտեսության մեջ, հիշյալ վանդակի վրա ցանքափոխությունը կարելի սկսել այսպես.՝ աշնանացան կուլտուրա, շարքահերկ-աշնանացան կ., զարնանացան, շարքահերկ: Այս կարգը բոլորովին չի խախտում կոլտնտեսության մեջ ընդունված ցանքափոխությունը:

Մյուս կողմից այս կարգը հնարավորություն ե տալիս նպատակահարմար կերպով կազմել արտադրական քրիզադները: Յուրաքանչյուր բրիզադ կարող ե իր աշխատանքները կատարել միևնույն տեղում՝ առանց խարտելու ցանքափոխությունը: Սա հնարավորություն ե տալիս բաժան-բաժան չանել բրիզադի հողամասը:

Վերջապես, այսպիսի կարգն ունի ահագին գործնական նշանակություն այն դեպքում, յերբ անհրաժեշտ ե փոխել կուլտուրաների հերթականությունը: Յենթադրենք թե հարկավոր ե ավելացնել գարնանացան, հասկավոր կուլտուրաների ցանքը: Այստեղ կարիք չկա խախտել ամբողջ ցանքափոխությունը: Բավական ե ընարել մի քանի վանդակ և այնտեղ փոխել կուլտուրաների հերթականությունը, առ

ունց գործ ունենալու մյուս վանդակների հետ: Որինակ, կոլտնտեսությունը կարող ե իր 50 վանդակներից ընարել 3-ը, այստեղ խախտել առաջ սահմանված ցանքափոխությունը և մտցնել նոր կուլտուրա: Պարզ ե, վոր մնացած 47 վանդակների վրա ցանքափոխությունը չի խախտվի:

Միակ պակասությունը, վոր այստեղ աչքի յեւ զարնում, այդ այն ե, վոր վանդակների ցրվածությունը կդժվարացնի տրակտորախմբի աշխատանքը: Յեթե մի շարք վանդակների վրա միևնույն կուլտուրան ե մշակվում և նրանը իրար կողքի չեն, այլ բաժանված են ուրիշ վանդակներով, տրակտորի աշխատանքը կկատարվի խիստ անսպաս պայմաններում: Սակայն այս պակասությունը դժվար չե վերացնել, յեթե փոխվի սահմանված կարգը: Ցանքափոխություն մտցնելիս և բրիզադների հողամասերը վորոշելիս, պետք ե այնպես անել, վոր 3—4 վանդակներ, վորտեղ միևնույն բույսն ե մշակվում, գտնվեն մի տեղում: Ֆորձնականապես դա գժվար բան չե:

Այսպիսով ցանքափոխություն մտցնելիս, հիմնական պայմանը պետք ե լինի 100 հեկտարանոց վանդակների ոգտագործումը: Միայն այս պայմանը կատարելիս, այս տարի կարելի յեւ անցնել ցանքափոխության:

Մեր ասածներից բոլորովին չպիտի յեզրակացնել վոր ցանքափոխություն մտցնելիս, միևնույն կուլտուրայով ցանված վանդակները կարող են ցըված լինել կոլտնտեսության ամբողջ տերրիտորիայի վրա: Հողը նպատակահարմար ճեռվ կմշակվեն այն դեպքում, յերբ ցանքափոխության դաշտերը հնարավարության չափ իրար մոտ կլինեն, յերբ նրանք մեծ տարածություններ կունենան: Այդպիսով ցանքափոխությունը կազմակերպվի լավագույն, իդեալական ճեռվ: Սակայն գործնականում դրան խոչնդու կհանդիսանան շատ զանազան պատճառներ, — զանազան տեսակի հողեր, տարբեր աստիճանի հոգնածություն, նախորդ ցանված բույսեր, կենտրոնացված հողամասերի անհրաժեշտություն և այլն:

Այս պատճառով, չհրաժարվելով ցանքափոխությունը մի տեղում ե մեծ տարածությունների վրա կատարելուց, անհրաժեշտ ե նաև կաղմակերպել այդ ցանքափոխությունը 100 հեկտարանոց վանդակների հիմունքով:

Ցանքափոխություն մտցնելու ժամանակ անհնաժեշտ ե հաշվի առնել վոր նա պետք ե ապահովի տվյալ ուայոնում թե ցանքափոխությունների և թե կուլտուրաների փոխհարաբերության վերաբերյալ պլանային առաջարկությունների կատարումը:

Կաղմակերպելով ցանքափոխությունը, կուլտուրանությունը պետք ե հաշվի առնել տվյալ վայրի համար սահմանված գյուղատնտեսական մասնակիտացումը (այսինքն նա պետք ե հաշվի առնել, թե գլխավո-

բապես ինչ կուլտուրա յե մշակվում—Ռ. Փ.) : Որինակի համար, հարավաշին ույսուներում չի կարելի մտցնել այնպիսի ցանքափոխություն, վորպիսին կիրառվում ե յերկրամասի չորային գոտում: Յերկրամասի դյուզանատեսության հետագա զարգացման ընթացքում, մասնագիտացում ավելի ու, ավելի մեծ ծավալ կտանա Ռւստի հաշվի չառնել նրան ցանքափոխություն մտցնելու ժամանակ, նշանակում ե վաղորոք խախտել այդպիսի ցանքափոխությունը:

Ընդհանրապես ցանքափոխություն պետք ե սահմանի յուրաքանչյուր կոլտնտեսությունն առանձին, յենելով իր անտեսության առանձնահատկություններից: Պարզ ե, վոր ցանքափոխությունը խիստ տարբեր կլինի յերկու կոլտնտեսություններում, վորոնցից մեկում լավ զարգացած ե անասնապահությունը, իսկ մյուսում—հացանատիկների մշակությունը: Առաջին դեպքում ցանքափոխության մեջ մեծ տեղ կրոնեն կերարույսերը, յերկրորդ դեպքում—հիմնական ապրանքային կուլտուրաները:

Ցուրաքանչյուր կոլտնտեսության մեջ կարող ե լինել մեկ-յերկու ցանքափոխություն, մեկը—զաշտային, յերեք կմշակվեն հիմնական հացանատիկային ու տեխնիկական կուլտուրաները, մյուսը—գյուղին կից, վորտեղ կմշակվեն կերարույսեր և այնպիսի կուլտուրաներ, վորոնք դժվարությամբ են տեղափոխվում, որինակ՝ ճակնդեղ, հատապատղներ և այլն:

Միայն բացառիկ դեպքերում, յերբ հողերը խիստ տարբերվում են իրարից, կարելի յե մտցնել յերկու զաշտային ցանքափոխություն:

Խորհուրդ ե տրվում մտցնել կարճատեւ—4—5 դաշտյան ցանքափոխություն: Այսպիսի ցանքափոխությունն ավելի արագ կիրագործվի, բացի զրանից, կարճատեւ ցանքափոխությունը հնարավորություն և տալիս ավելի նպատակահարմար ձևով կազմակերպել բրիգադային հողամասերը: Յերկարատեւ, 8—12 դաշտյան ցանքափոխության դեպքում անհրաժեշտ կլինի բրիգադին հանձնել 2—3 հողամաս, վորովհետեւ համարյա անկարելի յե մի տեղում հողամասեր հատկացնել 4—6 բրիգադների:

Նայած թե տվյալ ույսունում գյուղատնտեսությունն ինչ մասնագիտացման ե յենթարկված և ինչպիսի ընական պայմաններ գոյսություն ունեն (հող, կլիմա և այլն), ցանքափոխություններն ել տարբեր տեսակի կլինեն: Յուրաքանչյուր գյուղատնտեսական ույսունում կարող են լինել մի քանի, իրարից տարբեր ցանքափոխություններ: Վորպես որինակ, բերենք մի շարք ցանքափոխություններ զանազան գյուղատնտեսական ույսունների համար:

Հարավ-արևելյան հացանատիկային-կենդանաբուծական ույսուններում, վորոնց թվում նաև Բելովինյան, Պետրովյան, Բլագադարնենի և այլ ույսուններում, կարող ե մտցվել այսպիսի ցանքափոխություն:

1. Ին.—մաքուր ցել (ապրիլյան, մայիսյան), շարքահերկ: 2-րդ.—աշնանացան ցորեն: 3-րդ.—շարքահերկեր, պլյուս միամյա խոտեր: 4-րդ.—աշնանացան ցորեն: 5-րդ.—գարնանացան հացաքույսեր, պլյուս կերաբույսեր: Հարավային ույսուններում, վորոնց թվում նաև Մերձ-Կուրանցանը բոլոր ույսուններում, կարող ե լինել այսպիսի դաշտային ցանքափոխություն:—

1. Յեղիպտացորեն: 2. Աշնանացորեն: 3. Յուղատու շարքահերկեր: 4. Աշնանացորեն: Այդ նույն ույսուններում կարելի յե մտցնել և այսպիսի ցանքափոխություն:—

1. Կերաբույսեր, պլյուս պարենային բույսեր: 2. Աշնանացորեն, պլյուս գարնանացան հացաբույսեր: 3. Միամյա խոտեր: 4. Բաղմամյա խոտեր, վորպես արտածվող մշակույթ: Բամբակային ույսուններում կարող ե լինել այսպիսի ցանքափոխություն:—

1. Մաքուր ցել պլյուս յեղիպտացորեն, պլյուս հատապտուղներ: 2. Աշնանացան: 3. Բամբակ: 4. Բամբակ: 5. Գարնանացան հասկավոր բույսեր (կորեկ, վարսակ): 6. Միամյա խոտեր:

Մենք այլ ևս չենք բերի ցանքափոխությունների որինակներ, վորոնք խիստ շատ են: Սամանավակվում ենք միայն այս միքանի որինակներով, վորպեսպի ցույց տանք, թե ինչպիսի ցանքափոխություններ կարող են լինել: Յուրաքանչյուր կուլտուրաներուն իր հողային վարչության կամ ույկունամիտության մեջ կարող ե գտնել մի քանի տեսակ ցանքափոխությունների տեղեկանքներ և այդ ցանքափոխություններից ընտրել այնպիսիները, վորոնք հարմար են իր համար:

Ցանքափոխությունը պետք ե սկսվի հենց այս տարվանից, վորպեսպի աշնանացանը լիովին կատարվի այն դաշտերում, վորտեղ պիտի մտցվի ույսուններության սահմանած ու հաստատած ցանքափոխությունը:

Ի հարկի մեկ տարում անկարելի յե ցանքափոխություն մտցնել: Կուլտուրաների ցրվածությունը և բաղմատեսակությունը, տվյալ

դաշտում նախորդ բույսերի ցանքը սաստիկ կղանղաղեցնեն ցանքափոխության մտցնելը մեկ տարվա ընթացքում: Այս գեպքում հարկավոր է հիմնական կոլտուրաները (մեր յերկրամասում—աշնանացան կուլտուրաները) մտցնել ցանքափոխության մեջ, այն հաշվով, վորմացած կոլտուրաներն ևս մտցվեն հետևյալ 2—3 տարվա ընթացքում:

Ցանքափոխություն մտցնելը կարեորագույն ազգումիջոցառումներից մեկն է: Կլինեն մի ամբողջ շարք գեպքեր, յերբ դա կոլտնտեսության ույժերից վեր կլինի: Այստեղ կոլտնտեսությանն ոգնության պիտի գան ՄՏԿ-ների ազգութերսոնալը, ուայկոլտնտմիությունները, ուայնողբաժինները:

Մյուս կողմից հարկավոր է, վոր այս կարեորագույն միջոցառումը չդառնա միայն կոլտնտեսության ղեկավարության գործը: Ցանքափոխության նախադիմն ամենամարամասն կերպով պետք ե քննվի կոլտնտեսականների լայն մասսաների կողմից, վորպեսզի նրանք լավ ըմբռնեն այս միջոցառման կարեորությունը և հենց իրենք, կոլտնտեսականներն ակտիվորեն մասնակցեն նրա իրագործման:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ցերք արդեն մշակված ե ցանքափոխություն մտցնելու խնդիրը և վորոշված են բրիգադների հողամասերը 1933 թվականի համար, կոլտնտեսությունը պետք ե կազմի աշնանային աշխատանքների արտադրական պլանը:

Պլանի մեջ պիտի մտցնել աշնանավարի, աշնանացանի համար հողը մշակելու և ցանքի աշխատանքները: Այստեղ անհրաժեշտ ե ինը կատի ունենալ, վոր բրիգադը, բացի աշնանացանի աշխատանքներից, միենույն ժամանակ պիտի զբաղվի շարքահերկ ու տեխնիկական կուլտուրաների բերքահավաքով: Ցեղ այս յերկու աշխատանքները պիտի կապակցվեն, գասավորվեն այնպես, վոր վոչ մեկը չտուժի:

Կոլտնտեսություններում բոլոր աշխատանքներն անմիջականորեն կատարում են բրիգադները: Այստեղից պարզ է, վոր բրիգադն ինքը պիտի կազմի իր աշխատանքների պլանը: Կոլտնտեսության վարչությանը մնում ե արտադրական ստուգիչ առաջադրություններ տալ բրիգադներին՝ աշնանային աշխատանքների համար:

Ցեղե կոլտնտեսությունը չի սպասարկվում մեքենա-արակտորային կայանով, նա աշնանացանի ու աշնանավարի առաջադրությունն անմիջականորեն ստանում է ուայկոլտնտմիությունից, կամ մեքենա-արակտորային կայանից—յեթե վերջինս գործունեյության ուայունում ե դաշտում:

Ստուգիչ առաջադրությունը քննվում է կոլտնտեսության մեջ, ընդունվում և բաշխվում ե առանձին բրիգադների միջև: Առաջադրության մեջ ցույց ե տրվում՝ աշնանավարի և աշնանացանի տարածությունը, վանդակների համարները, վորտեղ պիտի կատարվեն այդ աշխատանքները, վերջիններիս ժամկետները և ազգության կական հիմնական պահանջները, վորոնց կատարումը պարտադիր է:

Բացի այդ, մեքենա-արակտորային կայաններով սպասարկվող կոլտնտեսությունները բրիգադներին հայտնուած են, թե տրակտորներն ինչպիսի աշխատանքները են կատարելու:

Առաջադրությունը բրիգադին պետք է արվի իր ժամանակին, աշխատանքներն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ, վորպեսզի բրիգադիրը հարազարությունն ունենա լավ նախապատրաստվելու:

Բրիգադի արտադրական խորհրդակցությունը մանրամասն քննարկում է ստացված առաջադրությունը: Քննելուց հետո բրիգադիրը կազմում է ազգության-կարգագիրը՝ բրիգադի բոլոր աշխանային աշխատանքների համար: Շատ կարեոր է, վոր ազգության-կարգագիրը կազմենքը, բրիգադիրը: Գարնանացանի ժամանակ կոլտնտեսությունների մեծամասնության մեջ ազգության-կարգագրերը կազմվում ենին բրիգադից գուրս: Կազմողը կամ գաշտավարն եր, կամ աշխատանքի կազմակերպիչը, կամ գյուղատնտեսը: Լավագույն գեպքում բրիգադիրին հրավիրում եյին մասնակցելու պլանի մշակմանը: Բազմաթիվ կոլտնտեսություններում արդեն կազմված ազգության-կարգագրերն ուղղակի հանձնվում եր բրիգադիրին՝ կատարելու համար:

Գարնանացանի փորձերը ցույց տվին, թե այդ յերեսութը վորքան վատ ե անդրադառնում դաշտային աշխատանքների կազմակերպման և ընթացքի վրա:

Վերը հիշած բացասական յերեսութն ամենից առաջ դիմագրկում է բրիգադիրին: Բրիգադիրը, վորը կոչված է կազմակերպելու ու ղեկավարելու արտադրությունը, չի կարող հեռու մնալ մի այնպիսի պատասխանատու աշխատանքից, ինչպիսին ե ազգության-կարգագիրը կազմելը, վորը բոլոր աշխատանքների հիմքն է: Ցեղը բրիգադիրին հանձնվում է վարչության կողմից կազմված, արդեն պատրաստի ազգության-կարգագիրը, պարզ է, վոր այսպիսի պայմաններում նրա վրա չի կարելի գնել աշխատանքների պատասխանատվությունը: Գարնանացանի ժամանակ հաճախ կարելի յեր բրիգադիրից լսել թե նա վոչինչ չի կարող անել, քանի վոր վարչությունն ինքն ե արել այս կամ այն կարգադրությունը:

Բացի դրանից, կարգագրերը կազմելը, հանձնելը, ուղղելը հաճախ համանի բնույթ ե կրում, վորը կապում է բրիգադիրի ձեռքերը: «Կարմիր մայիս» կոլտնտեսության յերբորդ բրիգադում բրիգադիրին

հարց տրվեց, թի նա վաղն ինչ պետք է անի: Յեվ ինչ եք կարծում, նա պատասխանեց, «դեռ կարգագիր չկա, յես վհնց գիտենամ»:

Վերջապես, հիշենք նաև մի վնասակար յերնույթ: Հաճախ ըրիդագից դուրս կազմված կարգագրերը պարունակում են ամենակոպիտ սխալներ ու անձառություններ, վորոնք խառնաշփոթություն են մացնում բրիգադի աշխատանքում: Պետրովսկի ույոնի մի կոլտնտեսության բրիգադին առաջադրություն եր տրված՝ աշխատանքն սկսել ապրելի 10-ից: Բրիգադի հողամասի դիրքն այնպես ե, վոր նրա մի մասը, վորը գտնվում ե մի փոքր լանջի վրա, կարող եր մշակվել գեռ նույն ամսի 8-ից, իսկ մյուս մասը չորացավ միայն մինչև ապրելի 11-ը: Կարգագրի համաձայն, բրիգադին սպասում ե մինչև ամսի 10-ը և այդպիսով կորչում ե թանկագին ժամանակը:

Ուրիշ բան ե, յերբ բրիգադին անմիջականորեն ինքն ե կազմում ապրովան. կարգագիրը: Նա խորանում ե յուրաքանչյուր մանրամասնության մեջ, ուսումնասիրում ե հողամասի յուրաքանչյուր վանդակը, ույժերը դասավորում ե հողամասի դրության համապատասխան: Բրիգադին ինքն աշխատանքի ընթացքում կարող ե ուղղումներ մտցնել իր կազմած պլանի մեջ, աշխատելով վոր իր ժամանակին և լավ վորակով կատարվի առաջադրությունը:

Ահա թե ինչու հարկավոր ե ամբողջ վճռականությամբ պայքարել զարնանացանի ժամանակ յեղած սխալների կրկնման դեմ, յերբ պլանները կազմվում ենին բրիգադներից դուրս և վոչ բրիգադիների կողմից: Ցեթե կոլտնտեսության վարչությունն ուղում ե, վոր բրիգադիրը պատասխանատու լինի բրիգադի աշխատանքի համար, ապա նա պետք ե հնարավորություն տա բրիգադիրին ինքնուրույն կերպով կազմակերպել արտադրական աշխատանքը:

Ագրոպրան-կարգագրի համար կարող ե ոգտագործվել նույն ձեռ, վորն ոգտագործվում եր գարնանացանի ժամանակ:—

Կազմված ե 1932 թ. ին

Հաստատված ե կոլտնտեսության վարչության կողմից 1932 թ. ին

Ագրոպրան-կարգագր

Կոլտնտեսության բրիգադի:

Մէլիսատնքի սահման	Տեղ	առանձնահա- տակություն	Ժամանակ	Ժամանակի մա- կարդակի մակարդակի շահագույն	Կազմական պետքա- ճական	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Ուսական պետք և աշխատեն			Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն
							Զեր	Տար	Կին	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	
Աշխատանքի սահման	Տեղ	առանձնահա- տակություն	Ժամանակ	Ժամանակի մա- կարդակի մակարդակի շահագույն	Կազմական պետքա- ճական	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Զեր	Տար	Կին	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն
Աշխատանքի սահման	Տեղ	առանձնահա- տակություն	Ժամանակ	Ժամանակի մա- կարդակի մակարդակի շահագույն	Կազմական պետքա- ճական	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Զեր	Տար	Կին	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն
Աշխատանքի սահման	Տեղ	առանձնահա- տակություն	Ժամանակ	Ժամանակի մա- կարդակի մակարդակի շահագույն	Կազմական պետքա- ճական	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Զեր	Տար	Կին	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն
Աշխատանքի սահման	Տեղ	առանձնահա- տակություն	Ժամանակ	Ժամանակի մա- կարդակի մակարդակի շահագույն	Կազմական պետքա- ճական	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Զեր	Տար	Կին	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն	Աշխատանքի մա- կարդակի մակարդակի շահագույն

Հիմնական ցուցիչները, վորոնք պետք ե նախատեսվեն ագրո-պլան, կարգագրում, հետեւյաներն են: — աշխատանքի տեսակը, աշխատանքի տեղը՝ առանձնահատկությունները (տվյալ կուլտուրայի ցանքին նախորդած բյուսեր, մոլախոտերի քանակություն), աշխատանքի վորակային ցուցիչները, աշխատանքի կատարման ժամկետերը, ամեն որ կատարված աշխատանքի քանակը, որական արտադրույթի նորմա, ամեն որ աշխատող կոլտնտեսականների, լծկանի և ինվենտարի քանակությունը, աշխատանքի միավորի դնահատումը, հասանելիք աշխատ-րերի քանակությունը:

Կարգագրի մյուս յերեսին ամեն որ հաշվի յի առնվում աշխատող կոլտնտեսականների, լծկանի և ինվենտարի քանակությունը: Հաշվի առնելիս, փաստական արտադրույթը համեմատվում ե պլանով նախատեսված արտադրույթի հետ: Ահա այդպիսի հաշվառման ձեռ:

Ամեն որ աշխատող կոլտնտեսականների, լծկանի յեվ ինվենտարի հաշվառք

Հասականի պլանի տորեն	Փաս- առանի պլանի տորեն	Հասա- կանի պլանի տորեն	Փաս- առանի պլանի տորեն	Հասա- կանի պլանի տորեն	Փաս- առանի պլանի տորեն
Կոլտնտեսականներ					
Տղամարդ					
Կին					
Լծկաններ					
Ձի					
Ցեղ					
Վարդի ցանքին պատճենագույն					

Այս ձեռով հաշվի յի առնվում արտադրույթը: Նա մեծ նշանակություն ունի բրիգադի գործնական աշխատանքի համար, քանի վոր հնարավորություն ե տալիս ամեն որ հաշվի առնել կատարված աշխատանքը. ժամանակին հայտնաբերել ճեղքածքները և միջոցներ ձեռք առնել նրանց վերացման համար:

Բրիգադի կազմած ապրովան-կարգագիրը ներկայացվում է կոլտնտեսության վարչությանը՝ հաստատվելու համար: Վարչությունը քննում է ագրոպրան-կարգագիրը, ուղղումներ և մտցնում՝ յեթե այդ հարկավոր ե, և ապա վերդարձնում է բրիգադի իրին, աշխատանքի ընթացքում շարունակ պատճենագույն կատարելու համար:

Հաստատված ագրոպրան-կարգագիրը քննարկվում է բրիգադի ար, տաղըական խորհրդակցությանը և նրա ընդհանուր ժամկետում: Բրիգադին դորձնական աշխատանքի ընթացքում շարունակ ոգտվում է աղության առաջադրման աղությանը:

բովլան-կարգագրով, ամեն որ նրա մեջ նշումներ անելով ստացված առաջադրությունը կատարելու մասին: Բրիդագների ազրովլան-կարգագրի հիմունքով, կոլտնտեսության վարչությունը կազմում ե աշնանացանի աշխատանշային պլանը (ամբողջ կոլտնտեսության համար): Այս պլանը նպատակ ունի կանոնավոր կերպով ստուգել ամբողջ կոլտնտեսության պլանի կուտարումը, իսկ այդ հնարավորություն ե տալին ժամանակին գործնական ոգնություն հասցնել այս կաժ այն բրիգադին:

Աշխատանքային պլանը կազմվում ե թերկը կոլտնտեսմիութան հանձնարարած ձեռվ, քաղհանի և խոտարքի համար: Այդ ձեռը կարող է ամբողջովին ոգտագործվել նաև աշնանային աշխատանքների համար:

Կոլտնտեսության վարչությունը, իր ձեռքի տակ ունենալով աշխատանքների ամենորյա ցանկը և բրիգագիրներից ամեն որ ստանալով զեկույցներ աշխատանքների կատարման մասին, կարող ե ճշությամբ գորոշել ամբողջ կոլտնտեսության որական գործունեյության պատկերը: Այսպիսով նա հնարավորություն կունենա շտապ միջոցներ ձեռք առնել աշխատանքների մեջ սոսաջացած ճեղքածքները ծածկելու համար—վերակազմակերպելով բրիգադների աշխատանքը, ուժեղացնելով ղեկավարությունը և նոր կոլտնտեսականներ ու լծկաններ տալով բրիգադին, վորոնք գտնվում են իր տրամադրության տակ:

Կոլտնտեսային արտադրության պլանավորման եյական պակասություններից մեկը պլանի հաճախակի փոփոխումն եւ Շատ անգամ պըլանը փոփոխվում ե առանց վորեն լուրջ պատճառի և միւնուցն բրիգադում մի քանի անգամ:

Կարիք չկա շետելու դրա բացասական հետևանքն արտադրության համար: Պլանի ասեն մի փոփոխություն ստիպում ե վերակառուցել բրիգադը: Գարնանը մեքենա-արակտորային կայանով սպասարկվող մի կոլտնտեսության մեջ կարիք յեղավ 6 անգամ փոխել—վերակազմել պլանը: Հետևանքն այն եր, վոր վարչությունից վոչ վոք, նույնիսկ նախադահը չդիտեր, թե կոլտնտեսությունն ինչ քան ակությամբ և ինչ կուլտուրաներ ե ցանելու: Մեր յերկրամասում այս գեղքը յեղակի չեւ:

Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք ե լավ ըմբռնե, վոր պըլանի փոփոխությունը խանգարում ե բրիգադների աշխատանքը և կարող ե խիստ անդրադառնալ առաջադրության կատարման վրա: Ահա թե ինչու պետք ե գործը այնպես կազմակերպել, վոր միանգամ կազմականը մինչև աշխատանքի վերջը փոփոխության չյենթարկվի:

Ճշգրիտ պլանավորում կազմակերպելու համար վոչ պակաս կարելի վոր ե նաև սիստեմատիկ վերահսկողությունը ազրովլան-կարգագրերի կատարման վրա: Բրիգադիը պետք ե հսկե վոչ միայն բրիգադների ամենորյա զեկույցների հիման վրա, այլ և պլանավորա-

պես անմիջականորեն ստուգել ազրովլան-կարգագրերի կատարումը բրիգադներում: Կարող ե պատահել, վոր արգեն կազմված և վարչության կողմից հաստատված ազրովլան-կարգագրը աշխատանքների ընթացքում անհաջող դուրս գա: Բրիգադիրն առժամանակ կարող ե չնկատել այդ բանը և սխալ թույլ տալ վորից կվիմեն աշխատանքները: Ահա այսպիսի դեպքերում ե, վոր առանձնապես անհրաժեշտ է լինում վարչության գործնական ոգնությունը: Ազրովլան-կարգագրի տեղն ու տեղն ստուգելը հնարավորություն կտա իր ժամանակին հայտքերել պակասությունները և անմիջապես ուղղել անհրաժեշտ փոփոխություններ մտցնելով ազրովլան-կարգագրի մեջ:

Կոլտնտեսություններում պլանավորումը զեռ լավ հիմքերի վրա չի դրված և այստեղ նրանց լուրջ ոգնություն և հարկավոր: Կոլտնտեսություններին սպասարկող մեքենատրակտորային կայանները և ույղարկությունները պետք ե ոգնեն նրանց այս գործում, լավագույն ազրոնոմիական ույժեր և հմուտ կազմակերպիչներ ուղարկեն, կոլտնտեսության արտադրական գործունեյության լավ կազմակերպված պլանավորումը բավականաչափ հաստատ յերաշխիք և աշնանացանի հաջող կատարման համար: Այդպիսի պլանավորումը հնարավորություն և տալիս ճշտորեն կազմակերպել յուրաքանչյուր բրիգադի աշխատանքը և կանոնավոր ու սիստեմատիկ կապ ստեղծել կոլտնտեսության ղեկավարության և աշխատանքը կատարողների բրիգադների միջև:

ԻՆՉՊԵՍ ԴԱՍՎԱՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ, ԱԳՐՈՊԼԱՆ-ԿԱՐԴԱԳԴՐԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ազրովլան-կարգագրը կազմելով զեռ ամեն ինչ արված չեւ բրիգադին տրված արտադրական առաջազրությունը կատարելու համար:

Աղդեն կազմված ու հաստատված ազրովլան-կարգագրի հիման վրա պետք ե դասավորել կոլտնտեսականներին, լծկանն ու ինվենտարը, այսինքն մի առ մի վորոշել, թե սրանք աշխատանքների ժամանակ վրատեղ պիտի լինեն, ինչ պիտի անեն և այլն: Աշխատող ձեռքերն ու արտադրության միջոցները պիտի դասավորել այնպես, վոր հետագայում զես-դեն ընկնելու կարիք չլինի, բոլոր ողակներն արդյունավետ աշխատեն, աշխատանքն ունենա բարձր արտադրողականություն և լավ վորակ:

Աշխատանքի այսպիսի կազմակերպումը հասարակ բան չեւ: Գարնացանի փորձը ցույց տվեց, վոր մի շարք կոլտնտեսություններում ցանքային աշխատանքների ձգձգումը հետևանք եր ույժերի անհաջող դասավորության: Որինակ, Բագդադարնենի առյոնի «Կարսիր մայիս» կոլտնտեսության մեջ, ցանքի ժամանակ իրար հետեւից թողնվում ելին:

յերեք ցանիչներ: Հետևանքն այն եր լինում, վոր միայն մեկ որվա ընթացքում 6 անգամ կանդ եյին առնում ցանիչները: Առջեց գնացող ցանիչը կանգնում եր սերմացու վերցնելու համար, իսկ մյուս յերկու ցանիչները, թեև սերմացու ունեյին, ստիգմատ եյին նույնպես կանգ առնել:

Լինում եյին դեպքեր, յերբ վարելու համար կիրառվում եր անհատական գործավարձը: Յուրաքանչյուր գութանի որական արտադրողականության հաշվով արվում եր մի փոքրիկ տարածություն և այստեղ կոլտնտեսականն ուղղակի ամբողջ որը դես ու դեն եր անում: Այսպիսի տարածությունների ցրվածությունն անդրադառնում եր վարի, մանավանդ ցանքի վրա: Ցանիչը պիտի մի անդամից ցաներ մի քանի այդպիսի տարածություններ, իսկ տարբեր տեսակի վարը, խամ թողած տեղերը և վերջապես, գութանի շրջվելու կամ հողամասի ծայրերի վատ տեսակի վարն անդրադառնում եյին աշխատանքների վրա:

Հաճախ լինում եյին դեպքեր, յերբ աշխատանքների ընթացքում բրիգադիրը, նկատելով շատ և շատ ցածր արտադրողականությունը, ստիգմատ եր վերակառուցել ամբողջ բրիգադը, վերակազմել խմբակները, վերադասավորել լծկանն ու մարդկանց, փոխել աշխատանքի կարգը և այլն: Այս բոլորը խանգարում եր աշխատանքը, ձգձգում եր նրա կատարման ժամկետերը և վատ եր ազդում կոլտնտեսականների վրա:

Աշխատանի կամպանիայի ընթացքում պետք ե ամբողջովին վերացվեն այս պակասությունները:

Պետք ե վաղորոք և լավ մտածել թե ինչպես ավելի լավ ու նպատակահարմար ե դասավորել ույժերը, վրապեսզի բարձր լինի աշխատանքի արտադրողականությունը: Ույժերի դասավորության հարցը պետք ե մանրամասն քննել կոլտնտեսականների հետ, հաշվի առնել նրանց փորձառությունը, ոգտադրութել հարեան կոլտնտեսությունների փորձը, վրապեսզի թույլ չտալ վոր արտադրողականությունն իջնի և բրիգադը վերակառուցվի աշխատանքի ժամանակ:

Աշխատանի կամպանիայի պայմանները իիստ տարբերվում են գարնանացանից, Գարնանը հարկավոր եր վարը կատարել շատ կարծ ժամկետերում և միաժամանակ ցանել վարած դաշտերը: Այսպիսի կարգն առանձնապես մեծ նշանակություն ուներ վաղամշակ հասկավոր կուլտուրաների ցանքի համար:

Աշխատան աշխատանքի պայմաններն այլ կլինեն: Աշխատավարը կարող ե կատարվել ավելի յերկար ժամանակամիջոցում: Ցանքը մեծ մասամբ վարի հետ միաժամանակ չի լինի: Որինակ աշխատավարը կարելի յեւ պետք ե կատարել վորքան կարելի յեւ վաղ, ոգոստոսի կեսերից և շարունակել մինչև ցանքի վերջը, այսինքն մինչև հոկտեմբեր:

Իր կեսը, իսկ հարավայիշն ուայոններում—նույնիսկ մինչև նոյեմբերի սկիզբը:

Ցանքը պետք ե կատարվի վորքան կարելի յեւ կարճ ժամկետում, մոտավորապես 10—13 որում: Ցանքի սկիզբը հարավայիշն ուայոնների համար պետք ե համարել հոկտեմբերի 1-ը:

Գարնանային ու աշխատանքների տարբեր պայմաններից բլիսում ե նաև ույժերի կազմակերպումը: Գարնանը կարելի յեր կազմակերպել զուգագրված և բավական խոշոր խմբակներ—գութանավորներից, տափանողներից ու ցանողներից: Աշխատանի ժամանակ պետք ե աշխատեն փոքրաթիվ, մասնաղիտացված և զուգագրված խմբակներ:

Վարելու, տափանելու և ցանելու համար պիտի կազմակերպվեն առանձին խմբակներ: Սկզբում աշխատում ե գութանավորների ու տափանողների խմբակը, վորովհետեւ հարկավոր ե դաշտերը նաև վարելու ու տափանել: Ցանվորների խմբակն ավելի ուշ և սկսում աշխատանքը:

Վարելու խմբակները պետք ե ունենան 2—4 գութան: Նպատակահարմար չե կազմակերպել ավելի մեծ խմբակներ: Մեկ գութանով աշխատելն ևս ձեռնտու չե, քանի վոր յուրաքանչյուր գութանի համար մանը հողամաս պիտի հատկացնել և բացի դրանից, իիստ կը բարդանա տափանողների աշխատանքը:

Խմբակների թիվը կարող ե տարբեր լինել: Դա կախված ե նաև՝ բրիգադի մեծությունից և նրան արված առաջադրությունից: Յերկրորդ, աշխատանքի ժամկետից: Աշխատանքի սկզբում կարող են գործն աշխատանքի ժամկետից: Այսպիսակ մոտենա ցանքը և կոլտնտեսականներն մեկ-յերկու խմբակ: Վորքան մոտենա ցանքը և կոլտնտեսականներն ու լծկանն ազատվեն մյուս աշխատանքներից, խմբակների թիվը ել կմեծանա:

Յուրաքանչյուր խմբակի տրվում է հատուկ հողամաս, 5—8 որ աշխատելու համար: Հողամասը կարող ե ունենալ մոտ 20—25 հեկտար տարածություն, պետք ե այնպիս անել, վոր յուրաքանչյուր խմբակ աշխատի մի վորեկ հարյուր հեկտարանոց վանդակի վրա:

Մի խմբակի աշխատանքը միենույն վանդակի վրա գործնականապես մեծ նշանակություն ունի, քանի վոր այդ նույն խմբակը հետո կարող ե մասնակցել ցունքին: Այսպիսով մի վորոշ խմբակ կկատար միենույն վանդակի վրա բոլոր աշխատանքները—վարը, տափանումը, ցանքը: Այսպիս խմբարձուանա աշխատանքի վորակը:

Յեթե վարն սկսում ե ցանքից շատ առաջ, զժվար չե վերև հիշածն իրագործել: Իսկ յեթե վարի ժամանքի ժամկետերն իրար մոտիկ են, չի կարելի, վորովհետեւ խմբակը չի կարողանա վորոշված ժամկետում և վարել և ցանել: Այս գեղագում անհրաժեշտ ե մի վանդակի

վրա աշխատեցնել մի քանի խմբակներ, կամ թե վարելու համար նշանակել հողամասեր՝ յերկու վանդակների յերկարությամբ։ Այդպիսի հողամասերի լայնությունը պիտի լինի 20—30 մետր։

Տափանողների խմբակը պետք ե այնպիսի մեծություն ունենա, վոր լիովին կարողանա տափանել վարած հողամասերը։ Աշխատանքը պետք ե կազմակերպել այնպես, վոր խմբակի յուրաքանչյուր տափանը սպասարկել յերկու վարող խմբակների։

Յերեք գութանով աշխատող խմբակը որպական կարող ե գարել 3—4 հեկտար։ Տափանը մեկ որում կտափանի 5—6 հեկտար։ Հետեապես մեկ տափանով կոլտնտեսականը կտափանի յերկու կոլտնտեսականի վարած հողը։ Այստեղ վարելու և տափանելու ժամանակի մեջ ամենամեծ տարբերությունը կլինի մեկ որ։

Բալց և այնպես չպետք ե մոռանաւ վոր վարած դաշտը պետք ե խփույն և յեթ տափանվի։ Բացի դրանից, աշնանացանի կամպանիայի ժամանակ հաճախ կարեք կլինի վարը տափանել յերկու անգամ։ Այսպատճառով ավելի լավ ե խմբակը կազմակերպել գութանավորներից և տափանողներից, վորպեսզի տափանումն ամբողջովին կատարվի վարից անմիջապես հետո։

Խմբակների կազմը կլինի այսպես.—

2—3 գութան, 2 անգամ տափանելու դեպքում 1 տափան

2—4 » » » » » 2 »

2—3 » » » » » 1 » յերկու խըմբերի համար
4 » » » » » 1 տափան

Յերբ կազմվում ե տափանողների հատուկ խմբակ, նաև չորս տափանից ավելի չպիտի ունենա, իսկ խմբակի մարդկանց քանակությունը կախված կլինի վարող խմբակի մարդկանց քանակությունից։

Թե հատուկ և թե գուգագրված (խառն) խմբակներ կազմակերպելիս, պետք ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր տափանները պետք ե վոչ միայն տափեն վարած հողը, այլ և մաքրեն դաշտերը։ Այստեղ բրդագրիրի համար դժվար չի լինի համակերպել գութանների ու տափանների աշխատանքը։

Ցանկորների խմբակն ավելի լավ ե ունենա յերկու ցանիչ։ Խըմբակի աշխատանքը կազմակերպվում ե այսպես.—յուրաքանչյուր հարյուր հեկտարանոց վանդակը բաժանվում ե 3—4 մասի, 100 մետր լայնությամբ։ Ցանիչները գնում են հողամասի կողքերից։ Առաջին շրջանը կատարում ե մեկ ցանիչը, վորպեսզի հատիկների հետք թողնի։ Յերկրորդ շրջանը կատարելիս աշխատանքի յե անցնում յերկրորդ ցանիչը, վորը շարունակ գնում ե առաջինի հետեւից։ Յերեք ցանիչն որական ցանում ե 5—6 հեկտար, ապա խմբակն այդ որվա ընթացքում

ամբողջովին կցանի իրեն տրված հողամասը։ Այսուհետեւ խմբակն անցնում ե հարեւան հողամասը և ամբողջ հարյուր հեկտարանոց վանդակի վրա ցանքն ավարտում ե 8—9 որում։

Այստեղից պետք ե գալ այն գործնական յեզրակացության, վոր յուրաքանչյուր խմբակի աշխատանքը պիտի կենտրոնացվի մի վանդակի վրա։ Ավարտելով մի վանդակի ցանքը, խմբակը կարող ե անցնել մյուս վանդակը։ Ավելի լավ ե հնարավորության դեպքում վարող խմբակին մասնակից դարձնել ցանքին, այն պայմանով, վոր ցանքը կատարվի նույն վանդակում, վորը վորել ե այդ խմբակը։

Այսպիսի կուրգը չափազանց մեծ գործնական նշանակություն ունի։ Նախ և առաջ յուրաքանչյուր վանդակի վրա ցանքը կիսատարվի միենոյն, կարճ ժամկետում, վորով նորմալ պայմաններ կստեղծվեն բերքահավաքման համար։ Յերկրորդ, խմբակի աշխատանքը զիմաղրի ված չի լինի, քանի վոր յուրաքանչյուր խմբակ աշխատանքը կատարում ե իր վանդակի վրա։ Այսպիսով հնարավոր ե գաշտը ծելուց հետո, հեշտությամբ վորովել տվյալ խմբակի աշխատանքի վրակը։

Դաշտը մաքրելու, մոլախոտերը վոչնչացնելու աշխատանքը կատարում ե տափանողների խմբակը։ Վերջնիս մեծությունը կախված է հողամասի զրությունից,—վորքան չատ աշխատանք կա, վորքան շատ են մոլախոտերն, այնքան մեծ կլինի խմբակը։

Այս խմբակների աշխատանքը կազմակերպելիս, պետք ե ձեռնի վոր մեկ կամ յերկու խմբակ բոլոր աշխատանքները կատարեն մեկ վանդակի սահմաններում։

Սերմացուն, ջուրը և վառելանյութերը տեղն ե հասցնում մի հատուկ խթեակ։ Վերջնիս մեծությունը կախված է աշխատանքների ծագությունից և այն տարածությունից, վորով նաև պիտի տեղափոխություններ կատարեն։ Այս խմբակի կոլտնտեսականներն ամրացվում են վորոշ խմբակների այն հաշվով, վոր լիովին բավարարվեն նրանց կարիքները։

Մեքենա-տրակտորային կայաններով սպասարկվող կոլտնտեսություններում աշխատանքը մի փոքր այլ կերպ ե կազմակերպվում։ Մեքենացանի ժամանակ տրակտորները գլխավորապես վարելով կզբաղւացանակ ժամանակերպվում ե հողը մշակել աշխատանքանի համար և միենույն ժամանակ հերկել գործան համար։ Տրակտորները կլարեն ՄՏԿ-ի պլանի համաձայն։ Նրանք միենույն ժամանակ պետք ե ի վարեն և տափաննեն։ Այն հողամասերում, վորտեղ արակտորները չեն աշխատելու, նրանց կիոխարիխնեն ձիերը։

Ցանքի աշխատանքները շատ գեպքերում կկատարվեն ձիերի միջոցով, ուստի այդ աշխատանքները պիտի կազմակերպվեն և խըմբակների կողմից կատարվեն վերված կարգով։

Յեթե կոլտնտեսության մեջ աշխատում են ՄՏԿ-ների տրակտորները, պետք ե առանձնահատուկ, լուրջ ուշադրություն դարձնել տրակտորների ու ձիերի նպատակահարմար ոգտագործման վրա: Զին լրացնում ե տրակտորի աշխատանքը: Առանձնացնել, հակադրել լծկանի և տրակտորների աշխատանքը, նշանափում ե վնասակար սխալ թույլ տալ աշխատանքի կազմակերպման մեջ:

Կոլտնտեսության ղեկավարությունը և բրիգադիները պարտավոր են անհրաժեշտ պայմաններ ստեղծել տրակտորների աշխատանքի համար: Տրակտորներին պետք ե ամրացնել վորոշ քանակությամբ լծկաններ՝ ջուր և վառելանյութ տեղափոխելու համար: Տրակտորներն սպասարկելու նպատակով պետք ե նշանակել լավագույն կոլտնտեսականներին, հողամասերը պետք է մաքրել այնպես, վոր տրակտորների արտադրողականությունն ամենամեծ չափի հասնի և աշխատանքի վորակը բարձր լինի:

Կոլտնտեսություններում կազմակերպվող խմբակները գլխավորվում են նրանցից ընտրված խմբակավարներով: Խմբակավարը չի ազատվում աշխատանքից, բայց պատասխանատու յե խմբակի աշխատանքի կազմակերպման համար: Նա պարտավոր ե աշխատանքից առաջ դասավորել կոլտնտեսականներին, ողնել նրանց աշխատանքը կարգավորելու համար, ուղղել նրանց սխալները: Բրիգադի բոլոր աշնանային աշխատանքները կատարվում են բրիգադինի կամ նրա ողնականի անմիջական ղեկավարությամբ: Բրիգադինը կամ նրա ողնականը պետք է անձամբ ներկա լինեն աշխատանքն սկսվելիս, մանավանդ մի այնպիսի պատասխանատու դորձի ժամանակ, ինչպիսին ե ցանքը:

Պետք ե հիշել վոր ցանքի համար ամբողջ պատասխանատվությունն ընկնաւմ ե բրիգադինի վրա, ուստի նա բոլոր աշխատանքներին պետք ե ներկա լինի, մինչև վոր նրանք կանոնավորվեն և ընթանանորմանը կարգով:

ԱԳՐՈՑԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Ամեն տարի կոլտնտեսությունների բերքից միլիոնավոր փթերով հաց ե կորչում, շնորհիվ հողի վատ մշակման և ցանքերի թույլ խնամքի: Հաջուկ թե մեր յերկրամասում գտնվի մի այնպիսի կոլտնտեսական, վորը չգիտենա, թե ինչ բան ե սարգային թիթեռը, հացի բղեղը, խլուրդը և վորը տեսած չլինի, թե ինչպես այդ վնասատուները վոչնչացնում են կոլտնտեսային բերքը: Սակայն դեռևս շատ կան այնպիսի կոլտնտեսականներ, վորոնք չգիտեն հազարավոր զանազան վնասատուների մասին, վորոնք ամեն տարի կոլտնտեսականից հափշտակում են նրա բերքի առյուծի բաժինը, որին պարագաների գույնը կազմում է մոտ 10%:

տեսակ ժանգը, ափիսը, յերկարագթիկները, հացի սղոցիչները և այլն: Ավելի և քիչ ե այն կոլտնտեսականների թիվը, վորոնք պարզ պատկերացում չունենային զանազան վնասատուների ամեն տարի հասցրած վնասների մասին:

Կարելի յե համարձակ ասել վոր ամեն տարի կոլտնտեսականների բերքի մեկ հինգերորդից մինչև մեկ քառորդը կլանում են այդ վնասատուները:

Կոլտնտեսային բերքի համար վոչ պակաս չարիք են նաև մոլախոտերը: Ամեն տարի, շնորհիվ մոլախոտերի դեմ մղվող պայքարի թույլության, նրանցից փշանում են տասնյակ հեկտար ցանքեր և մոլախոտերի ուժեղ աճման հետևանքով պակասում ե բերքը:

Վերջապես, հողի անժամանակ մշակումը, ուշացած և վատ վորացի ցանքը շատ խիստ են անդրադառնում բերքի վրա: Յեթե հաշվենք այն բոլոր կորուստները, վոր առաջ են գալիս վնասատուներից, մոլախոտերից, հողը վատ մշակելուց և յեթե ասենք կոլտնտեսականներին, վոր նրանք իրենց ամեն տարի հարյուրավոր փուլթ հացի վընաս են տալիս, վոր նրանք մոտ յերկու անգամ ավելի հաց են կորցնում, քան թե ուտում են տարվա ընթացքում իրենց ընտանիքների հետ միասին,—կդժնվեն չհավատացողներ: Բայց այդ այդպես ե:

Վերցնենք ներկա տարին: Տիխորեցկու ույոնում հացի բղեղը վոչնչացրեց բերքի առնվազն մեկ քառորդ մասը, իսկ առանձին կոլտնտեսություններում—մինչև 50 տոկոսը: Յերկրամասում փչացած ցանքերի տարածությունը հասնում է 280 հազար հեկտարի: Հացը զլիավորապես փչացել ե այստեղ, վորտեղ քաղհանը կատարվել ե ուշ և վատ վորակով:

Նույն Տիխորեցկու ույոնում մինչև հունիսի մեկը քաղհանված եր բոլոր շարքահերի ցանքերի մոտ 50 տոկոսը: Դաշտերը մոլախոտերով ծածկվելու և ժամանակին քաղհան չկատարելու հետևանքով, բերքի մի մասն արգեն փչացել ե:

Պիմորսկ-Ախտարսկի ույոնում քաղհան չկատարելու պատճառով, բամբակի ցանքերի մի մասն արգեն փչացած ե համարվում, այսպիսի զրություն և ափում յերկրամասի շատ ու շատ ույոնություն:

Այստեղից կարելի յե գալ այն յեզրակացության, վոր կոլտնտեսություններում բավականաչափ պայքար չի մղվում կորուստների, վնասատուների ու մոլախոտերի դեմ: Կոլտնտեսությունները դեռևս չեն ոգտագործում իրենց ունեցած բոլոր հասրավորությունները՝ իրենց սեփական բերքը պաշտպանելու համար:

Այս զրությունն այլևս պահել չի կարելի: Կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները պետք ե ամբողջովին զորահավաքին կորուստների դեմ պայքարելու, բարձր բերքի,

հացի, մեր աճող արդյունաբերության անհրաժեշտ հումույթի և ամար պայքարելու:

Առաջիկա աշնանացանի կամպանիայի ընթացքում մեր լոգունգները պիտի լինեն՝

Վահագի փութ հացի կորուստ:

Վահագի փութ հաց վնասատուներին:

Հողը մշակել և բույսերը խնամել այնպես, վոր անցյալ տարվա հանդեպ համար ավագոր բույսերի բնրքը բարձրանա վոչ պակաս, քան 20 տոկոսով, իսկ շարքահերկի բնրքը—վոչ պակաս, քան 40 տոկոսով:

Ինչպես անել վոր հիշված չափով բարձրանա բերքը:

Դրա համար պետք ե աշնանացանի ընթացքում կիրառել մի շարք ազգությանի կական միջոցառություն, այն ե՝

Ցանքն սկսել ու ավարտել ազրուանուներով վորոշված ժամկետում:

Ցանքն միայն տեսակավորված և ախտահանված սերմացու:

Գարնանացանի համար բավականաչափ տարածություն հերկել:

Հողը մշակել այնպես, վոր վոչնչանան մոլախոտերը և զանազան վնասատուները:

Աշնանից այս միջոցառություները կիրառելու շնորհիվ, գարնանը լավ կամքեն աշնանացան կուլտուրաները, իսկ գարնանացան կուլտուրաները կզարդանան լավագույն պայքաններում:

Աշնանացանի կամպանիայի ընթացքում կարեվորագույն ազրուակինի կական միջոցառություները պիտի կիրավեն այսպես.—աշնանացանի համար հողը պիտի մշակվի վորքան կարելի յե վաղ: Մաքուր ցելերի վրա ցանքը կարելի յե կատարել առանց նախապես մշակելու, ուղղակի հողաշերտը խտացնող գործիքներով: Յեթե ցելը բավականաչափ մաքուր չե, յեթե այնտեղ ծիւլ են մոլախոտերը, հարկավոր և տափանել: Վոչ ուշ, քան 3—5 որ հետո պետք ե ցանվի տափանած ցելը:

Շարքահերկ կուլտուրաների դաշտերում ցանքը կարելի յե կատարել՝ հողն այդ կուլտուրաներից մաքելուց հետո: Մաքուր դաշտում հողը պետք ե մշակել գիսկավոր տափանով, վորից հետո ցանել շարքացաններով: Յեթե հողամասում շատ մոլախոտեր կան, հարկավոր և հողը թեթևվակի վարել բազմախոփ գութաններով, իսկ ցանելուց առաջ տափանել:

Յեթե աշնանացանը կատարվելու յե խոզանի վրա, անհրաժեշտ և հասկավոր կուլտուրաները հնձելուց հետո, փոճոկել խոզանը: Փոճոկելու նպատակն է վոչնչացնել մոլախոտերը, զանազան միջատների թըրթուրները և թույլ չտար, վոր հողը արագ չօրանա: Հենց վոր փոճոկված դաշտում նոր մոլախոտեր յերեան, հարկավոր և վարել 10—12 սանտիմետր խորությանը և անմիջապես տափանել վարածը: Յեթե ցան-

քի սկզբին արգեն պատրաստի գաշտում մոլախոտեր յերեան, հարկավոր և մի անգամ տափանել այդ գաշտը:

Աշնանացանի համար ընդհանրապես հողը վարվում է 10—12 ամ խորությամբ: Կարն սկսվում է կամ հողամասի մեջտեղից, կամ յերկու կողմերից: Կարելի յե վարել նաև չորս կողմից, հետզհետե գնալով դեպի հողամասի մեջտեղը, մանավանդ այն գեղքերում, յերբ խմբակին վարելու համար հատկացվում է 100 հեկտարանոց հողամաս: Հարկավոր և առանձին ուղաղը ություն դարձնել, վոր վարելիս խամ տեղեր չթողնվեն, վարը չլինի անհավասարաչափ, իսկ հողամասերի ծայրերն ու անկյունները վարվեն ինչպես հարկավոր ե:

Տափանելու ժամանակ պետք ե հետևել, վոր չտափանված տեղեր չմնան, տափանների մեջ խողան և մոլախոտեր չլցվեն: Տափանել հարկավոր և վարելուց անմիջապես հետո: Փափուկ հողերը տափանվում են լայնությամբ, իսկ պինդ հողերը—յերկարությամբ:

Հողաշերտի խտացումը կարող է տեղի ունենալ այն բոլոր գեղքերում, յերբ գործ ունենք պինդ հողերի հետ (խոպան հողեր, յերկարատու հանգուտի թողած հողեր, վատ վարած և խամ տեղեր թողած հողեր և այլն): Պինդ հողերի խտացումը կատարվում է շերկարությամբ, իսկ վափուկ հողերի խտացումը—լայնությամբ:

Հնդկանրապես ցանքը ցիտի կատարել գիսկավոր ցանիչներով:

Ցանքը պիտի կատարվի վորոշված ժամկետերում: Զանազան ուսույնների համար ցանքի ժամկետերն ել զանազան են լինում: Այսպես, որինակ, հյուսիսային ու արևելյան ուայոններում ցանքը պետք ե սկըսել սեպտեմբերի 1-ից վոչ ուշ, իսկ հարավային ուայոններում—նույն ամսի 15-ից վոչ ուշ: Հյուսիսային և արևելյան ուայոններում ցանքը պիտի տեսի 15 որից վոչ ավելի, իսկ հարավային ուայոններում—վոչ ավելի, քան 30 որ: Յերկրամասի ամենահարավային,—Կրասնոդարի, Սլավյանսկի, Սրբոյան և այլ ուայոններում ցանքը կարող ե ավելի յերկար տեսել—մինչև նոյեմբերի 1-ը:

Ցանելու հիմնական պայմանները հետևյալներն են:—Հատիկները պետք ե ցանվեն հավասարաչափ, չպետք ե մնան չցանված տեղեր, հատիկները պետք ե հողի մեջ լինեն նորմալ խորությամբ՝ 3—4 սանտիմետր: Ցանել հարկավոր ե կանոնավոր շարքերով:

Այսպիսի ցանքը կտա հավասարաչափ, միանման ծիլեր, աշնանացանը կզարդանա ու կճյուղավորվի կանոնավոր և հարմարություններ կստեղծվեն բներքահավաքման ժամանակի:

Անհրաժեշտ է նաև սահմանել ցանելու ճիշտ նորման: Տարբեր ուայոնների համար այդ նորման տարբեր կլինի: Վորպեսպի հատիկները նորմալ կերպով ծիւն ու զարգանան, չորային ուայոններում, մի հեկտարի վրա պիտի ցանել 0,3-ից մինչև 1 ցենս, իսկ հարավային, խոնավ

ուայոններում—1—3 զենք։ Յեթե ցանքի ժամկետերը ձգձգվում են և հատիկների ծլելու ունակությունը պակաս է, սերմացուն պետք ե ցանչի ավելի մեծ քանակությում։

Սերմացուն պետք ե անպայման լավ տեսակավորվի և ախտահանվի։ Տեսակավորման շնորհիվ դաշտում ավելորդ հատիկներ (գարի, վարսակ, ուլափ և այլն) չեն ցանվում, իսկ ախտահանումը պահպանում ե բույսերը փոշեսնկից։

Աշնանը արևածաղիկ ցանելիս անհրաժեշտ ե կատարել հետեյալը—ցանել խնամքով մշակված և մոլախոտերից մաքրած հողում։ Աշնանացան արևածաղիկն չի կարելի հատկացնել այնպիսի հողամասեր, վորտեղ վերջին 2—3 տարում նույն արևածաղիկն ե ցանվել։ Ցանքը կատարվում ե շարքերով, վորոնց միջև 60—70 սանտիմետր տարածություն ե թողնվում։ Ցանելու նորման մի քիչ ավելի պիտի լինի, քան նույն արևածաղիկը գարնանը ցանելիս—1 հետարի վրա 18—20 կգ։

Արևածաղիկ ցանքի ժամկետերը զուգադիպում են ցրենի ցանքի ժամկետերին, այսինքն, հյուսիսային և արևելյան ռայոններում—սեպտեմբերի 1—15-ին և հարավային ռայոններում սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբ. 15-ը։

Դաշտերը հնձի մնացորդներից (խողանից) և մոլախոտերից մաքրելը շատ մեծ ազդութեխնիկական նշանակություն ունի։ Խնդիրը միայն նրանում չե՝ վոր դաշտն այնպես մաքրելով, այլևս մոլախոտեր չեն բնի, վնասատուներն ել կվոչնչանան։ Լավ մաքրված դաշտում զգալի չափով բարձրանում ե աշխատանքի փորակը—վարն ավելի լավ ե լինում, սերմացուն կանոնավոր և հավասարաչափ ե ցանվում և այլն։

Դաշտը պետք ե մաքրված լինի մինչև աշնանային աշխատանքների սկիզբը։ Մաքրել հարկավոր ե տափաններով, վորոնք հարկավոր դեպքում նույն տեղերով պետք ե անցնեն 2—3 անգամ։ Հավաքված մնացորդները պետք ե խսկույն և յեթ այրել։

Վերջապես վերջին և ամենակարենը ազրությունումը աշնանավարն ե։

Աշնանավարն ահագին տնտեսական նշանակություն ունի։ Նախ աշնանավարի շնորհիվ բավական պակասում ե գորնանային աշխատանքների լարվածությունը։ Գարնանային աշխատանքների մի մասը կատարվում ե աշնանից, իսկ դա հնաբավորություն ե տալիս գարնանը, հենց առաջին տաք որերին աշխատանքն սկսել վոչ թե հողը վարելուց, այլ ուղղակի ցանելուց։ Իսկ հասկավոր կուլտուրաների վաղ ցանքը, ինչպես այդ հայտնի յե ամեն մի կոլտնտեսականի, —խոշոր չափով բարձրացնում ե բերքը։

Մյուս կողմից աշնանավարը լավագույն միջոցն և մոլախոտերի և վնասատուների գեմ պայքարելու համար։ Իր ժամանակին կատար-

ված վարը վերջ ե տալիս մոլախոտերի զարգացման, վնասակար միջատների համար ձմեռելու աննպաստ պայմաններ ե ստեղծում։

Վերջապես, աշնանավարը խոնավությունը կուտակելու և պահպանելու լավագույն միջոցն ե։ Իսկ մեր յերկրամասում պայքարել խոնավության համար, նշանակում ե պայքարել բերքի համար։ Աշնանը հերկած հողը, շնորհիվ իր սակերեսությի անհարթության, լավ և պահում ձյունը։ Հողի ներքին շերտերը չեն չորանում և աշնանային խոնավությունը կուտակվում—պահվում ե այնտեղ։ Գարնանը կարիք չի լինում նորից վարել ուրեմն հողի միջի խոնավությունը չի կորչում, իսկ սա արդեն մի հաստատուն միջոց ե բերքը բարձրացնելու համար։

Ահա թե ինչու կոլտնտեսությունները պիտի աշխատեն աշնանը վորքան էարելի յե շատ վարել։ Հարկավոր ե աշնանը վարել գարնանը ցանվելիք ամբողջ տարածությունը, ամբողջովին կատարել աշնանավարի պլանը։

Աշնանավարի խորությունը սովորաբար 10—12 սմ-ից ավելի չի լինում։

Աշնանավարի աշխատանքները պետք ե սկսել վորքան կարելի յե շուտ, մանավանդ հյուսիսային և արևելյան ռայոններում։ Հարավային ռայոններում վարել կարելի յե ոգոսատուից մինչև նոյեմբեր։ Այսաեղ պետք ե ինկատել ունենալ, վոր կարելի յե վարել նույնիսկ ձմեռը, յերբ բավականաչափ նպաստավոր յեղանակներ լինեն։ Որինակի համար, այս 1932 թվականին շատ ռայոններում ոգտվելով տաք յեղանակներից, հողը վարում ելին հունվար ամսում։

Հարկավոր ե պայքարել վոչ միայն այն մոլախոտերի գեմ, վորոնք բանում են մշակովի գաշտերում, այլ և նրանց գեմ, վորոնք բանում են ճանապարհների վրա, մշակվող դաշտերը՝ սահմաններում, խոպանտեղերում, փոսերում և այլն։ Բանը նրանումն ե, վոր գյուղատնտեսության մի քանի վնասատուներ ձվեր են գնում հիշյալ սահմաններում, և այլն անմշակ տեղերում բանող մոլախոտերի վրա։ Ճանապարհների ու սահմանների վրա յեղած անպետք բուսականությունը մշտական բույն ե վնասատուների ու մոլախոտերի համար, վորոնք այդ տեղերից հետող հետեւ անցնում են մշակովի դաշտերը։

Կոլտնտեսությունները պետք ե կազմակերպեն կոլտնտեսականների հատուկ խմբակներ, վորոնք պետք ե կուիլ մղեն հիշյալ տեղերում աճող մոլախոտերի գեմ։ Այս աշխատանքի համար ծախսվող աշխարհը լիովին կարդարացվեն բերքի բարձրացմամբ։

Ահա այն հիմնական ազրությունները, վորոնք պետք ե կոլտնտեսություններում իրագործվեն աշնանացանի կամպանիայի ժամանակ և վորոնք հսկայական չափերով կրարձրացնեն մեր դաշտերի բերքը։

ԷՇԿԱՆԻ ՅԵՎ ԽՆՎԵՆՏԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

Կենդանի լծկան ույժը, լրացնելով մեքենայական քարշող ույժին, նպատականարձար կերպով ոգտագործվելով, անցյալ տարվա նման այս տարի ևս կապահովի ցանքի հաջողությունը: Անա թե ինչու կարևորագույն խնդիր և լծկանի և ինվենտարի նախապատրաստությունն աշխանացանի համար: Անա թե ինչու այս հարցը պիտի դառնա կոլանտեսությունների վարչությունների, բրիգադիների և կոլանտեսականների, ինչպես և զյուղի կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների լուրջ ուշադրության առարկան:

Մեր յերկրամասում քիչ չեն այն կոլանտեսությունները, զորոնք հաջողությամբ ավարտել են անցյալ տարվա աշխանացանը և այս տարվա դարնանացանը: Ինչու վարովինետև նրանք ժամանակին մտածել են լծկանի դրությունը լավացնելու մասին: Տիմաշեյան ույյոնի կոլանտեսությունները և նրանց մեջ առանձնապես աչքի ընկնող՝ Ստալինի անվան «Զեկիստ» կոլանտեսությունը, գարնանացանի առաջամարտիկներ յեղան՝ շնորհիվ լծկան անասունների լավ խնամքի և պահպանության: Կրապոտկինի Պավլովյան ույյոնների կոլանտեսությունները, շնորհիվ առողջ լծկանների, սրանց պահպանման զործում դիմավորության վերացման, կարողացան բացառիկ հաջողություններ ձեռքբերել գարնանացանի ընթացքում:

Հեշտ ույյոնների ու կոլանտեսությունների հետ միասին կան և այնպիսինները, զորոնք ցանքը շարունակում եյին... հունիսի 15-ից հետո: Այս ույյոններում ցանքի ձգձգման հիմնական պատճառը պիտի համարել լծկան անասունների վատթար դրությունը: Որինակ, Տիմորեցկու ույյոնը, զորը յերկրամասի հետամմաց ույյոններից մեկն և գարնանացանի աշխատանքների առաջարիստում, ցույց ետակի գեպի ձին անտեսավարի և կոպիտ վերաբերմունքի մի շարք այլանդակ որինակներ: Տերնովյան գյուղլուսորհրդի կոլանտեսության մեջ գարնանացանի ժամանակ ընկան ահազին քանակությամբ ձիեր, զորովինետև դիմավրկությունն այստեղ բույն եր զբեր, ձիերին վատ եյին պահում ու խնամում, կոպիտ եյին վարփում նրանց հետ:

«Մուրճ և Մանգաղ» արտելում, անասունների կերի մեջ գտնվել եյին սատկած կենդանիների վոսկորներ: Քուսաղը տրվում եր առանց նախապես մանրելու—ուղղակի կտոր-կտոր: «Դրուժբա» կոմունայում նովո-Լեռշակովսկու մեքենատրակտորային կայանի հողամասի վարիչի կարգադրությամբ աշխատեցրին հիվանդ ձիերին, չնայելով զոր անաստաբուժական-սանիտարական հսկողության աշխատողները ամենակտուկ կերպով բողոքում եյին զբա դեմ:

Դեպի կոլանտեսային ձին այդպիսի կոպիտ, անտեսավարի վերաբերմունքի մասին ելի դեռ շատ փաստեր կարելի յի բերել: Սակայն բերված փաստերն ել բավական են հասկանալու համար, վոր մինչեւ արմատապես չփոխվի կոլանտեսականների վերաբերմունքը դեպի լծկան ձին ու յեղը, կոլանտեսությունները չեն կարող զարգացնել ու ամրապնդել իրենց տնտեսությունը:

Կոլանտեսությունները պետք ե իր ժամանակին սկսեն լծկանի և ինվենտարի պատրաստությունն աշխանացանի համար: Չի կարելի լծկանի մասին մտածել միայն այն ժամանակը, յերբ հարկավոր ե դաշտ դնալ: Լծկանի նախապատրաստությունը պետք ե սկսել աշխանացին աշխատանքներից առնվազն մեկ ամիս առաջ:

Ամենց առաջ հարկավոր ե ձիուն ու յեղան լավ հանգիստ տալ բերքահավաքման աշխատանքներից հետո և լավ կերակրել: Լծկանների կերակրումն այդ ժամանակ առանձին դժվարությունների չի հանդիպում, քանի զոր կոլանտեսություններում բավականաչափ քանակությամբ կեր կա: Այդ ժամանակ դարին, վարսակը ամբողջովին կալված կլինեն, կանաչ կերն ևս քիչ չի լինի:

Ինչ պես կազմակերպել լծկանի նախապատրաստությունն աշխանացին աշխատանքների համար:

Ամենից առաջ զորովում ե, թե վեր ձիերն ու յեղները պետք ե կատարեն աշխանացին վար ու ցանքի աշխատանքները: Մի առ մի ջոկում են տարբեր ձիեր ու յեղներ: Վարելու կամ ցանելու համար կատարանջվեն ուժեղ լծկաններ, տափանելու, սերմացու և ջուր տեղական համար—ավելի թույլերը: Բրիգադիրը, հաշվի առնելով, թե ինչպիսի լծկաններ են իրեն հարկավոր և ինչ պայմաններում պիտի կատարվի աշխատանքը, պետք ե յուրաքանչյուր տեսակ աշխատանքի կատարվի աշխատանքը, պիտի անհրաժեշտ թվով կոլանտեսականներ են կանակվում այն աշխատանքների համար, զորոնք պիտի կատարվեն առանձ լծկանի, որինակ, գաշտերի մաքրումը ձեռքով, մոլախոտերը քաղելը և այլն:

Յերբ այդեն աշխանացին աշխատանքների համար ջոկված են լծկանները, սրանց հետագա ամբողջ ինսամքն ընկնում և ամբացված կոլանտեսականների վրա: Ամենից առաջ ջոկված անասունները պետք ե լծկեն ավելի թեթև աշխատանքների համար, որինակ, կալսի ժամա-

նակ ծղոտի տեղափոխություն, ջուր կրելը և այլն: Յեթե հնարավոր չեթե աշխատանք տալ բրիգադիրը և քարշող ույժին ամրացված կոլտնտեսականը պետք է աշխատեն թեթեացնել ծանր աշխատանք կատարող անսառւների բեռնավորումը, որինակ, տեղափոխիլ վոչ թե մի տոնն հացահատիկ, այլ 6—7 ցենտներ, կրծառելորական աշխատանքի տեղությունը, աշխատանքների ընթացքում ավելի հաճախակի և յերկարատե ընդհատումներ անել: Աշնանային դաշտային աշխատանքներն սկսվելուց 7—10 որ առաջ ձիերին ու յեղներին պետք և արվի լիակատար հանգիստ, իսկ աշնանային աշխատանքներից առաջ նրանց «անցագրում» անպայման պիտի գրանցվեն հանգստի տեսդությունը, սկիզբն ու վերջը:

Ահա թե ինչ ե ասում ԽՍՀՄ կենտրոնակոմի ու Ժողկոմի վորոշումը՝ «Ձիերի աճաման ու պահպանության մասին»: —

«Մահմանել ձիերի աշխատանքի հաստատուն կարգ, վորը պետք և ապահովել ձիերի ամենորյա նորմալ հանգիստը և պարբերաբար աշխատանքից ազատելը, նրանց աշխատունակությունը վերականգնելու համար»:

Այս կարգը պետք և ամրողովին իրագործվի կոլտնտեսություններում:

Դրա հետ սիասին, լծկան անսառւները պետք եւ լավ կերպակրվեն: Աշնանային աշխատանքների նուխապատրաստության սկզբից, կոլտնտեսությունները ձիերին (յեղներին) պետք եւ տան ուժեղ և հյութալի կեր, կաղմակերպեն անսառւների կանոնավոր գիշերային արածումը:

Ամրող նախապատրաստության ընթացքում քարշող ույժը պետք եւ գտնվի անսանաբուժական աշխատողների և բրիգադիրի մշտական հսկողության տակ, վորպեսդի հնարավոր լինի իր ժամանակին բուժել հիվանդ անսառւներին, կամ դժվար բուժվողներին փոխարկենել առողջներով:

Աշխատանքի ժամանակ ամեն որ տրվող կերը պետք և ավելացվի, իսկ բրիգադիրը պարտավոր է իր ժամանակին հաշվի առնել խոտացք և կոշտ կերի լրիվ պաշարը ցանքի ամրող ժամանակվա համար և այդ պաշարն առանձնացնել իրեն ցանքի համար հատուկ փոնդ:

Նույնպիսի պատրաստություն պիտի տեսնել նաև գյուղատնտեսական ինվենտարի վերաբերմաբ:

Նայած աշխատանքների ժամկետերին, ջոկվում է համապատասխան քանակությամբ ինվենտար—գութաներ, տափաններ, ցանիչներ, սայլեր և այլն և բրիգադիրի կողմից հսկողություն և նշանակվում այդ ինվենտարի վրա:

Ինվենտարը բաշխվում է քարշող ույժին ամրացված կոլտնտեսականների վրա: Յեթե մի վորեւ կոլտնտեսական ամրացված է ձիերին,

վորոնցով պիտի աշխատեն նաև մյուս կոլտնտեսականները, ապա առաջնին արվում եւ գութան կամ բուկկեր: Յեթե այս կոլտնտեսականը վարելուց հետո մասնակցի տափանելուն, նրան տափան կիանձնվի: Աշխատանքների ձիշտ կաղմակերպումը պահանջում է, վոր ամբողջ գյուղատնտեսական ինվենտարն անպայման ամրացվի կոլտնտեսականներին:

Կոլտնտեսականները պետք է աշխատանքի համար պատրաստեն իրենց ամրացված ինվենտարը: Յեթե հարկավոր և վորեւ վերանորոգում կատարել, կոլտնտեսականը բրիգադիրի միջոցով ուղարկում է ինվենտարը դարբնոց, կամ ինքն է կատարում հարկավոր վերանորոգությունը:

Աշխատանքի համար ինվենտարը, պատրաստելիս կոլտնտեսականները պետք և ուշադրություն դարձնեն, վոր այդ ինվենտարը լավ սարքված լինի, նրա մասերը կանոնավոր միացված լինեն, վորպեսդի ամբողջ ցանքի ընթացքում մեքենաների ու գործիքների ամենակարեւոր մասերն աշխատեն անընդհատ, վորպեսդի բավականչափ պահետի մասեր լինեն, մանավանդ այնպիսիները, վորոնք հաճախ են ջարդվում: Վերջապես, կոլտնտեսականները պետք և ուշադրություն դարձնեն, վոր աշխատանքի ժամանակ ինվենտարն ապահովված լինի անհրաժեշտ հսկողությամբ, գործիքներով և նյութերով: Հաճախ մոռացվում է այնպիսի աշխատանք, ինչպիսին է գութանի մաքրումը: Մինչդեռ թաց հողերը վարելիս, յերբ գութանը չի մաքրվում, աշխատանքի արտադրողականությունն իջնում է 25 տոկոսով, մանավանդ իջնում է նրա վրա վրակը:

Զպետք և մոռանալ նաև լծասարքի մասին: Շատ կոլտնտեսություններում,—մանավանդ այնտեղ, ուր աշխատանքներին մասնակցում է բավականաչափ փորձառություն չունեցող յերիտասարդությունը, ուշադրություն չի գործվում լծասարքի վրա: Մինչդեռ, ինչպես ցույց տվեց գարնանացանի փորձը, աշխատանքի ժամանակ ձիերի վոչ լրենվածությունը և աշխատանքի պակաս արտադրողականությունը հետևանք էն լծասարքի անկանոնության: Կոլտնտեսականը շատ լավ գիտե, թե ձիու լծասարքի անկանոնությունը վորքան և ազդում նրա աշխատանքի արտադրողականության վրա:

Ահա թե ինչու թե կոլտնտեսականները և թե բրիգադիրները պետք և ուշադրություն դարձնեն, վոր լծասարքը պատրաստվի, նրա վերանորոգման համար աշխատողներն ապահովված լինեն անհրաժեշտ նյութերով:

Իհարկի, ինվենտարը պատրաստելիս, կոլտնտեսականները չեն կարող նախատեսել բոլոր մանրամասնությունները: Շատ բան կարող է սուացվել աչքաթող արվել: Այս պատճառով հարկավոր և ոգնություն կաղմակերպել գաշտում աշխատող կոլտնտեսականներին:

Աշխատող բրիգադն ամենից առաջ պետք է ապահովված լինի դարձնոցի ոգությամբ: Յեթև անկարելի յև դաշտային բրիգադներին սպասարկելու համար շրջիկ գալրնոցներ կազմակերպել ապա դոնե պետք է լինեն արհեստանոցներ՝ բրիգադների պատվերներն արագությամբ կատարելու համար: Արհեստանոցը պետք է իր ժամանակին ձեռք բերի ածուխ, նյութեղեն, պահեստի մասեր, ունենա փորձված վարպետներ, վորպեսզի վորքան կարելի յև քիչ ժամանակ կորցնի ինվենտարի վերանորոգման վրա:

Դաշտերում աշխատող կոլտնտեսականներից պետք է նշանակվեն այնպիսիները, վորոնք կարող են արտադ և լավ վերանորոգել լծասարքը:

Այսպիսով աշնանացանի հաջողությունը խոշոր չափով կախված կլինի այն հանգամանքից, թե բրիգադն ու կոլտնտեսականները վորչմի կվերացնեն դիմազը կությունը՝ քարշող ույժի և ինվենտարի ոգտագործման մաջ, վորչափ իր ժամանակին և ճշտապահութեամբ կախվի քարշող ույժի և ինվենտարի նախապատրաստությունը և, վերջապես, վորչափ լավ կկազմակերպվի դաշտում աշխատող բրիգադներին ողասարկումը: Աշխատանքի այս վճռական, հիմնական մոմենտների շուրջը պետք եւ դորահավաքվի կոլտնտեսային հասարակայնությունը, կոլտնտեսության ամբողջ դեկավրությունը և կոլտնտեսային հոծ մասսաները:

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշնանային աշխատանքներին նախապատրաստվելու տեսակետից վոչ պակաս նշանակություն՝ ունի նաև կադրերի պատրաստության խնդիրը: Այստեղ մենք ինկատի ունենք բոլոր կոլտնտեսականների պատրաստությունը, վորոնք պետք եւ անմիջական մասնակցությունը ունենան աշնանային դաշտային աշխատանքներին:

Այս կամ այն տնտեսական կամպանիայի համար, կոլտնտեսային կադրերի պատրաստության նշանակությունը հսկայական է: Շատ հաճախ կոտնտեսականների և դեկավար կազմի լավ պատրաստությունն ապահովում է հանձնարարված աշխատանքի հաջողությունը, ապահովում է այդ աշխատանքի բարձր վորակն ու նրա կատարումը կարձ ժամկետերում:

Իսկապես, յեթև կոլտնտեսականները, խմբակավարներն ու բրիգադիրները լավ պատրաստված լինեն, յեթև նրանք պարզ պատկերացնեն իրենց կատարած աշխատանքի նշանակությունը անտեսության զարգացման համար, յեթև նրանք լավ ըմբռնեն ամեն մի ադրումիջուցառման նպատակը և այլն—պարզ ե, վոր զործը հաջող կզնա:

Այս տարի, ինչպես մենք արդեն շեշտեցինք, Տիխորեցկու և այլ ուայոններում հաղարավոր հեկտար կոլտնտեսային դաշտեր վնասվեցին

միջատներից: Կոլտնտեսականներին և բրիգադիրներին տրված հարցերից պարզվեց, վոր նրանք չգիտեն այդ միջատների յերեան գալու պատճառը, չգիտեն, վոր դա հետեանք և աշնանը հողը այլանդակ մշակելու, ցորենը չվարած խողանի վրա ցանելու:

Ահա թե ինչու կոլտնտեսային կազմերի-բրիգադիրների, խմբակավարների ու կոլտնտեսականների պատրաստությունը պետք է մեծ տեղ բռնե աշնանային դաշտային աշխատանքների նախապատրաստության առաջարկում:

Առաջին հերթին կոլտնտեսականներին պիտի բացառ բել աշնանային դաշտային աշխատանքները իր ժամանակին կատարելու տնտեսագործական նշանակությունը, բացարել, վոր այս կամպանիայի ժամանակին: Իրագործումը մի հիմնական միջոցառում եւ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար: Հետեւյալ մոմենտը, վորի վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը դա աղբոտեինիկական պահանջներն են, վորոնք պիտի կատարվեն աշնանային աշխատանքների ընթացքում:

Ցուրաքանչյուր կոլտնտեսական պետք է լավ ըմբռնե ագրոտեխնիկական մինիմումը, նրա կիրառման արդյունքները: Անհրաժեշտ եւ մանրամասն կանգ առնել աշնանավարի վրա, ցորենի, աշնանացան արևածաղկի ցանքերի համար հողը մշակելու հացահատիկների զտման ու ախտահանձան, սերմացույի ցանքի խորության, մոլախոտերի և դաշտային վնասատուների դեմ պայքարելու խնդիրների վրա:

Այս խնդիրների ըմբռնման ամենալավ միթուղը սեփական սխալների ու թերությունների ուսումնասիրությունն եւ—վորոնք տեղի յեն ունեցել անցյալ տարվա ցանքի ժամանակ: Ցուրաքանչյուր կոլտնտեսության միջ քիչ չեն այդ սխալներն ու թերությունները: Մյուս կողմից հարկավոր է մանրամասն ծանոթանալ հարեան, լավագույն կոլտնտեսությունների փորձի հետ, վորոնք աշխատանքի ճիշտ կազմակերպման հետեանքով բարձր բերք են ստացել:

Վերջապես, յերբորդ հարցը, վորի վրա պիտի կենտրոնացնել կոլտնտեսականների ուշադրությունը, այդ ույժերի դասավորությունն եւ աշխատանքի կազմակերպումը: Մենք արդեն այս գրքում շեշտել ենք, թե ինչ նշանակություն ունի աշխատանքի ճիշտ կազմակերպումը գործի հաջողության համար: Հիշենք ուրեմն, վոր առանց ույժերը ճշտությամբ դասավորելու և աշխատանքը լավ կազմակերպելու դրական արդյունքներ չեն ստացվի:

Զպետք է մոռանալ, վոր աշխատանքները ճիշտ կազմակերպված կինեն միայն այն գեղարքում, յերբ յուրաքանչյուր կոլտնտեսական պիտենա իր տեղը, որական և սեղոնային առաջադրությունները և սրբանց կատարման յեղանակները:

Միանդամայն պարզ ե, վոր աշխատանքի կազմակերպման և ույշերի դասավորության հարցերը քննելիս, գլխավորապես ուշադրություն պիտի դարձնել քարշող ույժի և ինվենտարի պատրաստության, խըմբակների աշխատանքի կազմակերպման, դիմագրկության վերացման, արտադրույթի նորմաների մշակման, աշխատանքի գնահատման ու հաշվառման և աշխատանքն ըստ քանակի և վորակի ընդունելու վրա:

Այս բոլոր հարցերի գործնական մշակումն անպայման կրածը աշխատանքների արդյունավետությունը:

Կոլտնտեսականների զանազան կարգերի պատրաստությունը պետք է կատարվի զանազան կերպ, թե ըստ ծրագրի և թե դրազմունքի մեթոդների: Որինակի համար, չի կարելի միասին պատրաստել բրիգադիրներին, խմբակավարներին, հաշվառիչներին և կոլտնտեսականներին: Պարզ ե, վոր բրիգադիրին բոլորովին այլ պահանջներ են առաջարկում, քան հաշվառիչին կամ շարքային կոլտնտեսականին:

Բրիգադիրը պետք է պատրաստվի այնպես, վոր նա կարողանա կազմակերպել ամբողջ բրիգադի աշխատանքը, աշնանային ամբողջ կամպանիայի ընթացքում զեկավարել այդ աշխատանքը, գործական ուղղություն հասցնել կոլտնտեսականներին, ժամանակին հայտարկել և ուղղել աշխատանքի ընթացքում յեղած սիրաները: Բրիգադիրների, —արտադրության այդ անմիջական կազմակերպիչների և զեկավարների պատրաստությունը պետք է մի առանձին խնամքով կատարվի:

Խմբակավարներին պատրաստելիս պետք է նրանց ըմբռնել տալ ույժերի դասավորության փորձը, աշխատանքի կարգավորումը խորհրդակում: Պետք է նրանց ծանոթացնել հիմնական ազրուելինիկական պահանջների հետ, վորոնք կատարվելու յեն աշնանային աշխատանքների ժամանակ: Անհրաժեշտ է լավ ծանոթացնել մեքենաների և գործիքների աշխատանքի, նրանց կարգի բերելու, ինվենտարի պատրաստության և վերանորոգման հետ: Խմբակավարը պետք է հիմնովին գիտենա, թե արտադրույթի ինչ նորմաներ են սահմանված, ինչպես դըրանցել արտադրույթը կարգավորելի մեջ և այլն:

Շարքային կոլտնտեսականը պիտի պատրաստվի այնպես, վորպեսզի ապահովի կանոնավոր, գործնական աշխատանք, —վարը, տափառումը, ցանքը, դաշտերի մաքրումը և այլն: Կոլտնտեսականներին պատրաստելիս պետք է նրանց գործնական վարժություններ հաղորդել, գործնականապես ցույց տալ այս կամ այն աշխատանքը, արտադրույթի նորմաների մշակումը, աշխատանքների գնահատումը: Պետք է աշխատել, վոր կոլտնտեսականներն ըմբռնեն ազրուելնիկական հիմնական կանոնները:

Վերջապես, կոլտնտեսականների պատրաստության նպատակն է նրանց լավ հասկացնել բրիգադներում կիրառվող արտադրույթի նոր-

մաները, աշխատանքների կարգը, աշխառերի հաշվելը, լավ աշխատանքի համար աշխառերն ավելացնելու և վատ աշխատանքի համար —պակասեցնելու կարգը:

Պատրաստության ժամկետերը սահմանվում են նայած այն հանգամանքին, թե ինչքան ժամանակ է պետք այս խնդիրների յուրացման համար: Բրիգադիրներին պատրաստելու համար յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք է կազմակերպել վոչ պակաս, քան 3 որտեղությամբ կոնֆերանսներ: Ինարկե սա չի նշանակում, վոր այդքան կարճ ժամանակամիջոցում բրիգադիրները ձեռք կրերեն անհրաժեշտ գիտելիքներ: Բրիգադիրները պարտավոր են սիստեմատիկորեն աշխատել իրենց վորակը բարձրացնելու համար: Աշխատանքներն սկսվելուց մոտ մեկ ամիս առաջ, բրիգադիրն ինքնուրույն կերպով պետք է մշակե այն հարցերը, վորոնք կապված են աշնանային աշխատանքների հետ: Կոնֆերանսի ժամանակ նա միայն վերջնականապես կձեւակերպե, կարգի կրերե և տեղական պայմաններին կհարմարեցնե առաջուց ձեռք բերած գիտելիքները:

Խմբակավարների և հաշվառիչների համար բավական է գումարել մի որյա խորհրդակցություններ, իսկ կոլտնտեսականների պատրաստության համար պետք է ոգտագործել բրիգադի արտադրական խորհրդակցությունները, վորոնք պատրաստման սեղումում պետք է գումարվեն վոչ պակաս, քան 2—3 անգամ: Արտադրական խորհրդակցություններում քննության հիմնական նյութը պիտի լինի ագրոպլան-կարգավորը:

Կաղերի պատրաստությունն ամենակարևոր պայմանն է աշխատանքները հաջող կատարելու համար: Այս պատճառով կաղերի պատրաստմամբ շահագրգուված են կոլտնտեսություններն սպասարկող բոլոր կազմակերպությունները և հենց կոլտնտվարչությունները: Կոլտնտեսականներին պատրաստելու համար, մեքենա-տրակտորային կայանները պետք է տան իրենց լավագույն ույժերին —գյուղատնտեսներին, հողամասերի վարիչներին, կազմակերպիչներին և հաշվեգիտական աշխատողներին: Կոլտնտեսության վարչությունն այս աշխատանքի համար պետք է արամադրե լավագույն, վորձառու կոլտնտեսականներին:

Կաղերի պատրաստությունը պետք է դառնա կոլտնտեսական կուսակցական ու կոմյերի տարական բջիջների մշտական խնդիրը: Կոլտնտեսականների մեջ աշխատելու համար այդ բջիջները պետք է տրամադրեն ամենապարաստված կուսակցականներին:

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԸ ՎՃՌՈՒՅԻՄ Ե ՑԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Աշխատանքի կազմակերպման կարեռագույն ողակը պետք է լինի բրիգադը, կենտրոնը՝ նպատակահարմար և գտնում՝ լավագույն գյուղատնտեսական

արտելների փորձի հիման վրա, կոլտնտեսություններում կազմակերպել այնպիսի բրիգադներ, վորոնք ունենան կոլտնտեսականների մշտական կազմ, և իրեն կանոն, այսպիսի բրիգադները կատարեն գյուղատնտեսական բոլոր հիմնական աշխատանքները՝ փող արվա ընթացքում վորոշ հողամասներիվը (հենակումի փորչումից՝ «կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման վերաբերյալ հերթական միջոցառումների մասին»):

Գարնանացանի և քաղհանի աշխատանքների պրակտիկան միանգամայն պարզ կերպով աշխատուցեց, թե ինչ խոշոր նշանակություն ունի բրիգադը՝ աշխատանքները հաջողությամբ կատարելու տեսակետից: Այն կոլտնտեսությունները, վորոնք կարողացան ճիշտ կազմակերպել արտադրական բրիգադը, այդպիսիները բացասիկ հաջողություններ ունեցան գարնանացանի և քաղհանի կամպանիաներում, ցույց տվեցին աշխատանքի բարձր արտադրողականության և վորակի լավ որինակներ:

Ընդհակառակն, այն կոլտնտեսությունները, վորոնք բրիգադ-թաղերը սեքենայորեն վերածեցին արտադրական բրիգադի, նրանք, այդ սխալ կառուցված բրիգադները, կարևորագույն տնտեսական-քաղաքական առաջարրանքները չափազանց վատ կատարեցին, իսկ առանձին կոլտնտեսություններում՝ նույնիսկ վիճեցին:

Աշխատանքանի կամպանիայում, կոլտնտեսությունների հիմնական խնդիրն են՝ ճիշտ կազմակերպել բրիգադները՝ խնտ արտադրական սկզբունքով, պայքարել՝ բրիգադներ կազմակերպելիս, հավասարեցում մտցնելու ամեն տեսակ փորձերի գեմ, վերացնել գիմազլիությունն արտադրական բրիգադներ կազմակերպելով:

Շատ կոլտնտեսությունների ստուգումը ցույց ե տվել վոր բրիգադներ վերակառուցելու բազմաթիվ ձևեր լինելու դեպքում, կոլտնտեսությունների մեծ մասում հայտարերված են սի շարք կարևոր թերություններ, վորոնք բրիգադների գործունեյության մեջ խոշոր նշանակություն ունեն: Անհրաժեշտ ե սրել ուշադրությունն այս թերությունների վրա: Դրանց գեմ վճռականորեն պիտի պայքարել և աշխատել լիովին վերացնել դրանց: Բերենք սի քանի որինակներ այնպիսի խեղաթյուրությունների, վորոնք թույլ են տրված բրիգադներ կազմակերպելու ժամանակ:

Ստավրովիլ ռայոնի Զանգովյան դիվիզիայի անվան կոլտնտեսությունն այսպես մոտեցավ բրիգադի կազմակերպմանը. 6 բրիգադ-թաղից ջոկեց 6 դաշտաբուծական բրիգադ, վորոնցից յուրաքանչյուրը բաղկացած եր 60 աշխատունակ կոլտնտեսականներից և 10 անշարժականներից:

Բրիգադներ կազմակերպելու ժամանակ, այս կոլտնտեսություններում խոշոր սխալ կատարվեց—այն ե՝ կոլտնտեսականները և քաշող ուժը հավասար կերպով բաժանվեցին բրիգադների միջև:

Կոլտնտեսությունները	Դաշտաբուծական բրիգադների թիվը	Կոլտնտեսականների կազմը	Դրանց թվում			
			Համարակառնությունը	Համարակառնությունը	Համարակառնությունը	Համարակառնությունը
«Խորհրդների իշխանությա».	3	65	22	39		40
			26	43	4	
Զանգարյան դիվիզիայի						
անվան	6	70	40	20	10	46
Վոյկովի անվան	5	50	19	31	—	42

Այսպիսով վերոհիշյալ կոլտնտեսություններն աշխատեցին ըստեղծել բոլորովին միատեսակ բրիգադներ, թե կոլտնտեսականների կազմով և թե քաշող ուժով. իսկ այն կոլտնտեսություններում, ուր ձիերի հետ միասին կային նաև յեզներ, զրանք ևս հավասար բաշխը-վեցին բրիգադների միջև: Կոլտնտեսականների կազմը պատահաբար եր վորոշում, առանց արտադրական պահանջների հետ վորեւ կապունենալու: Որինակ՝ Վոյկովի անվան կոլտնտեսության մեջ ամենամեծ պահանջի համաձայն, իսկ Զանգարյան դիվիզիայի անվան կոլտնտեսության մեջ՝ Ռայկովսկի միություններության դիրեկտիվի համաձայն:

Բրիգադներն այս յեղանակով կազմակերպելու դեպքում, անխուսափելի յեր նաև հողամասերի և ցանքող բոլոր մշակույթների հավասար բաշխումը: Հենց նույն կոլտնտեսություններում դա կատարվում եր այսպես. (աես 50-րդ եջի աղյուսակը):

Մշտկույթները		Փարիզիան կոմմոնալի անվան կոլտնասություններն						6-րդ գանգարյան ղեղիղիակ անվան կոլտնասություններն						
1 բրի- գաղ	2 բրի- գաղ	1 բրի- գաղ	2 բրի- գաղ	3 բրի- գաղ	4 բրի- գաղ	5 բրի- գաղ	6 բրի- գաղ	1 բրի- գաղ	2 բրի- գաղ	3 բրի- գաղ	4 բրի- գաղ	5 բրի- գաղ	6 բրի- գաղ	
Աշխանցան ցուեն . . .	457	457	636	636	636	636	636	133	134	133	133	133	—	—
Զարի	156	102	85	133	133	134	134	—	—	—	—	—	75	75
Հարսակ	—	—	48	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Կորիկ	—	—	65	143	143	143	143	144	144	144	144	144	—	20
Արևածաղկի	97	97	97	26	27	27	27	—	—	—	—	—	77	77
Յեղիպատրոքնեն	99	99	99	—	—	—	—	—	—	—	—	—	93	94
Դեհագերշահեկ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Շաբարի հակոնեղ	95	93	95	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Բասան	—	—	24	23	21	21	21	21	21	21	21	21	20	20
Մաքոր ցել	—	—	—	—	157	157	157	156	156	156	156	156	—	—
Խառնք	—	—	—	—	142	142	142	172	172	167	167	167	7	21
Բամբակ	—	—	—	—	114	114	114	113	113	113	113	113	—	—
Դարձանացան ցորեն	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	67	67
Ալ մշտկույթներ	—	—	—	—	126	126	126	127	127	127	127	127	240	48
Հնդկամենը	904	920	921	1498	1499	1500	1502	1497	1497	1496	1496	1496	387	387

Ինչպես յերկում ե՞ աղյուսակից, այս կոլտնտեսությունները ջոկել են բոլորովին հավասար բրիգադային հողամասեր՝ բրիգադիրին և բրիգադին տալով բոլորովին ցանքային միևնույն առաջաղբանքներ։ Բոլոր գեղքերում կոլտնտեսություններին հաջողվեց անցկացնել հողամասերի այսպիսի հավասարեցումներ։

Ինչպիսի հետևանքներ ստացվեցին այսպիսի կազմակերպումից։ Ներքեւ բերված աղյուսակից հեշտ և տեսնել այդ հետևանքները։

«Խորհուրդների իշխանություն» կողման.	6-րդ գանգարյան ղեղիղիակ անվան		
	1 բրի- գաղ	2 բրի- գաղ	3 բրի- գաղ
Քանի տեղում և զետեղ- ված բրիգադի հողա- մասը . . .	5	3	6
Հողամասերի թիվը հաս- կավորների հողում . . .	2	1	4
Հողամասերի թիվը շարքա- հերկերի հողում . . .	3	2	2
Ամենաքաղաքավորու- թյուն հասկավորու- թյուն հասկավորու- թյուն հողամասերի միջև . . .	1 կմ	—	3 կմ
Ամենաքաղաքավորու- թյուն շարքահերկ բույ- սերի հողամասերի միջև . . .	6 կմ	3	11,5
Ամենաշատ հասկավորու- թյուն շարքահերկ բույ- սերի հողամասերի միջև	1,5 կմ	1	3
Հնդկամենը . . .	4	3	5

Այսպիսով բրիգադային սխալ կազմակերպելու պատճառով, նրանցից յուրաքանչյուրն ստացավ մեկը մյուսից քիչ տարբերությամբ հողամա-
սեր, փորուց միջև հեռավորությունը հասնում է մինչև 11,5 կիլոմետ-
րի։ Այս պայմաններում բոլորովին հնարավոր չե աշխատանքը ճիշտ կազմակերպել և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել։

Մենք բերինք միայն մի մասն այն թերությունների, վորոնք ան-
միջապես վերաբերում են բրիգադային հողամասերի կազմակերպմանը
և բոլորովին չեն շոշափում այնպիսի թիվություններ, ինչպիսին են
բրիգադին ամրացված կոլտնտեսականների հոսունությունը, առանց
բրիգադիրի գիտության բրիգադից քաշող ուժ վերցնելը, ուրիշ բրի-
գադներին և կոլտնտեսություններին ողնելու համար բրիգադին իր
հողամասից զուրս բերելը և այլն։

Բրիգադների սխալ կազմը վատ անդրագարձավ գարնանացանի,
անավանդ քաղաքանի աշխատանքների վրա։ Բրիգադի անհաջող կազմը

մշակույթների բազմազանությունը, հողերի չափազանց ախտոսա լինելը վերին աստիճանի վատ անդրադարձավ աշխատանքի արտադրողականության, վորակի և աշխատանքների կատարման ժամկետների վրա:

Կոլոնտեսությունների մոտակա խնդիրն եւ վերակառուցել բրիդադները, ուղղել կատարված սխալները:

Սակայն, բրիդադների լիակատար վերակառուցումը չի կարելի կատարել աշխանացանի կամպանիային: Զի կարելի վերակառուցել բրիդադը կոլտնտեսականների կազմի, արտադրության միջոցների և քաշող ուժի տեսակետից, չի կարելի այս փոփոխությունը կատարել նրա համար, վոր աշխանացանի սկզբին ըրեգազը պետք եւ վերջացնի 1931 թվի բերքի հավաքման և իրացման աշխատանքները: Բրիդադը պետք եւ ալվարտի այն բոլոր աշխատանքները, վորոնք նախատեսված են արտադրական առաջադրանքներով և վորոնց կատարման համար ամրացվել եւ կոլտնտեսականների մշտական կազմ, հատկացվել են արտադրության անհրաժեշտ միջոցները: Բրիդադների կազմի փոփոխումն այս ժամանակաշրջանում մեծ մասամբ վիճեցնում եւ աշխատանքները: Իսկ ինչ վերաբերում եւ բրիդադային հողամասների, այսուել արդեն խընդիրն այլ կերպարանք եւ ընդունում: Աշխանավարի համար բրիդադների վերակառուցումը, յեթե վոչ լրիվ, գոնե մասամբ՝ անհրաժեշտ եւ անցկացնել՝ նախքան աշխանային աշխատանքներն սկսելը:

Աշխանացանը բաց եւ անում տնտեսական նոր տարի: Աշխանացարը մեծ մասամբ նախորշում եւ նաև գարնանացան բույսերի ցանքսատարածությունների բաշխումը բրիդադների միջև: Յեթե թույլ տրվի, վորպեսզի աշխանավարը կատարվի նախկին բրիդադների կողմից, ապա դա նշանակում եւ կրկնել առաջնուց կատարված սխալները: Ահա թե ինչու նախքան աշխանացանն սկսելը, կոլտնտեսությունները պարտավոր են վորոշելու աշխանավարի համար նոր հողամասները:

Հողամասները վորոշելիս նկատի պիտի ունենալ հետեւյալը.

1. Այն հողամասները, վորոնք հատկացված են աշխանացան մշտակույթների և աշխանավարի համար, պետք եւ կազ ունենան նաև կոլտնտեսության մեջ մացված ցանքսափոխությունների հետ:

2. Յուրաքանչյուր բրիդադի հողամասները պետք եւ գտնվեն միևնույն վայրում և միայն ծայրահեղ դեպքում կարելի յեւ հողամասներն ընտրել յերկու վայրերում:

3. Անհրաժեշտ եւ վճռել դարնանացան բույսերի համար հողամասներ ջոկելու հարցը՝ աշխանացան մշակույթների համար հողերը հատկացնելիս, անհրաժեշտ եւ նախատեսել գարնանացան մշակույթների համար բրիդադներին մոտ տեղերում հող տալու խնդիրը:

4. Աշխանացանի համար բրիդադային հողամասներ հատկացնելիս, անպայման պետք եւ ուսումնասիրվեն նախորդող մշակույթները, թույլ

չտալ, վոր աշխանային կուլտուրաները ցանվեն հասկավոր բույսերի հողերում և միայն բացառիկ դեպքերում կարելի յեւ ցանել ընթացիկ տարում հասկավոր բույսերով ցանված հողամասներում:

Դորձնականորեն ինչպես կարելի յեւ իրագործել այս պահանջները:

Բերենք ցանքսափոխության և բրիդադային հողամասների տեղափոխում սքիման կոլտնտեսություններից մեկում:

Բրիգադային հողամասերի դասավորման սիմվան

Բրիգադա 1—1000 հեկտար, № 1, 2, 3, 8, 9, 10, 11, 15, 16, 17, 18 վանդակներ:

Բրիգադա 2—1000 հեկտար № 4, 5, 6, 7, 12, 13, 14, 19, 20, 21, վանդակներ:

Բրիգադա 3—1090 հեկտար, № 22, 23, 24, 25, 29, 30, 31, 32, 36, 37, 38, 39, 40 վանդակներ:

Բրիգադա 4—1000 հեկտար, № 26, 27, 28, 33, 34, 35, 41, 42, 43, 44 վանդակներ:

Ցանքսատարածությունների բաժանումն ըստ մօկույթների

	Աշխանացան	Շարքահերկ	Գարնանացան	Առվույտ
1-ին բրիգադն ունի	3, 10, 11, 17, 18 Ընդամենը .	1, 2, 8, 9 500 հկ	15, 16 400 հկ	200 հկ
2-րդ բրիգադն ունի	4, 5, 12, 19 Ընդամենը .	6, 7, 13, 14 400 հկ	20, 21 400 հկ	200 հկ
3-րդ բրիգադն ունի	29, 30, 36 Ընդամենը .	24, 25, 31, 32 300 հկ	22, 23 400 հկ	37, 38, 39, 40 190 հկ
4-րդ բրիգադն ունի	41, 42, 43, 44 Ընդամենը .	26, 33, 34, 35 400 հկ	27, 28 400 հկ	200 հկ

Բերված սքեման մեկն եւ այն բազմաթիվ սքեմաներից, վոր կարելի յեւ կազմել յուրաքանչյուր կոլտնտեսության համար: Որինակ, ըեւ մեծացնել բրիգադների թիվը՝ 5-ից սինչեւ 6, աշխանացան կարելի յեւ մեծացնել համար հողեր ընտրել յերկու ցանքսափաշտերում և այլն: Սա կոլտնտեսային կազմակերպչի գործն եւ, վորը պետք եւ հաշվի առնի կոլտնտեսության բոլոր պայմանները և նրանց համապատասխան բաժանի մշակույթները և ջոկի բրիգադային հողամասները:

Վերոհիշյալ սքեման տվել եւ հետեւյալ առավելությունները:

1. Ցանքսափոխության դաշտը չի մանրացված, այլ զգալի չափով մեծացվել եւ, վորպիսին լրիվ հնարավորություն եւ տալիս կանոնավոր ոգտագործելու տրակատորաշարքի աշխատանքը այսպես, որինակ աշխանային հողը յերեք տեղում բաժանված ե—300, 400 և 900 հեկտար հողա-

Ճասերիւ Շարքահերկի հողը յերեք տեղում—400, 400 և 300 հեկտար և գարնանացան բույսերինը յերկու տեղում—400 հեկտար հողամասի:

2. Բրիգադների հողամասերը կիստրոնացված են մի տեղում բավականաչափ մեծ տարածությամբ և 3—4 կիլոմետր յերկարությամբ ու լայնությամբ։ Հետևաբար, հողամասերի հարմար տեղափորումն աշխատանքների համար ամենալավ պայմաններ ե ստեղծում։

Հողամասերի այսպիսի զետեղումը տվյալ որինակի համաձայն՝
ամենանատակահարմարն է հանդիսանում:

Անհրաժեշտ է կանգ առնել բրիգադների համար ընտրված հողամասերի մեծության վրա։ Դաշտային բրիգադների հողամասերի մեծությունը կախում ունի մի շարք պայմաններից։

Հացահատիկային բույսեր մշակող ռայոններում բրիգադային հողամասերը կարող են ավելի մեծ լինել քան այն ռայոններում, զորոնք ավելի շատ շարքահերկ-տեխնիկական բույսեր են մշակում։ Մեքենա-տրակտորային կայաններով սպասարկվող կոլտնտեսությունների բրիգադային հողամասերը պետք է ավելի մեծ լինեն քան այն կոլտնտեսությունների հողամասերը, զորոնք աշխատում են ձիով:

Այս տարգա փորձից յեկնելով, կարելի յե առաջարկել 400—800 հեկտար մեծությամբ բրիդաղային հողամասեր, իսկ բացառիկ դեպքերում—1000 հեկտար: Հողամասի այսպիսի մեծությունը հնարավորություն է տալիս պարզուող կերպով կազմակերպելու աշխատանքը՝ շարքային բրիդաղիրի ուժին չափ, վորպիսի հանգամանքը ներկայումս ինկատի պիտի առնել:

Հողամասները վորոշելով, կոլտնտեսությունը յուրաքանչյուր բրիգադին պիտի հանձնսի 100 հեկտարանոց այն հողերի ցուցակը, վորոնք մտնում են նրա հողամասում, միաժամանակ ցույց տալով նախորդող մշակույթները։ Այս դեպքում պիտք է մատնանշել վոր կոլտնտեսությունը պարտավոր ե կանոնավոր հաշվի առնելու բույսերի մշակության համար յուրաքանչյուր վանդակի ոգտագործումը։ Բըիգազիբը, սուանալով բրիգադին հատկացված հողամասի և այդ հողամասում գտնվող վանդակների թվի մասին ցուցմունքներ, պիտք է մանրամասն ուսումնասիրի այդ հողամասը։ Հենց տեղում պիտք ե ստուգել սահմանները, ճանապարհների դրությունը, վորեւ բույսով ցանքած ամեն մեկ վանդակի վիճակը, նրանց մաքուր կամ աղտոտված լինելն և այլն։ Հողամասները վորոշելուց, ստուգելուց և բրիգադիներին հանձնելուց հետո, կոլտնտեսությունը կարող է ձեռնարկել աշխատանքի կազմակերպմանը։

ԲՐԻԳԱԴԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ

Կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականությունը և աշխատանքի վրանկո զգալի չափով կախում ունի նրանից, թե ինչպես

Ե սպասարկվում բրիգադը զաշտում Սպասարկումն ինչքան լավ լինի, արտադրողականությունն ել ավելի բարձր կլինի: Իսկ յեթե սպասարկումը վատ հիմքերի վրա յե գրված, այդ դեպքում իջնում են աշխատանքի թե արտադրողականությունը և թե վորակը:

Սշնանային աշխատանքներով զբաղված բրիգադը, իրեն կանոն, գաղտն և մոռմ ամբողջ սեղոնի ընթացքում, Այժմ յերկակայեցեք այս պիսի մի գեղք, վոր կոլտնտեսությունը չի ապահովել բըիգաղին հար- մար ոթեանով, չի կառուցել կոլտնտեսականների համար ապաստա- րան, վորով նրանք պաշտպանվեյին աննպաստ յեղանակներից և գի- շերվա ցրտերից։ Այս գեղքում աշխատանքի ի՞նչ արտադրողականութ- յուն կարող ե լինել բըիգաղում։ Մի շարք կոլտնտեսություններում ժամացույցով կատարված հետո զոտությունները ցույց են տալիս, վոր առաջնորդյան կոլտնտեսականներին դաշտում հավաքելը (ձիերին լծելը, ինվենտարների պատրաստելը, կոլտնտեսականներին հավաքելը և այլն), միջին հաշվով տերում ե 20-ից մինչև 40 ըսպե։ Մոտավորապես նույնքան ժամանակ են խլում նաև ձիերին լծելը և ինվենտարներն աշխատանքի գցելը։ Այսպիսով, կոլտնտեսականների առավոտյան դաշտ հավաքվելը, հաշվի առնելով նաև գյուղից—դաշտ գալը, խլում ե 40-ից մինչև 80 ըսպե ժամանակ։ Խոկ բոլորը միասին վերցրած ժամա- նակը անուղղակի աշխատանքի համար կրճատում են մոտավորապես 10—15 տոկոսով։ Պարզ է, վոր մոտավորապես նույնքան տոկոսով կը ։ ճատվում ե նաև աշխատանքի արտադրողականությունը։ Այժմ դրան պիտի ավելացնել նաև ընդմիջումի ժամանակ կոլտնտեսականների վատ պայմաններում հանգստանալը հաճախ խոսնավ հողի վրա, ցուրտ յեղա- նակին։ Այս պայմաններն ավելի և իջեցնում են արտադրողականու- թյունը և վատացնում աշխատանքի վորակը։

Նման ազդեցություն աշխատանքի արտադրողականության և
վորակի վրա թողնում են նաև հասարակական սննդի վատ կազմակեր-
պումը: Հասարակական սնունդն ինչքան վատ կազմակերպված լինի,
կոլտնտեսականներն այնքան ավելի հաճախ են գիշերում գյուղում:
Դաշտից գնալը և աշխատանքի վերադառնալը վոչ միայն գնացող
կոլտնտեսականի աշխատանքի ժամերն են կրծատում, այլ նաև այն
կոլտնտեսականի ժամերը, զորը մշտական աշխատում են այս կոլտնտե-
սականների հետ միասին:

Այս բոլորը պետք ե ստիպի կուտնատեսությանը լուրջ զբաղվել՝ գաշտում աշխատող բրիգադներին և կուտնատեսականներին սպասարկելու գործը ճիշտ կազմակերպելու խնդրով։ Եթիւ և առաջ կուտնատեսության վարչությունը պետք է ապահովի բրիգադին հարմար, տաք և անձրևներից

պաշտպանող իջևաններով: Բրիգադիրը կոլտնտեսականների հետ միասին ընտրում ե տեղը և իր հայեցողությամբ ե կառուցում իջևանը:

Իջևան կազմակերպելու համար կարող են ոգտագործվել հատուկ փոքր վագրններ, կոլտնտեսության այն շենքերը, վորոնք հեռու չեն ըրիգադի աշխատանքի վայրից: Հաճախ բրիգադներն ստիպված են նոր շենքեր կառուցելու: Այդ շենքերի կառուցման համար անհրաժեշտ ե լիովին ոգտագործել տեղական շինարարական նյութերը, ինչպիսին են անտառանյութերը, քարերը, հարդը և այլն: Սովորաբար աշնանը այս նյութերի պակասը չի նկատվում: Միայն պետք ե նպատակահարմար ոգտագործել այն: Իջևանի կազմակերպումը ժամանակին պետք ե սկսել: Զի կարելի այս գործը հետաձգել մինչեւ աշխատանքն սկսելը: Այս գեղքում իջևանը շտապով, մի կերպ կառուցվում ե և բոլորովին անպետք ե դուրս գալիս աշնանային հարատև ոգտագործման համար: Ավելի լավ ե հատկապես մեկ-յերկու որ վատնել բայց իջևանը կառուցել հարմար և ամուր:

Իջևանի կառուցումը պետք ե նախատեսվի ազրովան-կարգագրով և կառուցվի վոչ ուշ՝ քան դաշտային աշխատանքներն սկսելուց մի շաբաթ առաջ:

Կոլտնտեսության վարչությունը պարտավոր է բրիգադիրի միջով իջևանի կառուցումն ապահովել անհրաժեշտ սարքավորումներով—ամանեղենով, նստարաններով, լապտերներով, մեքենաներով, վառելանյութով և ուրիշ անհրաժեշտ պարագաներով:

Իջևան կազմակերպելիս շատ կարեւոր նշանակություն ունի տեղի ճիշտ ընտրությունը, վորպեսզի զուր տեղ գնալ-գալու համար ժամանակ չվատնվի: Ավելի լավ ե իջևանը կառուցել և հարյուր հեկտարանոց վանդակների միացման կետում կամ այն հողամասի կենտրոնում, վորը հատկացված ե աշնանացան բույսերի ցանքոի համար:

Բրիգադի ամեն մի անդամ պետք ե ապահովված լինի հասարական սննդով:

Հասարակական սննդի համար անհրաժեշտ մթերքները բերում են հենց իրենք, կոլտնտեսականները: Գործնականում սակայն մթերքների հավաքումը հանդիսանում ե ամենաբարդ և դժվար գործ: Կոլտնտեսականները դժկամակությամբ են ընտրում մթերքները, առաջին հերթին բերում են ամենաեժան և սակավարժեք սթերքները: Հետեւանքն այն ե լինում, վոր քիչ շատ տանելի հասարակական սննդի կազմակերպումը միանգամայն անհնար և գառնում:

Կոլտնտեսականների վատ վերաբերմունքի հիմնական պատճառը դեպի հասարակական սննդուղքը՝ զա այն ե, վոր հավաքված մթերքները դիմազրկում են վարչությունների կողմից, և վորոնք իրենց հայեցողությամբ են բաժանում մթերքները բրիգադների միջև: Հաճախ այնպես ե

լինում, վոր այն բրիգադը, վորն ընդունակ և կազմակերպելու ամենաարժեքավոր մթերքների հավաքումը—ձու, յուղ, խոզի յուղ, կաթ և այլն, միայն այս մթերքների մի մասն ե ոգտագործում, իսկ մնացած մասը բաժանվում ե մնացած բրիգադների միջև:

Միանգամայն պարզ ե, վոր հասարակական սննդուղք այսպես կազմակերպվելիս, հազիվ թե զանգի մի կոլտնտեսական, վոր համաձայն լիներ իր հանձնած մթերքների փոխարեն ստանալ ավելի վատ հասարակական սննդուղք:

Այս պրակտիկային վճռականապես պետք ե վերջ տրվի և ավելին՝ առանձին աշխատող կոլտնտեսականների ամեն մի խումբը բոլորին անկախ պետք ե հավաքի հասարակական սննդի համար անրովին անկախ պետք ե հավաքի հասարակական սննդի համար հրաժեշտ մթերքները և ոգտագործել նրանց բացառապես իր սննդի համար: Հասարակական սննդուղքն այս կերպ կազմակերպելու դեպքում, ամեն մի կոլտնտեսական ուրախությամբ և բերում թե հավը, թե միսը թե հավկիթը և թե ուրիշ արժեքավոր մթերքները:

Սակայն կոլտնտեսության վարչությունն ել ձեռնպահ չպիտի մնա հասարակական սննդուղք կազմակերպելու գործում: Առավելագույն չափով պետք ե լավացնել կոլտնտեսականների սննդուղքը: Այս նպատաշակարգությունը պետք ե ապահովի բրիգադին այնպիսի պակասորդ կով վարչությունը ուղեւու և ապահովի բրիգադին այնպիսի պակասորդ մթերքներով, ինչպիսին են շաքարը, թեյը, ձուկը—կամ այնպիսի մըթերքներով, վորոնցից չունեն կոլտնտեսականները—կարտոֆիլը, բանջարեղեն, կաթ, ձու և այլն:

Սպառողական կոռպիբացիան նույնպես պետք ե վերակառուցի իր աշխատանքը կոլտնտեսականներին պակասորդ ապրանքներ մատակարարելու գործում: Ծխախոտը, գլանակը կանոնավոր կերպով պետք ե ուղարկվին աշխատող բրիգադներին:

Կոլտնտեսականների կարիքներին ուշադրությամբ վերաբերյալը մեկն ե այն կարևորագույն պայմաններից, վորոնք ապահովում են ապահովի կանոնավոր աշխատանքը: Այս բանը լավ պետք ե յուրացնի կոլտնտեսության ամբողջ ղեկավար կազմը:

Հասարակական սննդուղք կազմակերպելու հետ միասին, պետք ե կանոնավոր հիմքերի վրա դնել նաև կոլտնտեսականների կուլտուրական կարիքներին սպասարկելու գործը:

Վերջին տարիներում կոլտնտեսականը կուլտուրապես անհամեմատ պետք յե բարձրացի: Յերկար ժամանակ գյուղից, քաղաքական և հասարակական կյանքից, թերթից և գրքից կորվելը շատ վատ աղդում կոլտնտեսականների վրա և հաճախ պատճառ ե դառնում, վոր նրանք գյուղում մնան:

Այս հարցը դժվար չե լուծել բավական ե միայն կազմակերպել բրիգադներին թերթից և գրքեր կանոնավորապես ուղարկելու գործը:

Սակայն այս գործին ել պետք ե լուրջ մոտենալ: Թերթեր և գըր քեր հայթայթել գեռ բոլորը չեւ: Անհրաժեշտ ե բրիգադում կազմակերպել ընթերցում, անցկացնել զրույցներ, կազմակերպել դվարձալի ժամեր: Իսկ աշխատանքի այս մասը սովորաբար առենանեղ տեղն է հանդիսանում:

Կուլտուրական սպասարկումը պետք ե դիմավորվի կուսակցական և կոմյերիտական բջիջների կողմից: Նրանք պետք ե ոգնեն կուլտ-աշխատողին կուլտուրական աշխատանքը ծավալելու գործում, պետք ե ապահովեն բրիգադին թերթով անցկացնեն բացատրական աշխատանք և ընթերցում: Շատ պարզ ե, վոր մի մարդ չի կարող վողջ բրիգադին սպասարկել: Հաճախ այս սիստեմով կազմակերպկած աշխատանքը գուր ե անցնում և արդարացի կերպով դժողովություն ե առաջացնում կոլտնտեսականների միջև: Ցուրաքանչյուր բրիգադում պետք ե ստեղծել մի քանի մարդուց բազկացած ակտիվ, վորի վրա և պետք ե հենվել: Իրենք, կոլտնտեսականները կարող են կազմակերպել ընթերցումը, բրիգադային դաշտային թերթը, կատարել բացատրական աշխատանք: Անհրաժեշտ ե սերտ կազ ստեղծել բրիգադների հետ և լավ դեկավարել բրիգադային ակտիվի աշխատանքը: Սա վերը բավարար կատարել բացատրական սպասարկման խնդիրը:

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱԿԱՆ ՏՈՒ ՅԵ ԲՐԻԳԱԴԻՒՐԸ

Դաշտում բրիգադի աշխատանքները ղեկավարում ե բրիգադիրը: Նա պատասխանատու յեւ աշխատանքների հաջող կատարման համար: Միայն այս պայմաններով հնարավոր ե ապահովել հանձնարարված առաջարանքի ճիշտ իրագործումը:

Բայց իսկապես այդ այդպես ե: Արդյոք բրիգադիրը հանդիսանում ե արտադրության միակ և պատասխանատու կազմակերպիչը և ղեկավարողը:

Այս հարցի պարզ և փորոշ պատասխանը կարելի յեւ տալ մի շարք փաստերով, վորոնք տեղի յեն ունեցել կոլտնտեսություններում գարնանցանի կամպանիային:

Իրապոտկին ռայոնի «Վոյկովի անվան» կոլտնտեսության մեջ բըրիգադիրը գուրս ե արվել ցանքսի ամենայեռուն ժամանակ: Ստավուուր ռայոնի 6-րդ Զօնկարյան դիվիզիայի անվան կոլտնտեսության մեջ աշխատանքի ժամանակ գուրս արեցին բրիգադիրին: «Կարմիր Բուռակ» կոլտնտեսության մեջ (Բլագոտարենսկու ռայոնում) կոլտնտեսության վարչության վորոշմամբ, դուրս արվեց լավագույն բրիգադիրը նրա համար, վոր նա դիմադրում եր վարչության կարգադրու-

թյանը՝ վերցնելու բրիգադից կոլտնտեսականներին, և լծկանը և տեղափոխել նրանց ուրիշ աշխատանքի համար:

Միլիցիայի թաղամասային տեսուչը, Դուրովի կոլտնտեսության № 5 բրիգադին հրամայեց բրիգադի հողամասից առանձնացնել 10 հեկտար՝ Դուրովի գյուղական կոոպերատիվի համար ցանքս կատարելու նպատակով:

Ստավրոպոլի ռայոնի Տեմիժբեկ գյուղաբորհրդի անդամ իգնատենկոն առանց բրիգադիրի դիտության, Շարմիր մարդիկը կոլտնտեսության բրիգադներից մեկին տեղափոխեց մի ուրիշ տեղ աշխատելու:

Պրիկումակի ռայոնի «Փարիզյան կոմունա» կոլտնտեսության տնտեսական մասի վարիչն առանց բրիգադի գիտության, աշխատանքի ամենայեռուն ժամանակի յուրաքանչյուր բրիգադից վերցրեց մի-մի զույգ ձի կարտոֆիլ տեղափոխելու համար:

Մանավանդ բնորոշ արինակ կարող ե ծառայել Պավլովի ռայոնի «Պրոգրես» կոլտնտեսությունը:

Բրիգադ № 1 . . .	1 անգամ	2 անգամ	3 անգամ
	8	4	—
» № 2 . . .	2	—	—
» № 3 . . .	—	—	—
» № 4 . . .	7	—	—
Ընդամենը	17	4	—

Այսպիսով, բրիգադներից 21 անգամ ուժեր են դուրս բերված, մոտ 101 կոլտնտեսական: Յեկ այն ել գարնանացանի 22 որվա ընթացքում: Վերոհիշյալ փաստերը վկայում են, վոր բրիգադիրը հանդիսանում ե վող ավել վոչ պակաս, քան կոլտնտեսության վարչության կամակատարը և վոչ մի պատասխանատվություն չի կրում իր բրիգադի դրության և աշխատանքի համար: Գարնանացանի կամպանիային, միջ դրության և աշխատանքի համար կարգադրություններ տալուց, այս զեպքում ցուցմունքին բրիգադին կարգադրություններ ստեղծելով աշխատանքի միջ և այլն: Մերկ վարչարարության, բրիգադիրներին դիմագրկելու այս փաստերին զուգընթաց, գարնանավարի ժամանակ հայտագրելով աշխատանքի բրիգադիրների կազր, վորոնք աշխատանքի ժամանակ հանդիսացել են իրենց բրիգադի իսկական կազմակերպիչների ժամանակի համար: Այս տեսակետից իրենց ցայտուն որինակ կարող ըը և ղեկավարները: Այս տեսակետից իրենց ցայտուն որինակ կարող ե ծառայել Տիմաշեկի ռայոնի Ստալինի անվան կոլտնտեսության բրիգադը, բրիգադիրը ընկ. Պոնոմարենկոյի գլխավորությամբ: Բրիգադի ճիշտ

կազմակերպված աշխատանքը, առանց վարչության խնամակարության, բրիգադի բոլոր աշխատանքների պատասխանատվությունը բրիգադի-ըի վրա թողնելն այն արդյունքն ունեցավ, վոր այս բրիգադը ամենա-որինակելին հանդիսացավ վոչ միայն Տիմաշիի ուայրնում, այլ և ամ-բողջ յերկրամասում։ Աշխանացանի կամպանիային բրիգադիրը պար-տավոր ե իր բրիգադի արտադրության գլուխը կանգնելու, կատարվող աշխատանքների կազմակերպիչը և ուժեղ ղեկավարը դառնալու։ Միայն այս պայմաններումն ե վոր բրիգադիրը կարող ե արտադրական բարձր ցուցանիշներ տալ ցանքսի ժամանակ։

Բրիդաղիբն ամուր պետք ե հենվի կենտկոմի և կառավարության վրոշման վրա և վճռական հականարված տա այն ամեն տեսակի վարչական փորձերին, վորոնք զրկում են նրան բրիգադը ղեկավարելու իրավունքից: «Բրիգադիբը նշանակվում ե կոլանտեսության վարչության կողմից՝ վոչ պակաս, քան 1 տարի ժամանակով: Ժամանակից առաջ բրիգադիբն հանելն ամեն մի առանձին դեպքում թույլ ե արվում միայն ուայկունտմիլության և ուայնողբաժնի հաստատությամբ»: (Համկոմկուսի (թ) Կենտկոմի վորոշումից՝ կոլանտեսային կադրերի ղեկավարությունն ամրացնելու մասին):

Այս վորոշման վրա հիմնվելով, բրիգադիրը կարող է համառորեն պաշտպանել առաջադրանքին համապատասխան արտադրությունն անկախ կերպով դեկավարելու իր իրավունքը, առանց վսիննալու, վոր իրեն աշխատանքից կարող են հանել՝ բրիգագի արտադրական շահերին հակասող վարչության կարգադրությանը չհազարնդվելու համար:

Սյուս կողմից, ԽՍՀՄ կենտրոնական և ժողովադիմութիւնի ռձիերի զարգացման և պահպանման մասին» կայացրած վորոշման սեղ պարզ կերպով շեշտված և բրիգադիրի իրավունքը՝ բրիգադին քաշող ուժ ամրացնելու գործը տնօրինելու վերաբերյալ. «Բացի բրիգադիրից, արշելել վորուս սեկրետ կարգադրություն անել բրիգադին ամրացնած ձեռնորդ մաս»:

Այս յերկու կարևորագույն վորոշումները լիովին պետք ե ոգտագործեն, վորպիսզի ամրանա ըրիշաղդիրի զեկավարող գերբ:

Բըիգադիրն և զեկավարում բրիգադի աշխատանքները, հենվելով վարչության տված աշնանացանի և աշնանային աշխատանքների վերաբերյալ արտադրական առաջաղքանքի և բրիգադիրի կաղմած աղբուզլան-կարգագրի վրա:

Սրան համապատասխան, բրիգադիրն ինքուրույն կերպով և կառուցում իր աշխատանքը, կազմակերպում և խմբեր, դասավորում և ուժերը, ստուգում և աշխատանքը և հաշվի յի առնում կոլտնտեսական-ների աշխարերը:

Առանց վարչության վորոշման, բրիգադիրն իրավունք ունի ինք-նուրույն կերպով, ազրովան-կարգագրով նախատեսված աշխորհերի

10 տոկնսի սահմաններում ավելացնելու այն կոլտնտեսականների աշխորեցը, վորոնք տվել են աշխատանքի բարձր ցուցիչներ, և իջեցնելու աշխարեցը՝ հետ մնալու, վաստ վորակի, լծկանին և ինվենտարին անփույթ վերաբերվելու, նյութերն ապաբոյզուն կերպով ծախսելու համար։ Այս իրավունքը գործնական խոշոր նշանակություն ունի, հնարավորություն առավով բրիգադին ճիշտ իրավործելու կոլտնտեսականներին ղեկավարելու գործը, խրախուսելու ջանասերներին և պատժելու ծույլերին։

Բը իգաղի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունն իրագործվում է կամ վարչության և կամ նրա անդամներից մեկի կողմից:

Ղեկավարությունը կազմակերպելու հիմնական և կարեռագույն կանոնը՝ դա բրիգադիքի կամ կոլտնտեսային վարչության անմիջական մասնակցությունն եւ աշխատանքներին։ Դրսից, միայն հրամանների միջոցով կարգադրելու պրակտիկան վոչ մի ոգուտ չի տալիս։ Աշխատանքը միայն այն դեպքում կարող և ճիշտ կազմակերպվել, յերբ բրիգադիքը կամ վարչության անդամն անձայր ստուգի աշխատանքի ընթացքը հենց տեղում, յերբ հայտաբերված թերությունները տեղն ու տեղուղղվեն։ Կենդանի ղեկավարությունը, ղեկավարող կազմի մշտական կազմը կողմանականների հետ բարձրացնում եւ ղեկավարության հեղինակությունը կոլտնտեսականների աչքում և նպաստավոր պայմաններ եւ ստեղծում աշխատանքի արտադրողականությունը և վորակը բարձրացնելու համար։ Յերկրամասի լավագույն բրիգադիքը ընկ. Պոնտմարենկոյի խոսքերով (Տիմաշևի ուայոնի Ստալինի անվան կոլտնտեսություն), իր բրիգադի բարձր ցուցիչների գաղտնիքը կայանում են սրանում, վոր ղեկավարությունը ճիշտ եւ կազմակերպված, բրիգադիքը մշտական աշխատանքի վայրն եւ գտնվում, լավ կատ եւ ստեղծված բրիգադի և վարչության մեջև եւ լավ հիմքերի վրա յետ արված մասսայական աշխատանքը։ Բոլոր կոլտնտեսությունները լայնորեն պետք են ոգտագործեն այս որինակը և նոր, փորձված բրիգադիքներ պատրաստեն բրիգադիքը ընկ. Պոնտմարենկոյի նման։

ԳՈՐԾԱՎԱՐՁԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այժմ կարիք չկա խոսելու, թէ ինչ առավելություններ և նշանառություն ունի գործավարձը կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման գործում: Սա բավականաչափ համոզեցուցիչ կերպով ապացուցված ե՝ վերջին յերկու տարիների ընթացքուժուանտեսություններում գործավարձը կիրառելու միջոցով:

Կասենք միայն, վոր աշխատանքի գործավարձային կազմակերպումը հետագայում կատարելազործելու շնորհիվ, կուտանտեսությունները որպանոր նվաճումներ ձեռք կը բերեն աշխատանքի արտադրողականու-

թյունը և վորակը բարձրացնելու գործում: Կոլտնտեսականների այժմ՝ վա արտադրանքը մի տարի առաջ անհնարին և աներագործելի յեր համարվում:

Այս տարի գարնանացանի պրակտիկան արտադրողականության այնպիսի բացառիկ արդյունքներ և տվել վորոնք ծածկում են անցյալ տարում կոլտնտեսությունների ձեռք բերած լսվագույն նվաճումները: Այսպես, 1931 թվին ցանքսի ամենաբարվածային արտադրանքը համարվում եր, միջին վարը 2 կորպուսանի գութանով, 1,5 հեկտար, տափանումը մի հետքով—2,5 հեկտար, ցանքսը 12 շարքանի ցանիչով—5,5 հեկտար:

Այս տարի գարնանացանի ժամանակ կոլտնտեսությունների մեծ մասում այսպիսի նորմերը համարվում ելին սովորական, իսկ հարվածային իմքերի համար այդ նորմերը զգալիորեն բարձրանում են: Այսպես, որինակ, Մեջոտինսկի ույյունի Վոյկովի անվան կոլտնտեսության մեջ, աշխատանքի լավ վորակով հանդերձ, ամբողջ գարնանացանի ընթացքում մի որվա մեջ ստացվել ե հետեւյալ արտադրողականություն՝ հեկտարներով:

Կոլտնտեսության մեջ ընդունված նորմը	Սովորական ար- տադրանքը	Հարվածային իմք- երի արտադրանք
4 ձիով բուկիերի հերկը	1,5	2—2,25
2 հետքով տափանում	2,5	4—4,5
Վարը 12 շարքանի ցանիչով . . . :	4,5	6,5—7

Բերված որինակից յերկում ե, վոր Վոյկովի անվան կոլտնտեսությունը ձեռք բերեց բացառիկ բարձր արտադրողականություն: Մակայն նա մենակ չե. մեր յերկրամասում հարյուրավոր կոլտնտեսություններ գործավարձը ձիշտ կազմակերպելու շնորհիվ, նույն արդյունքներ են ձեռք բերել: Այսպես, որինակ. Արմավրի ույյունի «Ագրոսինիմում» կոլտնտեսությունը տվեց հերկի ուկորդային արտադրանք, յերկիսովառի գութանով որական հերկելով 3,25 հեկտար:

Բերված որինակները մեզ իրավունք են տալիս ասելու, վոր գործավարձի հետագա ամրացումը և կատարելագործումն ավելի ևս կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը:

Կոլտնտեսային սխտեմի՝ աշխանացանի կամացանիայի հիմնական խնդիրն ե—ձիշտ կազմակերպել գործավարձը անխտիր բոլոր կոլտնտեսություններում, առաջ քաշելով ևս մի քանի հարյուր կոլտնտեսություններ այնպիսի ուկորդային արտադրանքով, վորը միանգամայն դերագանցի ընթացիկ տարվա գարնանացանի ամենաբարձր արտադրանքը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը հնարավորություն ե տալիս կոլտնտեսություններին ավելի հաջողությամբ և կատարելու աշխանացանի խնդիրները: Բերենք պարզ հաշիվ. 10 հեկտարի համար վարի արտադրողականության բարձրացումը, այսինքն յերկիսովանի գութանով վոչ թե մեկ, այլ 1,1 հեկտարի վարը, մի որում կը քաղաքատում ե մի որվա համար պահանջվող ձիերի քանակը 6 հազարով կամ հնարավորություն ե տալիս աշխանացանի աշխատանքն ավարտելու 30 որվա փոխարեն 26—27 որում:

Թե ինչ նշանակություն ունի լծկան ուժի խնայողությունը կամ ցանքսի ժամկետի կրճատումը, դա պարզ ե յուրաքանչյուր կոլտնտեսականին: Արտադրողականությունը բարձրացնելով և ժամկետները կը քաղաքատելով կարելի յե տասնյակ հաղարավոր ցենտներ ավելի շատ հացահատիկ ստանալ:

Ահա թե ինչու կոլտնտեսականներն ամեն կերպ պիտի աշխատեն բարձրացնել արտադրողականությունը, ճիշտ կազմակերպել գործավարձը:

Ինչպես պետք ե կազմակերպել գործավարձը նախ և առաջ պետք ե վորոշել թե գործավարձի վոր ձևն ե ամենից լավը կոլտնտեսության մեջ կիրառելու համար:

Կոլտնտեսության մեջ ներկայումս ընդունված են հետեւյալ ձևերը՝ խմբակային, մանր խմբակային և անհատական գործավարձը:

Յեթե կոլտնտեսությունները լավ են իմանում այս բոլոր ձևերը, ապա նրանք անխուսափելիորեն կդան այն յեզրակացության, վոր կոլեկտիվ խոշոր տնտեսության պայմաններում գոյություն ունի միայն խմբակային գործավարձ, հաշվի առնելով յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակը և վորակը:

Յեկ իսկապես, միթե կարելի յե բրիգադում այնպես կազմակերպել աշխատանքը, վոր ամեն մի կոլտնտեսականին անհատապես առաջարանք տրվի, աշխատանքի համար առանձին հողամաս հատկացվի: Իսարկե, չի կարելի: Աշխատանքն այս ձևով կազմակերպելու պատճառով, բրիգադիրն ստիպված կլիներ 300—400 հեկտարանոց ցանքատառությունը բաժանելու 20—30 զանազան հողամասերի: Այս դեպքում աշխատանքի վորակը չափազանց կիշներ: Մյուս կողմից, աշխատանքը մանր կամ խոշոր խմբակային ձևով կազմակերպելիս, կարե՞լի յե արդյոք հրաժարվել յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքը հաշվառելուց: Իսարկե, սա նույնպես չի կարելի: Յեթե վոր խմբակի աշխատանքը հաշվի առնվեր այնպիս, վոր կատարած աշխատականը բաժանարարապես բաժանվեր բոլոր մասնակցողների միջև, այդ գեղեցում կատեղծվեր հավասարացում, աշխատանքի դիմադրկություն, վորոնք գործավաճի ամենավոխերմ թշնամիներն են:

Հետևաբար, կոլտնաեսություններում պետք ե կերառել խմբակաւին գործադարձը, հաշվի առնելով միաժամանակ յուրաքանչյուր կուտնատեսականի կատարած աշխատանքի քանակը և վորակը:

Խոշոր, միջակ կամ մասն իսպակ կազմակերպելու հարցը լուծելիս, կոլտնաեսությունը անպայման նկատի պիտի առնի տեղական պայմանները: Մի գեղքում լավագույն արտադրողականություն և բարձր վորակ տալիս ե յերկու գութան ունեցող խմբակը, իսկ մի այլ գեղքում—յերեք գութան ունեցող խմբակը: Պետք ե խուսափել չափազանց մեծ խմբեր կազմակերպելուց, վորովհետև նրանք աշխատանքում ճկուն չեն լինում: Այսպիսի խմբերում շատ գեղքար ե լինում հաշվի առնել առանձին կոլտնաեսականների աշխատանքը:

Հետո պետք ե լուծել այն հարցը, թե ինչպիսի խմբեր են ամենապատակահարմարը՝ աշխատանքների ժամանակ—մասնագիտացած խմբեր, միայն մի տեսակ աշխատանք կատարող խմբեր, որինակ. հերկողների, ցանողների—թե կոմբինացված խմբեր, վորոնք միաժամանակ կատարում են յերկու կամ ավելի զանազան աշխատանքներ, որինակ, հերկող և տափանող խմբակ, հերկող, տափանող և ցանող խմբակ:

Աշխանային դաշտային աշխատանքների ժամանակ, ամենից ավելի լավ ե կազմակերպել մասնագիտացած խմբեր, թույլ տալով կոմբինացված խմբերի վարի և տափանման վերաբերմամբ, վորովհետև ազբումինիմումը պարտադիր կերպով պահանջում ե վարից անմիջապես հետո տափանել հողը:

Աշխանացանի ժամանակ կոմբինացված խմբակը, վորը թե վարում, թե տափանում և թե ցանում ե, միանդամայն անպետք ե, վորովհետև վարի և ցանքսի միջև յեղած ժամանակը յերկար ե:

Գործադարձը ճիշտ կազմակերպելու յերկրորդ պայմանը արտադրանքի նորմն ե, Առանց արտադրանքի նորմի գործադարձ չի կարող լինել:

Չնոյած դրան, մի քանի կոլտնաեսություններում գեռ մինչև հիմա յել շարունակում են կարծել վոր գործադարձի գեղքում արտադրական նորմը պարտադիր չե—կարևորը, այս կոլտնաեսությունների կարծիքով, դա այն ե, վոր աշխարհի հաշվառումը կատարվի արտադրանքին համապատասխան: Այսպես, որինակ 6-րդ Զանգարյան դիվիզիայի անվան կոլտնաեսության մեջ ամբողջ գարնանացանի կամպանիան անցավ աշխատանքների հետեւյալ կարգով, կոլխոզնիկն աշխատում ե, իսկ այնուհետև աշխատանքը վերջանալուց հետո, անկախ նրանից՝ թե նա ինչքան ե աշխատել—0,5 հեկտար, մեկը թե 1,5 հեկտար՝ ընդունված գնահատման համաձայն նրա վրա աշխարհեր են հաշվում:

Այս պրակտիկան չափազանց վնասակար ե: Այսպիսի կարգը զօրշում ե կոլտնաեսության արտադրությունը ճիշտ կազմակերպելու հնարավորությունից: Յեթի, յենթաղենք, վոր կոլտնաեսությունն անհրաժեշտ է գտնում դաշտային աշխատանքներն ավարտել 15 որում՝ յելսելով մի գութանի համար 1,25 հեկտար արտադրանքից, ապա ինքնահոս տրամադրություն ունենալու գեղքում—աշխատիր, ինչքան կարող ես, այս ժամկետը կարելի յե շատ յերկարացնել: Մյուս կողմից, այսպիսի կարգն ուժեղ հարված ե հասցնում բարեխիղն կոլտնաեսականներին: Կոլտնաեսականներից մեկն աշխատում է առաջին աշխատանք կատարելով նույնքան ե ստանում, ինչքան այն կոլտնաեսականը, վորն անբարեխղորեն ե աշխատում:

Ահա թե ինչու կոլտնաեսությունները պետք ե դատապարտեն աշխատանքի այսպիսի կարգը, Յուրաքանչյուր կոլտնաեսություն գարնանացանի մասնակիտականի վորով կամպանիայի համար պետք ե սահմանի արտադրանքի նորմեր:

Արտադրանքի նորմերը սահմանվում են բոլոր աշխատանքների համար. այս գեղքում հիմք պետք ե ունենալ լավագույն կոլտնաեսականների կատարած աշխատանքը:

Նորմաները մշակելիս չպետք ե սահմանել վերին աստիճանի բարձր նորմաներ, վորոնք սիտեմատիկորեն թերակատարվում են կոլտնաեսականների կողմից: Մա կարող ե իջեցնել կոլտնաեսականների՝ դեպի աշխատանքն ունեցած շահագրգուվածությունը:

Մյուս կողմից, չի կարելի սահմանել չափազանց ցածր նորմաներ, վորոնք սիստեմատիկորեն գերակատարվում են կոլտնաեսականների կողմից: Մա իջեցնում ե արտադրողականությունը և պատճառ դառնում աշխարհերի շոայլման:

Արտադրանքի նորմաները մշակում են կոլտնաեսությունները՝ զյուղատնտեսի, լավագույն բրիգադիների և կոլտնաեսականների սահմացությամբ: Մշակված նորմաները հաստատվում են վարչության կողմից և բաց են թողնվում իրեն ոժանդակող միջոց՝ բրիգադում ազգության կարգագրեր կազմելու համար:

Յուրաքանչյուր բրիգադ իր արտադրական խորհրդակցության մեջ վերածակառ և արտադրանքի նորմերը:

Պարտադիր չե, վոր բրիգադն առանց առարկության ընդունի վարչության կողմից սահմանված նորմաները: Կարող ե այնպիս պատճառ տահել, վոր հողի յուրահատուկ վիճակի, դաշտի պատուված լինելու և քաշող ուժի գրության պատճառով, աշխատանքի պայմանները խիստ տարբերվեն մյուս բրիգադների պայմաններից և կոլտնաեսության սահմանած նորմաները շատ բարձր կամ շատ ցածր կարող են լինել բրիգադի համար: Այս գեղքում բրիգադի բրիգադականների հետ

միասին պարտավոր և վերանայելու սահմանված նորմաները, հարմարեցնելու իր բրիգադի աշխատանքի պայմաններին և վարչությանը հաստատել տալու։ Կարող են նաև այնպես պատահել վորուժեղ անձրևներից հետո աշխատանքի պայմանները զգալիորեն վատանան։ Այս դեպքում բրիգադիրը պարտավոր և ինքնուրույն կերպով սահմանելու նոր նորմ՝ այն հաշվով, վորուժությունը կերպով սահմանելու համար այն հաշվով, վորուժությունը կերպով սահմանելու համար։

Վերջապես, կարող են պատահել, վորուժությունը միևնույն աշխատանքի համար տարբեր նորմեր սահմանված լինեն։ Որինակի համար, մի հոգածառուել, վորուժությունը աշխատանքի նորմաները կարող են ավելի ցածր լինել՝ քան մի այլ ավելի մաքուր հոգածառուել։

Արտադրանքի նորմաներ սահմանելիս, չպիտի աշխատել միասեակ նորմաներ ունենալու, այս բանը բացի վնասից, վոչ մի ոգուած չի տալիս արտադրությանը։ Բրիգադիրն ավելի մեծ չափով պետք է հայտնաբերի իր նախաձեռնությունը և նորմաներն ինքնուրույն կերպով կանոնավորելու հնարավորությունը, վորագեսզի աշխատերը գուր չշռայլվեն, դրա համար ամեն մի բրիգադ պետք է սահմանի աշխատերի քառակը՝ աշխատանքի ամբողջ սեզոնի համար, իսկ բրիգադիրին իրավունք և որպում բարձրացնելու աշխատերի ընդհանուր թիվը, վոչ ավել քան 10 տոկոսից՝ այն բոլոր աշխատերի, վորը նախագծված և ագրոլանեկարգագրով. այնուհետև բրիգադիրը պարտավոր և բացարձություն տալու վարչությանը՝ աշխատերի թիվն ավելացնելու համար։

Գարնանային դաշտային աշխատաքնների փորձի հիման վրա աշխատանքին աշխատանքների համար կարելի յե առաջարկել հետեւյալ նորմաները։

Աշխանավար՝ գարնանացան կամ աճնանացան բաւյսերի համար	
Կակուղ հողերի վարը 1,6-ից	մինչև 2,25 հեկտ.
Միջին » 1,1-ից	» 2 հեկտ.
Կարծը » 0,6-ից	» 1,5 հեկտ.
Բազմաթիվանի » 2 -ից	» 3 հեկտ.
Տափանումը 1 հետքով	
2 ոլականի տափանով 5,6-ից	» 6,5 հեկտ.
Ցանքությունը 12 շարքանի	
ցանիչով 5 -ից	» 5,5 հեկտ.
Ցանքությունը 12 շարքանի	
ցանիչով 6 -ից	» 6,5 հեկտ.

Բնակած նորմաներ մոտավոր են և նրանց փոփոխությունը կախում ունի վարի խորությունից, դորձիքի մեծությունից (խոփերի քառակը, ընդդրկող լայնությունը), մեքենայից, լծկանի տեսակից (ձի կամ

յեղ), հասակավոր լծկանի թվից, ինչպես նաև նրա դրությունից։ Կողմանը վելու այս նորմերի վրա, կոլտնտեսությունն ինքը պետք է սահմանի նորմերը յուրաքանչյուր տեսակի աշխատանքի համար, հենվելով աշխատացանի փորձի և տեղական պայմանների վրա։

Բրիգադային արտադրական խորհրդակցության կողմից սահմանված և ընդունված նորմաները պարտադիր են բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականի համար։ Այս նորմաների համաձայն, ագրոլան-կարգագրում վորոշվում ե աշխատանքի ժամկետը. այս նորմաները աշխատանքների գնահատման համար իրեն հիմք են ծառայում։

Աշխատանքները գնահատվում են աշխատերով, գնահատումը ունի արտադրանքի դժվարությունից և այն վորակից, վորը պահանջվում ե աշխատանքի կատարման համար։

Կոլտնտեկնտրոնի վորոշման համաձայն, աշխատանքները գնահատվում են ըստ արտադրած մթերքների (հացահատիկի ցենտներից կամ տոննից)։ Այստեղ, ուր հնարավոր չե մթերքների արտադրության միավորը վերցնելի վերցնում են մի ուրիշ միավոր—հեկտար, կիլոմետր, հատ և այլն։

Պարզ ե, վոր աշխանացանի կամպանիային աշխանուանքները գնահատվելու յեն ըստ վարած, տափանած և ցանած հեկտարների, և միայն հացահատիկի կրեն և գնահատվելու ցենտներով կամ կրեն հեռավորությամբ։

Աշխատանքի գնահատումը վարոշող մի այլ մոմենտ հանդիսանում է կատարվող աշխատանքի դժվարությունը։ Որինակի համար, գութանակարի աշխատանքն ավելի ծանր ե, քան կառապանինը և նա ավելի բարձր պետք է գնահատվի։ Բացի դրանից, մի շարք աշխատանքներ գնահատելիս, ուշադրության և առնվում աշխատաղի վորակավորումը, վորը հատուկ աշխատանքի կամարությունի, գարենի, միխանիկի աշխատանքը, վոր հատուկ գիտություն և պահանջում և դրա համար ավելի բարձր և գնահատվում։

Կոլտնտեկնտրոնի վարչությունը աշխատանքների ծանրության և վորակավորման համապատասխան այնպիսի խմբավորում ե սահմանել վորը վերաբերում ե յուրաքանչյուր խորին։ միաժամանակ և վորոշել աշխատանքների գնահատումը։

1. Խումբ—թեթև աշխատանք—գնահատվում ե 0,5 աշխոր։
- 2-րդ խումբ—միջին աշխատանք—գնահատվում ե 0,75 աշխոր։
- 3-րդ խումբ—ծանր և պարզ աշխատանք, վորը հատուկ փորձ չի պահանջում—գնահատվում ե 1 աշխոր։
- 4-րդ խումբ—ծանր աշխատանք, վորը պահանջում է հատուկ փորձառություն—1,25 աշխոր։
- 5-րդ խումբ—վորակայալ աշխատանք—1,50 աշխոր։

Կոլտնտեսության մեջ բոլոր աշխատանքները բաժանվում են այս խմբերի միջև Յերկրկուտնտմիության վորոշման համաձայն, ըստ վորում աշխատանքները աշխարերով գնահատվում են համաձայն նրան, թե վոր իմրին ե պատկանում այս կամ այն աշխատանքը:

Յուրաքանչյուր կոլտնտեսական ստանում ե այնքան աշխոր, ինչ քան վոր նա աշխատանք ե կատարել. յեթե կոլտնտեսականը բարեխիղ ե աշխատել և շատ արտադրել ապա նա ավելի շատ աշխոր ե ստանում, իսկ յեթե նա վատ ե աշխատել, ապա նա քիչ աշխոր պետք ե ստանա: Ահա սա յե գործավարձի եյությունը:

Սակայն այս կանոնը սահմանվում է այն բոլոր կոլտնտեսականների վերաբերմամբ, վորոնք թեեն շատ կամ քիչ աշխոր են վաստակել բայց և այնպես կատարել են արտադրանքի նորման և աշխատանքի վորակը:

Իսկ այն կոլտնտեսականները, վորոնք չեն կատարել նորման և վատ վորակ են ավել, այդպիսիների աշխորերն ուրիշ կերպ են հաշվվում: Նայած թե ինչքան ե կատարված նորման և ինչքան ե իջեցված վորակը, ըստ այնմ ել բրիգադիրը պակասեցնում է կոլտնտեսականի աշխորերի թիվը: Յեթե, յնթադրենք, վոր կոլտնտեսականը պարտավոր եր 10 որում 15 հեկտար վարելու, իսկ նա այդ ժամանակամիջոցում վարել ե միայն 12 հեկտար, այսինքն նորման թերակատարել ե 25 տոկոսով, ապա այդ դեպքում բրիգադիրը պետք ե իջեցնի նրա աշխորերի թիվը վոչ պակաս, քան 25 տոկոսով:

Արտադրանքի նորմերը թերակատարելու, աշխատանքները ժամակետին չկատարելու, վատ վորակի, ինվենտարը փչացնելու և կոտրելու համար աշխորերի իջեցումը կատարվում է բրիգադիրի կողմից: Ընդհակառակն, բրիգադիրն ավելացնում է այն կոլտնտեսականների աշխորերի թիվը, վորոնք աշխատանքները ժամկետից առաջ են կատարել:

Լավ աշխատանքի համար աշխորերի ավելացումը և վատ աշխատանքի համար աշխորերի պակասեցումը պետք է ուժեղացնեն աշխատանքային կարգապահությունը, բարձրացնեն արտադրողականությունը և լավացնեն աշխատանքի վորակը: Բրիգադիրը պետք է ոզտագործի վարչությունից իրեն տրված իրավունքը, վորպեսզի ամրացնի բրիգադը և ապահովի հանձնարարված աշխատանքի հաջող կատարումը:

Սակայն իրականության մեջ հաճախ այդպես չի լինում: Բրիգադներն ստուգելու ժամանակ պարզվել ե, վոր բրիգադիրների մեծ մասը վողջ զարնանացանի ընթացքում վոչ մի անդամ չեն իջեցրել և չեն ավելացրել կոլտնտեսականների աշխորերը: Որինակի համար, բնագողարնենսկի ույոնի «Կարմիր մայիս» կոլտնտեսության 3-րդ բրիգադիրը հետեւյալ պատճառաբանությունն ե բերում իր այդպիսի վարմունքի համար. «ինձ մոտ կոլտնտեսականները բո-

լորն ել լավ և համերաշխ են աշխատում, յեթե յես սկսեմ իջեցնել կոլտնտեսականների աշխորերը, ապա նրանք պիտի վիրավորվեն և դա կիշեցնի աշխատանքի արտադրողականությունը»: Բրիգադիրի այսպիսի վերաբերմունքի պատճառով, բրիգադը վոչ մի հարվածային չունի, նորմերի վոչ մի գերակատարում չկա, ամեն ինչ ընթանում ե հանգիստ, անդորր, ինքնահոսով:

Դործավարձը պետք է խրախուսի լավ աշխատող կոլտնտեսականին, իսկ դա հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ գործավարձի հիմնական պայմանները լիովին կատարվեն: Միայն այս միջոցով կարելի յե արմատացնել գործավարձը, և աշխատանքի արտադրողականության ավելի բարձր ցուցանիշներ ստանալ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՐԴՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒԽՆՈՒՄԸ

Աշխատանքի հաշվառքը գործավարձի անբաժանելի մասն ե հանգիստանում: Առանց աշխատանքի հաշվառման չի կարելի կիրառել գործավարձը: Առանց աշխատանքի հաշվառման անհնար ե նաև աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Այնտեղ, ուր հաշվառք չկա, ուր կոլտնտեսականը չի իմանում իր աշխատանքի արդյունքները, հնարավոր չե բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և լավացնել աշխատանքների վորակը:

Առանց ճիշտ և սխտեմատիկ հաշվառքի չի կարելի ճիշտ բաշխել յեկամուտները, իսկ յեկամուտների բաշխումը՝ դա կոլտնտեսության համար քաղաքական և տնտեսական խոշոր նշանակություն ունեցող մի գործողությունն է: Առանց հաշվառքի կոլտնտեսությունն անխուսափելիությունը գնում է յեկամուտներին ըստ շնչի բաշխելու ճանապարհով, վորն արդեն վաղուց ե, ինչ վճռականապես դատապարտված է բոլոր կոլտնտեսականների կողմից:

Իբրև որինակ, կարելի յե բերել Տիկորեցկի ույոնի կոլտնտեսությունները: Աշխատանքի կանոնավոր հաշվառում չինելու պատճառով, ույոնի կոլտնտեսությունների մեծ մասը 1931 թվին յեկամուտները բաժանեց ըստ աշխատունակների և շնչերի: Ռայոնը հետագայում չկարողացավ ուղղել իր այդ սխալը և հետևանքն այն յնդավ, վոր հավասարեցման պատճառով, լավագույն կոլտնտեսություններն այնքան հաց ստացան, ինչքան վոր վատ աշխատող կոլտնտեսականները: Այս սխալն իր վատ հետեւանքներն ունեցավ այս տարվա գարնացանի ժամանակ, ույոնը մինչև հունիսի 15-ը հաղիվ հազ կատարեց իր ցանքային պլանը, իսկ մինչև հասկավորների բերքահավաքման սկիզբը քաղհանգան քաղհանգան յենթակա տարածության միայն կեսը:

Հաշվառքի ճիշտ կազմակերպումը մոբիլիզացիայի պետք և յենթարկի կոլտնտեսականներին պլանի կատարման և գերակատարման շուրջը, խրախոսական բարեխիշդ կոլտնտեսականներին և յերեան հանի բոլոր ծույզերին, վորոնք ուրիշն հաշվին են ուղղում ապրել:

Ահա թե ինչու կողմանտեսության վարչությունը բացառիկ ուշադրություն պիտի դարձնի հաշվառքի վրա։ Աշնանացանին յերկրամասի վոչ մի կողմանտեսություն չպիտի մնա առանց ճիշտ և կանոնավոր հաշվառման—ահա սա յե կողմանտեսային սխառեմի ամենալուրջ խնդիրներից մեկը։

Աշխատանքի հաշվառքը կանոնավոր պեսք ելինի: Միայն այս
պայմանով հաշվառքը կարող ելավ արդյունքներ տալ:

Սմբեն որ, աշխատանքը վերջանալուց հետո, ստուգման պիտի յենթարկվի յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակն ու վարակը: Վոչ պակաս, քան 5 որը մի անդամ, պետք է հաշվի առնվեն կոլտնտեսականի կատարած աշխատանքը և աշխարհը:

Արտադրանքի ամենուրյա հաշվառումը նշանակվում է կարգագրի մեջ։ Կարգագրում 5 որփա ընթացքում կատարված աշխատանքն աշխորերի պետք և վերածվի։

Արտադրանքի ամենորյա հաշվառքը կատարում և խմբավարը՝
Աշխորեցը հաշվում և հաշվավարը՝ բրիգադիրի հոկողությամբ։ Իսկ
բրիգադիրն ավելացնում է կամ պակասեցնում աշխորեցի թիվը՝ կու-
տնտեսականի կատարած աշխատանքին նայած։

Յերբ բրիգադիցն ստուգեց և հաստատեց կարգագի կատարումը և աշխորերի թվարկումը, զրանից հետո հաշվարը գրանցում է կուտանժեսականների վաստակած աշխորերը նրանց աշխատանքային գրքույիներում։ Աշխատանքային գրքույինը պետք է տրվեն ամեն մի կողանտեսականի և մշտական գտնվի նրա մոտ, վորպեսզի նա ուզած ժամանակ հնարավորություն ունենա ստուգելու, թե ճիշտ են հաշված իրեն հասանելիք աշխատանքը։

Այս կանոնը, դժբախտաբար, զեռ մինչև այժմ ել չի գործազրվում մի քանի կոլտնտեսությունների կողմից: Որինակի համար, մայիսի 1-ին յիրկրամասի կոլտնտեսություններում, կոլտնտեսականների 8 տոկոսը չեր ստացել աշխարքույկներ, բացի այդ, աշխարքույկների 10 տոկոսում աշխարքույկները չեյին գրանցվել: Պատահում են զեռ այնպիսի կոլտնտեսություններ, վորտեղ կոլտնտեսականները զեռ վոչ մի անդամ իրենց ձեռքում աշխարքույկներ չեն ունեցել: Որինակ, կուպուրին գյուղխորհրդի կոլտնտեսության մեջ (Պետրովսկի ռայոն) գրքույկները պահպան են վարչության գրասենյակում: Հուշապահական ապարատը նրանցում կանոնավորապես դրի յե առնում աշխարքույկները, բայց գրքույկները կոլտնտեսականներին չեն արփում:

Հաշվառքում գոյություն ունեցող թերություններից մեկն ել այն ե, վոր աշխորերը կանոնավորապես և լիովին չեն զբանցվում աշխարքույկներում: Հաճախ՝ միայն աշխորերի քանակն են նշանակվում: Կարգադրի համարը չի ներկայացվում, ցույց չի տրվում, թէ ինչ աշ-աշխատանքների համար են նշանակված աշխորերը, իսկ աշխատանք-ների գորակի մասին՝ վոչ մի դիտողություն: Բացի զբանից, հաճախ չեն նշանակվում աշխորերի իջեցումը և ավելացումը: Այսպիսի գրանցումը, անկասկած, զանազան թյառիւմացությունների տեղիք ե առավելիս, վորոնց լուծումն յերբեմն պարզապես անհնար և դառնում, վորովհետեւ ամեն ժամանակ հնարավոր չի լինում իսկույն գտնել այն կարգագիրը, վորտեղ հաշվված են գրքույկում նշանակված աշխորերը: Բլագադարնենսկի սայոնի «Կարմիր մայիս» կողմնութեացության կաթնապրանքային ֆերմի անամասահներից մեկի գրքույկում չեր նշանակված 1,5 աշխորը, ինչպես նաև կարգագրի համարը և ժամանակը: Անամասապահն ինքն ևս չեր հիշում, թե ինչ աշխատանքի համար և յերբ ե հաշվված իր վրա այդ աշխորը: Ֆերմի գելավարները նույնպես չկարողացան վորոշել այդ աշխորվա վորտեղից առաջ դալը: Դժվար չեր գուշակել թե ինչ կարող եր ինիւ յեթե անամասապահը մտածեր ստուգել զբանցւմը: հավանաբար ամբողջ գրասենյակում փնտուելու համար կկորցներ մի քանի որ:

Աշխորերի զբանցումը զբառույկներում պետք և պատարգի լինի և
համապատասխանի նրանում յեղած սյունակներին: Միայն այս պայ-
մանով կարելի յե խուսափել սխաներից և զանազան թյուրիմացու-
թյուններից:

Աշխատանքների կատարվելուց հետո, կարգադրվ սպառացր և
ե զրաբնյակին, վորը փաստորեն կատարված աշխաբերը զրի յե առ-
նում աշխատանքի հաշվառման զբում: Այս գրքում ամեն մի կողան-
տեսականի համար կա առանձին հաշիվ: Աշխատանքի հաշվառման
զբքի գրանցումների համաձայն, կոլտնտեսության վարչությունը մաք-
րում է կոլտնտեսականների բոլոր հաշիվները: Այդ իսկ պատճառով
անհրաժեշտ ե, վոր հաշվառման գրքի գրանցումները համապատաս-
խանեն գրքույիների գրանցումին: Վոչ պակաս քան ամիսը մի անգամ,
կամ ծայրահեղ դեպքում 3 ամիսը մի անգամ գրանցումները պետք
ստուգին և համեմատվեն:

Աշխատանքի հաշվառքը կատարվում և ատուկ հաշվարարամբը
միջոցով։ Գարնանացանի ժամանակ բրիգադիրն ինքն և կատարու-
բոլոր հաշիվները, իսկ յեթե նա կիսազնազետ ե, այդ դեպքում միայն
էլեկտ հատուկ հաշվարար ե արգում։

բրիգադին հատուկ հաշվարմար է առը
Հաշվառքի պարտականությունը բրիգադի վրա դնելն ունի ին
բազմաթիվ թերությունները: Ամենից առաջ՝ հաշվառքը շատ ե հե

ուացնում բրիգադիրին արտազրությունը կազմակերպելու և ղեկավարելու էր անմիջական աշխատանքից: Աշխատանք, սերմացու, կերև և այլ նյութեր հաշվելու համար, բրիգադիրն ամեն որ կորցնում է միջին հաշվով՝ 2—2,5 ժամ, կամ իր աշխատանքային որվա 20—25 տոկոսը: Բլագողաբնենսկի ռայոնի «Կարմիր-մայիս» կոլտնտեսության 9-րդ բրիգադիրը շատ քիչ մասնակցեց գարնանացանի բոլոր աշխատանքներին, վորովիճեւ որվա մեծ մասը հաշվիներով եր զբաղված:

Հաշվառքի կազմակերպման մի այլ թերություն, վորը դոյություն ունի յերկրամասի կոլտնտեսություններից շատերում, և վորը հետեւանք և բրիգադիրի կողմից տարվող հաշվառքի,—դա հաշվառքի մեջ զգալի չափով հետ մնալու եւ բրիգադիրը, զբաղված լինելով արտադրությամբ, ամեն ժամանակ հնարավորություն չի ունենում կենտրոնանալու հաշվառման վրա: Հետևանքն այն և լինում, վոր հաշվառքը յերբեմն մի ամբողջ ամսով հետ և մնում: Վերջապես, հարկավոր և շեշտել նաև այն, վոր հաշվառքը վատ և կատարվում, վորովիճեւ բրիգադիրը ֆիզիկապես հնարավորություն չի ունենում հաշվով կանոնավոր տանելու:

Բրիգադիրները հենց իրենք են մատնանշել այս թերությունները աշխատանքի կազմակերպման հարցերին նվիրված խորհրդակցության մեջ, վորը կայացալ Մոսկվայում, այս տարվա սայիսի վերջերում: Խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց՝ զյուղատնտեսական կարեվորագույն աշխատանքների ժամանակ կոլտնտեսություններում հատուկ հաշվարարներ ունենալ Խոսելով հաշվարարների թվի մասին, խորհրդակցությունը գտավ, վոր ամեն մի բրիգադ պետք և ունենա 1 հաշվարար, կամ, ծայրահեղ դեպքում՝ յերկու բրիգադ—1 հաշվարար: Աշնանացանի ժամանակ ամեն մի բրիգադ պիտի ունենա իր հաշվարարը, հակառակ դեպքում, բրիգադի մի քանի պատասխանատու աշխատանքներով (շարքահերկ շույսերի բերքահավաքը, բերքի հանձնումը, աշնանացանը) զբաղված լինելը կարող ե խառնել և հետաձգել հաշիվները: Հաշվառքի մի ուրիշ, կարեվորագույն խնդիրն և՝ կազմակերպել կատարած աշխատանքների ընդունումը և ընդունման արդյունքներին համապատասխան՝ հաշվել աշխատանքների բոլոր մասնակցողների աշխարհը, շարքային կոլտնտեսականից սկսած մինչև բրիգադիրը:

Գարնանացանը և քաղհանը ցույց տվին, վոր աշխատանքների ընդունումը մեծ մասամբ հանդիսացել եղուած ձեական գործ: Վոչ բրիգադիրը, վոչ վարչությունը հարկ յեղած ուշադրություն չեն դարձել այս աշխատանքին:

Այսինչ այս աշխատանքը կարեվորագույն ողակներից մեծն և հանդիսանում կոլտնտեսությունների աշխատանքի ճիշտ կազմակերպման գործում, Յուրաքանչյուր կոլտնտեսական այժմ դիտե, վոր աշ-

խատանքի հաջողությունը վորոշվում է վոչ միայն կատարված աշխատանքի քանակով, այլև զլիավորապես, վորակով: Աշխատանքների ընդունումը բրիգադում և բրիգադից պետք ե կատարվի աշխատանքների վորակն առավելագույն չափով լավացնելու հաշվով:

Կոլտնտեսականներից աշխատանքներն ընդունելիս խմբավարը պարտավոր ե ուշի-ուշով վորոշելու յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակը և վորակը:

Բրիգադիրը, խմբից աշխատանքներն ընդունելիս, հատկապես լուրջ ուշադրություն պետք ե դուրձնի՝ աշխատանքի վորակին, իսկույն տեղնուահեղ ուղղել տա և հետագայի համար անհրաժեշտ նախագննաշատեւմներ անի:

Բրիգադի աշխատանքները վերջանալուց հետո, նրա աշխատանքն ընդունվում է հատուկ հանձնաժողովի կողմից, վորը բաղկացած է վարչության անդամից—վերաքննիչ հանձնաժողովի նախագահից կամ վորեւ անդամից և մի քանի կոլտնտեսականներից: Հանձնաժողովն ասուլում է ազգուալլան-կարգագորի կատարվելը, աշխատանքների կատարման ժամկետերը, աշխատանքի քանակը և մանավանդ վորակը, աշխորերի ծախումը և ստացված ցուցանիշներին համապատասխան՝ վորոշում է բրիգադի աշխատանքի վորակը: Հանձնաժողովում են կոլտնտեսականների, խմբավարների, հաշվարերի և բրիգադների աշխորերը: Հանձնաժողովի համար, ինչպես նաև բրիգադիրի համար, խոշոր ժողովի աշխատանքի համար, ինչպես նաև բրիգադների համար, խոշոր նշանակություն ունի կատարված աշխատանքի նշանակված լինելը նշանագործում և աշխատանքի ընթացքը, բրիգադիրին անել ընդհանուր և ճիշտ վորոշել աշխատանքի ընթացքը, բրիգադիրին անել ընդհանուր և ճիշտ վորոշել կատարված սուխաների զգալի մասը:

Սա զգալի չափով կլավացնի աշխատանքի վորակը և կապահովի բրիգադին արված առաջադրանքի հաջող կատարումը:

ՑԱՆՔԸՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԴԵՍԵԼ

Հենց վոր նախապատրաստական աշխատանքները ցանքսն սկսելուց 2—3 որ առաջ ավարտվեն, իսկույն կոլտնտեսությունն անց և կացնում ստուգատես՝ իմանալու համար, թե ինչ չափով բրիգադը պատրաստ է ցանքսին:

Ստուգատեսը շատ խոշոր նշանակություն ունի: Ստուգատեսին ցուցադրվում են կարեվորագույն աշխատանքին նախապատրաստվելու մասնությունը, հայտաբերվում են թերությունները, մորինգացիայի յե յենթաբերվում կոլտնտեսային հասարակայնության ուղղացիացունը աշխատանքի հարցերի շուրջը, ստուգվում է կոլտնտեսագործությունը մասսաների ակտիվությունը՝ իրենց տնտեսությունը կառու-

զելու գործում: Միայն այս տեսանկյունով պետք ե մոտենալ աշնանացանի նախապատրաստության ստուգատեսին: Սակայն վոչ ամեն ժամանակ և վոչ բոլոր կոլտնտեսություններն են, վոր այս տեսանկյունով են մոտենում ստուգատեսին:

Թե անցյալ և թե այս տարօւմ կոլտնտեսությունների կազմակերպված ստուգատեսներից շատերը ժողովրդական հանդեսի տպակորություն եյին թողնում, կարծես թե նրանք կազմակերպվել եյին միայն նրա համար, վոր վերելից այդպիս եր տնօրինված: Այսպիսի ստուգատեսին յերկան եյին հանվում այն ամենը, ինչ լավ եր և խնամքով թագցվում այն, ինչ վատն եր Այսպիսի ստուգատեսի ժամանակ հաճախ նկատվում եր, վոր առջեց անպայման առաջ եյին քաշվում լավագույն ձիերը, լավագույն ինվենտարը, լավագույն կոլտնտեսականները, իսկ այն, ինչ վատն եր կամ ավելի հեռու, հետեւ եր քաշվում կամ թե բոլորվին ստուգատեսին դուրս չեր հանվում:

Կարիք կամ արդյոք ասելու, թե ինչքան վասակար ե այսպիսի ստուգատեսի կազմակերպումը: Արանով կոլտնտեսությունն ինքն իրան խարում ե, և այս ինքնախարեյությունը հսկայական վաս ե հասցնում վողջ անտեսությանը:

Յեվ իսկապես, ստուգատեսին ցուցադրվում են միայն լավ կողմերը: Բայց չե վոր միայն լավերը չեն վոր վճռում են ցանքուր չիվանդ և քաղցած ձին, կոտորված դութանը կամ չուղված շարքացանը արգելը են հանդիսանում բրիգադին կամ նույնիսկ ասբողջ կոլտնտեսության աշխատանքները հաջողությամբ ավարտելու գործում: Իսկ կոլտնտեսությունը փոխանակ թերությունները հայտարելուու, ժամանակին նըրանք ուղղելու, նախապատրաստվելու, լավագույն որինակները հետամեաց բրիգադները փոխարելու, կոլտնտեսականներին այնպիսի աշխատանքի յեւ վարժեցնում, վորը նույնիսկ չի յել ձգտում յեղած թերությունները շտկելու:

Այս տեսակի ստուգատեսները պետք ե վճռականապես դատապարտվեն կոլտնտեսությունների կողմէց: Ստուգատեսի լողունզը պիտի լինի—ստուգատես, վորպիս կոլտնտեսության կազմակերպչական անտեսական ամրացման հզոր լծակը, վորպիս կոլտնտեսային ինքնառողծունեյությունը և ակախիվությունը հայտնաբերող ազդումը՝ կազմակերպչական-տնտեսական թերությունների դեմ և կարեվորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաները հաջողությամբ կատարելու համար պայքարելու գործում:

Ստուգատեսն անց ե կացվում բրիգադների միջև: Յուրաքանչյուր բրիգադ հատկապիս ընտրված կոլտնտեսականների, լծկանի և ինվենտարի կազմով ցուցաբերում ե իր ցանքուր պատրաստ լինելը: Ստուգատեսը կատարում ե հատուկ հանձնաժողով, վորն ընտր-

ված ե վարչության կողմից և վորի կազմի մեջ մտնում են կոլտնտեսության նախագահը, տեղական խորհրդի և կուսակցական կոլեկտիվի ներկայացուցիչները և մի քանի լավագույն կոլտնտեսականներ: Կուսականները ջոկվում են ամեն մի ըրեգագից: այս դեպքում պետք ե ջոկել ամենափորձառու և անտեսագետ կոլտնտեսականներին, վորոնք կարողանան հայտաբերել բոլոր բացերը, վորոնք կարող են աղգել ցանքսի հաջող ընթացքի վրա, և տեղնուատեղ ուղղել նրանք:

Ստուգատեսի ժամանակ ինչի վրա պետք ե ուշադրություն դարձնել:

Նախ և առաջ հանձնաժողովը պիտի ստուգի վողջ բանող անտեսունը, վորոշի նրա դրությունը և հանձնարարված աշխատանքը կատարելու ընդունակությունը: Պետք ե քննի աշխատանքի համար պատրաստված ամբողջ ինվենտարը և լծասարքը: Ինվենտարն ստուգելիս հատուկ ուշադրություն պետք ե դարձնել նրա նորոգված լինելու, կունոնավոր աշխատելու և պահեստի մասերով ու քսելով ապահովված լինելու վրա:

Աշխատանքի համար անողետք անասուն կամ ինվենտար յերեան բերելու գեղգում, հանձնաժողովը հենց տեղնուատեղը, բրիգադիրի հետ միասին վորոշում ե, թե ինչ պետք ե անել դրությունը փրկելու համար:

Հանձնաժողովը նույնիսկ ստուգում ե սերմացույի վորակը և նրա ինչքան մաքրված լինելը:

Հանձնաժողովը հատուկ ուշադրություն պետք ե դարձնի այն բանի վրա, թե ինչ չափով կոլտնտեսականները պատրաստ են ցանքուր մինի: Ամենից առաջ հանձնաժողովը աչքի յեւ անցկացնում ազբողություն-կարգադրելը, ստուգում ե խմբերի կառուցումը և առաջիկա աշխատանքին կոլտնտեսականների ինչ չափով ծանոթ լինելը: Այս վերջին մունտին հատուկ ուշադրություն պետք ե զարձնել: Պետք ե պարզել, թե արդյոք կոլտնտեսականը գիտե՞ աշխատանքների կարգը, արտադրանքները, աշխատանքների գնահատումն աշխորերով:

Այս հարցերը վճռական նշանակություն ունեն ցանքուր ընթացքի համար, այդ իսկ պատճառով կոլտնտեսականների պատրաստականական մնությունը հայտաբերելու վրա շատ լուրջ ուշադրություն պետք ե դարձնել:

Հանձնաժողովը պետք ե ստուգի նաև, թե ինչ ե արված՝ հատուկական մնություն կազմակերպելու և կոլտնտեսականներին դաշտում սպասարկելու ուղղությամբ:

Հանձնաժողովը ստուգում ե բոլոր բրիգադներին: Բնական ե, վոր յեթե ուշի-ուշով և խնամքով ստուգի, պատահեան կհանվեն առանձին բրիգադների մի շարք թերությունները և նվաճումները, վոր

Նրանք ունեցել են արտադրությունը ռացիոնալացնելու և լավացնելու ասպարիզում:

Հանձնաժողովը հենց իսկույն վորոշում ե, թե ինչ պետք է անել թերություններն ուղղելու համար: Սրան զուգընթաց, հանձնաժողովը բրիգադների հետ միասին վորոշում ե, թե արտադրությունը բարձրացնող միջոցներից վճրը կարելի յե փոխադրել ուրիշ բրիգադները:

Ստուգատեսը վերջանալուց հետո, յուրաքանչյուր բրիգադի փորձական յելույթ ե կազմակերպում դեպի դաշտը: Հողամասերի վրա կոլտնտեսականները կատարում են ագրոպլան-կարգագրով նախատեսված աշխատանքները: Հանձնաժողովը պետք է ստուգի յուրաքանչյուր բրիգադի աշխատանքը հենց ուղղակի դաշտում: Նկատի պիտի ունենալ, վոր աշխատանքի պրոցեսում ավելի լավ կերպով ե յերեան դաշտում նախապատրաստությունը: Աշխատանքի ժամանակ ավելի հեշտությամբ կարելի յե ստուգել լծկանի վիճակը, մեքենայի և դործիքի նորոգված և սարքված լինելը, ինչպես նաև կոլտնտեսականների պատրաստականությունը:

Հանձնաժողովը հենց դաշտում ստուգում ե աշխատող ջոկատի տեղավորելը և աննպաստ յեղանակներից պաշտպանելու հարմարությունները:

Ստուգատեսի արդյունքները հանձնաժողովի արձանագրում ե: Արձանագրության մեջ նա նշանակում ե յուրաքանչյուր բրիգադի պատրաստականությունը, հայտաբերված թերությունները և մտցնում ե նրանք վերացնելու առաջարկությունները: Արձանագրության մի որինակը, տրվում ե բրիգադիրին՝ գործնականում ղեկավարվելու համար:

Սիալ կլիներ կարծել թե ցանքսի նախապատրաստության ստուգատեսը սահմանափակվում ե միայն հանձնաժողովի ստուգում: Ստուգումը—դա ստուգատեսի միայն մի ողակն ե: Նրանում մասնակցում ե նաև կոլտնտեսականների մի մասը: Մենք ասացինք արդեն, վոր ստուգատեսին յերեան պետք ե զան կոլտնտեսականների ակտիվությունը և նախաձեռնությունն աշնանացանի կամպանիային նախապատրաստվելու գործում: Առանց կոլտնտեսականների բոլոր մասսաների մասնակցության, դժվար ե մեծ հաջողություններ ձեռք բերել: Այդ իսկ պատճառով նախապատրաստության ստուգումը, բոլոր կոլտնտեսականների մասնակցությունն այդ ստուգատեսին՝ պետք ե սկսվի բրիգադում նախապատրաստական աշխատանքներն սկսելու հետ միասին:

Այս նպատակով անհրաժեշտ ե ոգտագործել կոլտնտեսության և բրիգադների պատի թերթերը: Այդ թերթերում պետք ե լուսաբանվեն նախապատրաստության ընթացքը և դրությունները և աշխատանքում թույլ տրված սխաները: Թերթերը պետք ե կաղմակերպեն շարքային կոլտնտեսականների ուցիոնալացման առաջարկների մասսայա-

կան հեղեղը: Արա հետ միաժամեմ անհրաժեշտ ե կենդանացնել բրիգադային արտադրական խորհրդակցությունների գործունեյությունը: Բրիգադները պարտավոր են առնվազն 2–3 անգամ հարց բարձրացնելու նախապատրաստման ընթացքի մասին բրիգադային և արտադրական խորհրդակցության մեջ, ներգրավելով խորհրդակցության աշխատանքներում բրիգադի բոլոր կոլտնտեսականներին: Լավ և անթերի կաղմակերպված նախապատրաստությունը, ինչպես նաև ցանքսին կազմակերպված դուրս գալը, յուրաքանչյուր բրիգադի պատվի գործը պիտի դառնա: Յուրաքանչյուր կոլտնտեսական իր ամբողջ եյությամբ շահագրգոված պետք ե լինի բրիգադի աշխատանքով և նախապատրաստական աշխատանքներում յերեան բերի բացառիկ ակտիվություն:

Այսպիսով, կազմակերպված ստուգատեսը՝ բոլոր կոլտնտեսային մասսաների լայն մասնակցությամբ, աշխատանքների հաջող կատարման լավագույն յերաշխիքն ե հանդիսանում:

ՈՍՅԿՈԼՏՆՏՄԻՌՅՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐՄՅՈՒՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՃՆԱՆԱՑԱԿ ԿԱՅՊԱՆԻՄԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Ուայկոլտնտմիությունները ՄՏԿ-ՆԵՐՈՎ չսպասարկվող կոլտնտեսություններում և մեք-տրակ-կայանները՝ իրենց գործունեյության շրջանակի մեջ գտնվող կոլտնտեսությունների վերաբերմամբ հանդիսանում են կոլտնտեսային ղեկավար կաղմակերպություններ: Դրա համար ել կոլտնտեսությունների ցանքսին նախապատրաստվելու և հենց ցանքսի ամբողջ պատասխանատվությունը նրանց վրա յե ընկնում: Հաճախ ցանքսի հաջողությունը կախում ունի այս կազմակերպությունների ղեկավարությունից: Ճիշտ և կենդանի ղեկավարությունը ապահովում ե աշխատանքների հաջող կատարմանը: Ընդհակառակն, անձկունությունը, խառնաշփոթությունը, կոլտնտեսություններից կարգած լինելը ձգձգում ե աշխատանքները, իսկ յերբեմն ուղղակի վիճեցնում: Ճիշտ ղեկավարության հիմնական պայմանը—դա յուրաքանչյուր կոլտնտեսության մասին պարզ և հստակ գաղափար ունենալուն ե: Խայկոլտնտմիությունները և մեքենատրակտորային կայանները պետք ե լավ ճանաչեն իրենց կողմից սպասարկվող կոլտնտեսությունները, նրանց տնտեսությունը, տնտեսավարությունը և կաղմակերպչական դրությունը, կոլտնտեսության հիմնաղությունները և թերությունները: Միայն այս պայմաններում ե, վոր ուայկոլտնտմիությունները և մեքենատրակտորային կայանները կկարողանան գործնական ղեկավարություն և անհրաժեշտ ոգնություն ցույց տալ կոլտնտեսություններին: Սակայն արդյոք իրականում այդ այդպիսուն Արդյոք ՌԿՄ և ՄՏԿ-ՆԵՐ ճանաչում են սպասարկվող կոլտնտեսություն-

ների իսկական գրությունը: Ուղղակի պիտի ամել, վոր վճչ բոլոր ՌԿՄ և վճչ բոլոր ՄՏԿ-ներ են ճանաչում են կոլտնտեսությունները: Վճչ ամեն ՄՏԿ-ն ապրում ե կոլտնտեսության կյանքով, հարկ յեղած ուշադրություն դարձնում նրա վրա և ոգնում նրան՝ կարիքի դեպքում: Որինակի համար, բերենք բերքահավաքի կամպանիային պատրաստվելու ժամանակը: Բերքահավաքի հենց սկզբին Տեխարեցկի ռայոնի մեքենատրակտորային կայաններից և վոչ մեկը չեր իմանում կոլտնտեսություններից բերքահավաքին նախապատրաստվելու գրության մասին: Յերբ իրկիևսկի ՄՏԿ դիրեկտորին հարց տրվեց, թե կայանից սպասարկվող կոլտնտեսություններում քանի՞ մեքենա չի վերանորոգված—նա պատասխանեց, վոր դա դժվար ե ասել, վորովհետև մեքենաների նորոգումը զանազան տեղերում ե կատարվում:

Կարելի՞ յե արդյոք կոլտնտեսություններին այսքան քիչ ճանաչելով, գործնականորեն և կոնկրետ կերպով ղեկավարել նրանց գործունեյությունը: Իջարկե, վճչ: Կոլտնտեսություններն ուղենչուղեն բերքահավաքը պիտի սկսեն չորոգված մեքենաներով, վերջնականապես պիտի փշացնեն նրանք, կորցնեն հացանատիկ, կոտորեն ձիերին, իսկ միենույն ժամանակ ՄՏԿ պիտի տեղեկացնի, վոր աշխատանքներն ընթանում են ամբողջ թափով, կոլտնտեսություններն սկսեցին բերքահավաքը և այսինչ ժամանակ պարտավոր են ավարտելու աշխատանքը: Մրանից ավելի անպատասխանատու վերաբերմունք դժվար և պատկերացնել:

Կոլտնտեսության տնտեսական գործունեյության ամեն մի մոմենտ կոնկրետ, կենդանի կերպով հնարավոր ե ղեկավարել միայն այն դեպքում, յերբ կոլտնտեսային ղեկավար կազմակերպությունները լավ ճանաչեն կոլտնտեսությունները, ապրեն նրանց կյանքով, կոլտնտեսությունների հետ միասին մասնակցեն բոլոր թերությունների վերացմանը: Աշնանացանին նախապատրաստվելու ժամանակաշրջանում կոլտնտեսություններին լավ ճանաչել. նրանց տնտեսական գրությունը 100 տոկոսով ուսումնասիրելը հասուն նշանակություն և ստանում:

Ինչով ե արտահայտվելու ՌԿՄ և ՄՏԿ-ների ղեկավարությունը աշխանացնի կամպանիայի ժամանակ:

Ամենից առաջ այս կազմակերպությունները կոլտնտեսություններին պիտի հասցնեն աշխանացանի և աշխանավարի ստուգիչ առաջադրանքները: Սա հեշտ և հասարակ գործ չե և հատուկ ընդունակություն ու լուրջ մոտեցում ե պահանջում: Ռայոննին տրված առաջարանքն այնպիս պետք ե բաժանել կոլտնտեսությունների միջև, վոր նրանցից մի քանիսը չափեց ավելի չծանրաբենվեն և մի քանիսն ել շատ քիչ չծանրաբենվեն աշխանացան մշակույթների ցանքով: Յանքսատարածությունները պետք ե կապել կոլտնտեսության մեջ սկսվող ցանք-

սափոխության հետ, յեղած լծկանով և արագրության միջոցներով: Հետո ՌԿՄ և ՄՏԿ-ները պետք է մշակեն ստուգիչ առաջադրանքները և ստուգին կոլտնտեսությունների կողմից կատարվելու հնարավորությունները, վորպեսզի դաշտային աշխատանքներն ոկսելուց առաջ վերացին կատարված սխալները:

Մի այլ, վոչ պակաս պատասխանատու ե բարդ աշխատանք, վորը զեկավարությունն ընկնում է ամբողջովին ՌԿՄ և ՄՏԿ-ների դիրեկտությանը վրա, դա բրիգադային հողամասերի վերակառուցում եւ:

Չի կարելի թագյնել վոր բրիգադների անհաջող կառուցումը՝ աշխանացանի կամպանիայի ՌԿՄ և ՄՏԿ-ի վաս ղեկավարության արդյունքն եւ Աշխանացան սկսելուց առաջ այս սխալները պետք վերացվեն, վորպեսզի նրանք չշարունակին կրկնվել նաև 1933 տարում:

Բրիգադային հողամասեր վերակառուցելու խնդրում, ղեկավար կազմակերպությունները բացառիկ ուշադրություն և հաստատակամություն պիտք ե հայտաբերեն և ապահովեն բրիգադային հողամասերի հատկացումը, վորոնք (բրիգադային հողամասերը) պատասխանատու լինեն խոշոր գյուղատնտեսական ձեռնարկության տարրական պահանջների համար: Այս խնդրում չպետք ե սահմանափակվել միայն դիրեկտիվ ցուցումներով: Վերակառուցման ամբողջ պրոցեսը, մինչն անգամ նույնիսկ սահմաններ նշանակելը և նրանց վրա սահմանացույց ձողեր տնկելը պետք ե կատարվի ՌԿՄ և ՄՏԿ-ի փորձված աշխատողների մասնակցությամբ:

Անմիջական և կենդանի ղեկավարությունը յերեան պետք ե գա նաև կոլտնտեսությունների նախապատրաստական աշխատանքում: ՌԿՄ և ՄՏԿ-ներ պարտավոր են բոլոր միջոցներով ոգնելու կոլտնտեսություններին՝ աշխատանքներ կազմակերպելու, աղբողոքակարգեր կազմելու, մեքենաներ վերանորոգելու, լծկաններ նախապատրաստելու, հասարակական սուսունդ կազմակերպելու և աշխանացանի հետ կապ ունեցող այլ կազմակերպչական և տնտեսական խնդիրներ լուծելու գործում: Կոլտնտեսային կադրերի բրիգադի համար կազմակերպությունը կոլտնտեսականների պատրաստելու, ներից, հաշվարարների և շարքային կոլտնտեսականների պատրաստելու, և նբանց աղբոտեխնիկական զրագիտությունը բարձրացնելու խնդիրը պետք ե գառնա ՌԿՄ և ՄՏԿ-ի մշտական և կարելորպույն խնդիրը ներից մեկը: Այս կազմակերպությունները վոչ միայն չպետք ե սահմանափակիւն ընդհանուր ղեկավարությամբ, այլ նաև, պլիավորապես, ոգնեն կոլտնտեսություններին վորակավորված կոլտնտեսային աշխատողներով—գյուղատնտեսներով, հաշվապահներով և այլ մասնագետներով:

Սակայն վոչ մի հարցում կոլտնտեսականներն ոգնության այնքան կարիք չեն զգում, վորքան աշխատանքի կազմակերպման և աղբո-

տեխնիկայի հարցերում։ Այս հարցերը չափազանց նոր են և կոլտնտեսականների համար գժվարամտաչիլ։ Նրանք դեռ լան չեն հասկանում այդ հարցերը։

Դժբախտարար, ուսյկոլտնտմիությունները և մեքենատրակտորային կայանները պետք յեղած չափով չեն ոգնում այս հարցերը լուծելու գործում։ Աշխատանքի կազմակերպման և աղբոտեխնիկական միջոցառումների կիրառման հարցերում, դեկավարությունը հաճախ շրջաբերականներով, կարգադրություններով, դիբեկտիմերով և վորոշումներով է կատարվում։

Կոլտնտեսականներին միմիայն դիբեկտիվներ հարկավոր չեն։ Նրանց պետք է գործնական խորհուրդ, գործնական ցուցմունք, որինակի համար, ինչպես անցկացնել գործավարձը կաթնապրանքային ֆերմում, ինչպես կազմակերպել հսկողությունը հավերի ձվաշատության վրա, թոշնաբուծական ապրանքային ֆերմում ինչպես կարելի յե լավ կազմակերպել հաշվառքը, ինչպես բարձրացնել արտադրանքի նորմաները, ինչպես պայքարել վասատունների և մոլախոտերի դեմ և այլն։ Պարզ է, վոր ցըշաբերաշկաններով չի կարելի պատասխանել այսպիսի հարցերին, վորոնք բղխում են յուրաքանչյուր կոլտնտեսության առանձնահատուկ պայմաններից։ Ուղղակի պետք ե գալ կոլտնտեսություն և պարզ ցուցմունքով կամ հաշվով, անսիջապես դաշտում կամ գոմում հանրամատչելի զրույցներ կազմակերպելով, ցույց տալ թե ինչպես անել այդ։

Վատ և այն ուսյկոլտնտմիությունը կամ մեքենատրակտորային կայանը, վորը դեռ մինչև այժմ չի ըմբռնել այս պարզ բայց կոլտնտեսականի համար կենսական պահանջը։

Խոսելով կոլտնտեսությունների առօրյա, կենդանի և կոնկրետ դեկավարության մասին, մենք նկատի չունենք այնպիսի դեկավարություն, վորը հիմնված է սոսկ վարչաբարության վրա, ամեն ըոսկեյին կոլտնտեսությանը հրամայելու, կարգադրություններ տալու վրա։ Որինակի համար, մի շաբթ ՄՏԿ. ներում գոյություն ունի այնպիսի կարգ, վոր կոլտնտեսության վարչությունն առանց ՄՏԿ դիբեկտորի, իրավունք չունի պայմաններ կնքելու, մի զույգ զրսի աշխատանքի ուղարկելու և այլն։ Մնաք անհրաժեշտ ենք համարում, վոր նման դեկավարության դեմ ամենավճառական պայքար պետք է մղվի։ Այսպիսի դեկավարությունը վնասակար է կոլտնտեսությունների և նրանց տնտեսական գործունեյթյան համար։ Զուր չե, վոր «Էնզափոխական որինականության մասին» ԽՍՀՄ հենակործկոմի և ժողկոմիության 25 ի կայացրած վորոշման մեջ պարզ անված ե. և նոր հրդային Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն առաջարկում են Խորհրդային իշխանության տեղա-

կան մարմիններին և դատախազության անխնա, խիստ պատասխանատվության յենթարկել այն բոլոր պաշտօնատար անձնավորություններին, վորոնք հանցավոր են կոլտնտեսային շինարարության հիմնական սկզբունքները խախտելու մեջ։

ա) Կոլտնտեսությունների վարչությունների և այլն որգանների ընտրվածությունը խախտելու մեջ։

բ) Կոլտնտեսությունների կայքը, դրամական միջոցները և նրանց ոգտագործմանը տրամադրված հողերը կամայականորեն տնուրինելու մեջ։

գ) Կոլտնտեսությունների վերաբերյալ հրամայական անթույլագրելի միջոցներ գործադրելու մեջ (մանավանդ կոլտնտեսությունների քմահաճ վերակառուցումը, նրանց փոքրացումը և այլն)։

Այս կարևորագույն վորոշումը պարզ կերպով ասում ե, վոր կոլտնտեսությունների վերաբերմաք հրամայողական գիրք բռնելը չի թույլատրվում, ում կողմից ել վոր լինի։ ՈՒԿՄ և ՄՏԿ-ները միանգամայն ընդմիշտ պետք ե հրաժարվեն վարչական մեթոտներով զեկավարելուց, չմոռանալով, վոր կոլտնտեսությունը սոցիալիստական տիպի անկախ տնտեսական կազմակերպություն ե և վոր նրան գործնական ոգնություն ե պետք՝ իր տնտեսությունը կառուցելու համար և վոչ թե ամեն բռնելին հրամայել։

Կոլտնտեսություններին գործնական ոգնություն ցույց տալով, ՈՒԿՄ և ՄՏԿ-ները չպետք ե մոռանան, վոր կոլտնտեսությունները զանազան խնդիրներում դեռ բավականաչափ փորձված չեն և միշտ չեն կարող պետքին պես պաշտպանել իրենց շահերը։ Հետևանքն այն ե լինում, վոր կոլտնտեսությունները յերբեմն ստիպված են կնքելու իրենց համար վոչ ձեռնուու պայմանագրեր, վճռելու իրենց չպատկանող գումարներ և այլն։

Կոլտնտեսային դեկավարության պարտականությունն ե վճռականարված տալ այն կազմակերպություններին, վորոնք կոլտնտեսություններին ապրինի և նրանց համար վոչ ձեռնուու պահանջներ են ներկայացնում։ Ուայկոլտնտմիությունները և մեքենատրակտորային կայանները դատական մարմինների և դատախազության հետ ձեռք-ձեռքի տված, միշտ պետք ե պաշտպանեն կոլտնտեսությունների շահերը, ոգնություն ցույց տալով նրանց՝ կոլեկտիվ տնտեսության վերակառուցման և ամրացման գործում։

Այս խնդիրը չափազանց խոշոր և պատասխանատու խնդիր ե. Ուայկոլտնտմիությունները և մեքենատրակտորային կայանները միայն դեպքում կղանան կոլտնտեսային շինարարության խական դեկավարողները, յերբ կղարողանան կատարել այս խնդիրը։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զի կարելի չմտանանցել այն հսկայական դժվարությունները, վորոնք կանգնելու յեն կողանտեսությունների առաջ՝ թե ցանքսի նախապատրաստության և թե մանավանդ ցանքսի և աշխանավարի ժամանակը։ Այս դժվարություններից ամենահիմնականներն առաջ են գալիս լըծկանի պակասությունից, աշխատանքների շատանալուց, ինչպես նաև աշխատանքի, գործավարձի և հաշվառքի կազմակերպման դեռ վոչ բավականաչափ պարզ և կանոնավոր լինելուց։ Կասկած չկա, վոր ամենակարելոր և պատասխանատու խնդիրը—զա աշխատանքի ճիշտ կազմակերպումն է, վորի վրա տեղական, կուսակցական, խորհրդային և կողանահային կազմակերպություններն ամենալուրջ ուշադրություն պետք է դարձնեն, վորպեսզի հնարավոր լինի հաջողությամբ անցկացնել աշխատանացանը և աշխանավարը։ Սա հատկապես վերաբերում է ցանքսի նախապատրաստության, այսինքն, հասկավոր և վաղահամ շարքահերկ բույսերի բերքահավաքի ժամանակաշրջանին։ Յեթե այս ժամանակաշրջանում բերքահավաքի, աշխանավարի և ցանքսի նախապատրաստության համար նախատեսված ուժերի և միջոցների ոգտագործման վերաբերյալ կարելոր աշխատանքները ճիշտ չդասավորվեն, ապա հետագայում զգալիորեն դժվար կլինի սիսակները ուղղել:

Բացի զրանից, յանքսի նախապատրաստվելու ժամանակաշրջանում, ամեն մի կոլտնտեսություն ուշիւուշով պետք է մշակի հետեւյալ հարցերը:

Բը իդապային հողամասի մեծության և տեղի վորոշելը հաջորդաբարված է:

Աշնանացանի և աշնանավարի քանակի վերաբերյալ ըրեգաղին արտադրական առաջադրանք տալը, այս աշխատանքների աեղի վորոշելն այն հաշվով, վոր հետեւյալ աշխատանքները, ինչպիսին հստակած բույսերի բերքավաքը, աշնանացանը, ըրեգաղը կատարի հենց միենույն հոդամասում:

Արտադրական ըրիգագներ կաղմակերպելու և նրանց լծկան և ինվենտար ամրացնելու ժամանակ կատարված սխալների ուղղումը:

Արտադրության և աշխատանքի կազմակերպության այս կարևոր հարցերը կոլտնտեսություններում սովորաբար ուշադրության ելին առնվում ձմեռվա ժամանակ։ Սակայն շատ պարզ է, վոր առանց այս հարցերը լուծելու, չի կարելի հաջող անցկացնել աշնանային աշխատանքները և չի կարելի արտադրության ճիշտ կազմակերպման սկիզբը դնել հաջորդ արդում։

Զպետք և մուանալ նաև, վոր դասակարգային թշնամու—կուլտկի մացորդները և կունանակները թյան ներսում գտնվող նրա գործակալ-

Ները—կորպիչները, սիմուլյանտները և ծուլիքն անընդհանատ շարունակում են վիժեցնել աշխատանքները։ Բերքահավաքի, մանավանդ կոլտնտեսականներին կանխավճարներ տալու ժամանակ, այս տականքը փորձում է ոգտագործել վոչ միայն սխալները, այլ նաև նեղ մոմենտները, դժվարությունները, վորպեսզի հետ կանգնեցնի, մանավանդ կոլտնտեսականների հիտամնաց մասին՝ կուսակցության և կառավարության կարևորագույն միջոցառումները կատարելուց։ Այս վտանգը չեն տեսնում միայն աջ և «Ճախ» ոսլորտունիստները, վորոնց դեմքվող պայքարը վոչ մի ըստե չպետք ե դադարեցնել և թուլացնել։



Отв. редактор
А. Г. Авакьян
Техн. редактор
Г. М. Маркарьян

2645
AC-56

Сдано в наб. 27.VII.1932 г.
Сдано в печ. 7.VIII.1932 г.
Об'ем 5¹ + печ. листа
Тираж 2000 экз.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշնանացանի կամպանիայի նշանակությունն ու խնդիրները	1
Հացահատիկային խորհուտեսությունները — բերքատվու-	
թյան առաջամարտիկներ	6
ՄՏԿ. ների գերը աշնանացանի կամպանիայում	8
Կուսակցական և խորհրդային կազմակերպությունների գերը	11
Մասսայական աշխատանքների նշանակությունը	13
Սոցմրցում և հարվածայնություն	15
Ցանքափոխության կազմակերպումը կոլտնտեսություններում	17
Արտադրության պլանավորումը	24
Ինչպես դասավորել կոլտնտեսականներին, ագրոպլան-կար-	
գագրերը կատարելու համար	29
Ագրոտեխնիկական միջոցառությունները աշնանացանի կամպա-	
նիայի ժամանակ	34
Լծկանի և ինվենտարի նախապատրաստությունը աշնանա-	
ցանի համար	40
Կաղղերի պատրաստությունը	44
Կոլտնտեսային բրիգադը վճռում և ցանքսի հաջողությունները .	47
Բրիգադի սպասարկումը դաշտում	
Դաշտային աշխատանքի ղեկավարության համար պատաս-	
խանատու յե բրիգադիրը	58
Գործափարձը կոլտնտեսություններում	61
Աշխատանքի հաշվառումը և կատարված աշխատանքների	
ընդունումը	69
Ցանքսի նախապատրաստության ստուգատեսը	73
Ռայկոլտնտմիությունների և մեքենատրակտորային կայան-	
ների ղեկավարությունը կոլտնտեսություններում աշ-	
նանացանի կամպանիայի ժամանակ	77
Ցեղակացություն	82



«Ազգային գրադարան



NL0288393

17037

323·92

87

1801
9/11 V



На армянском языке

Залевский, Фирсов

ЗАДАЧИ ОСЕНЕЙ ПОСЕВНОЙ
КАМПАНИИ 1932 г.

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԱԼԱՏՎԱԿ-ԴՈՒ, ԽՈԽՈՎԵՑՄ ՓՈԼ, 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ ԿԵԿՊԵՆՏՐ